



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՌԱՅԱՅԵԼ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱԿ

ԵՐԿԱՆ «ՀԱՅՈՒՍՏԱՆ» 1992

Գիրքը հրատարակվում է
ԱՅԲ-ԲԵՆ-ԳԻՄ բարեգործական
միության հովանավորությամբ:

Համբարձույան Ռ. Հ.

Հ 205 Հայկական տոմար: Եր., «Հայաստան» 1992 թ., 102 էջ, Գկ.:

Հայոց տոմարը համաշխարհային տոմարակարգում ուրույն տեղ ունի: Սույն գրքույկը տոմարի զարգացման կարևոր փաստերին զուգակից՝ պատանի ընթերցողին ծանոթացնում է հայկական տոմարի ծագման ակունքներին և նրա զարգացման փուլերին:

500000000
Հ 709 (01) — 91 Հայտարարված

ԳՄԴ 22—61

ISBN 5—8079—0298—X

© Համբարձույան Ռ. Հ., 1992

Մ Ո Ւ Տ Ք

Տոմար է կոչվում այն գիտությունը, որը զբաղվում է ժամանակը չափելու և դրա հետ կապված հարցերի ուսումնասիրությամբ: Այն հիմնված է օրվա, ամսվա, տարվա, մի խոսքով՝ ժամանակի տևողության չափումների ու աստղագիտական հաշվարկների վրա:

Մարդիկ ժամանակը չափելու կարիքն առանձնապես զգացել են այն ժամանակներից, երբ սկսել են զբաղվել անասնապահությամբ, հողագործությամբ և տնտեսությամբ: Ժամանակը չափելու ամենաբնական ու պարզունակ միջոցը գիշերվա ու ցերեկվա հաջորդության գիտակցությունն է եղել: Զարգացման ավելի բարձր աստիճաններում մարդիկ սկսել են ժամանակը չափել Արեգակի, Լուսնի և աստղերի շարժումներով, ժամանակը բաժանել շաբաթների, ամիսների ու տարիների: Այսպես ստեղծվել է օրացույցը: Օրացույցն, այսպիսով, տարին հաշվելու համակարգ է. արձանագրում է գիշերվա, ցերեկվա, ամիսների ու բնության այլ պարբերական երևույթների հերթափոխությունն ու հաջորդությունը:

Հնուց ի վեր օրացույցը պարունակել է տարվա օրերի, ամիսների, եղանակների ու շաբաթների ցուցակը, կարգավորել ժողովուրդների հասարակական-քաղաքական, կրոնական, ազգագրական ու բարոյական կյանքը, խթանել աստղագիտության զարգացմանը, նպաստել ժամանակը չափելու ավելի կատարյալ ուղիներ որոնելուն:

Քանի որ շաբաթները, ամիսները, տարիները և ժամանակի այլ միավորները կապված են Երկրագնդի, Արեգակի, Լուսնի, մոլորակների ու աստղերի շարժման հետ, ուստի թե՛ հնում և թե՛ այսօր տոմարագիտության հիմքերից մեկը աստղագիտությունն է:

Մեզ հասած բազմաթիվ աղբյուրների վկայությամբ, տոմարագիտությունը և դրան առնչվող աստղագիտությունը զարգացման որոշակի աստիճանի էին հասել մ. թ. ա. 4-րդ հազարամյակում: Արդեն մ. թ. ա. 3-րդ հազ. սկզբին Փոքր Ասիայում և Հայաստանում երկնային ոլորտը բաժանել էին համաստեղությունների: Ամենավաղ ժամանակներից սկսած՝ եգիպտացիները Սիրիոս աստղի միջոցով որոշում էին Նեղոս գետի հորդացման պարբերականությունը:

Հին աշխարհի աստղագիտության ու տոմարագիտության օրրաններից մեկը Հայաստանն էր: Հայ տոմարագետները հնուց ի վեր կարևոր նպաստ են բերել համաշխարհային տոմարագիտության զարգացմանը: Տոմարն ու օրացույցը այնպես էին մտել ժողովրդի կենցաղ, որ հասարակ շինականն ու արհեստավորը կարողանում էին բախակահին թարդ հաշվումներ կատարել: Սա նշանակում է՝ տոմարն ու օրացույցը հայ ժողովրդի մեջ ամուր արմատներ էին գցել:

Այս գրքի գրույցներից յուրաքանչյուրը նվիրված է մեր տոմարի ամիսներից մեկին: Ամեն մի գրույցի մեջ, համաշխարհային տոմարի զարգացման կարևոր փաստերին զուգակից, տեղեկություններ կտանք մեր տոմարի տարբեր հարցերի մասին, կծանոթացնենք խոշորագույն տոմարագետների կյանքին ու գործունեությանը, կանդրադառնանք հայոց հնագույն տոմարի տոներից, այդ տոների հետ կապված որոշ ծեսերի, հեթանոսական աստվածություններից, մեր հին դիցաբանությանն ու ազգագրությանը:

ԼՄԼՆՈՐ

Հնում տարբեր ժողովուրդներ նոր տարին տարբեր ժամանակ են նշել: Օրինակ, եգիպտացիների նոր տարին այսօրվա տոմարով օգոստոսի 29-ին էր, պարսիկներինը՝ մարտի 21-ին, չինացիներինը՝ փետրվարի 6-ին, հռոմեացիներինը՝ մարտի 1-ին և այլն:

Հին հայերի նոր տարին նավասարդի մեկն էր, որը համապատասխանում է այսօրվա տոմարի օգոստոսի 11-ին: Մեր նախնիները նոր տարուն ԱՄԱՆԱՐ են ասել: Ամանորը կազմված է հայերեն ԱՄ (տարի) և ՆՈՐ բառերից: Ամանորն այնպիսի կարևորություն ուներ մեզանում, որ նրան նվիրված է եղել հատուկ աստվածություն: Ըստ մ. թ. չորրորդ դարի մեր պատմիչ Ագաթանգեղոսի հավաստի վկայության, «Ամանորի ամենաբեր նոր պտուղների աստվածը հյուրընկալ Վանատուրն էր»՝ այգեգործության, պտղաբերության ու բերքի հովանավորը:

Վանատուրը բնիկ հայերեն բառ է. նշանակում է՝ օթևան տվող, հյուրընկալ: Նրա գլխավոր մեծիանը գտնվում էր Բագրևանդ գավառի Նպատ լեռան ստորոտին կառուցված Բագավան քաղաքում, որը կոչվում էր նաև Դիցավան, այսինքն՝ աստվածների ավան:

Վանատուրի՝ հյուրընկալության աստված լինելու մասին ուղղակի վկայություն ունի նաև քերթողահայր Մովսես Խորենացին: Նա իր «Պատմություն հայոց» աշխատության երկրորդ գլխի ԿԶ հատվածում գրում է. «Հայոց թագավոր Տիգրան վերջինը պատվել էր իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագավանում, Բագրևանդ գավառում, գերեզմանի վրա բազին շինելով, որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրեր ընդունվեն զիշերելու համար»: Որոշակի անձի կողմից հյուրանոց կառուցելու մասին քերթողահորը այս տեղեկությունը համաշխարհային պատմագիտության հնագույն փաստերից է:

Հայ մատենագրության մեջ եղած տեղեկություններից իմանում ենք նաև, որ Վանատուրը միաժամանակ հայոց գերագույն աստված Արամազդի մականունն էր:

Վանատուրին և Ամանորին նվիրված ամենամյա բերքի տոնը սկսվել է նավասարդի մեկին՝ Ամանորին, և շարունակվել մինչև նավասարդի վեցը: Այդ տոները կոչվում էին «նավասարդյան տոներ», որոնց բնույթին կծանոթանանք հաջորդ գրույցի մեջ:

Նավասարդի մեկին հայոց թագավորի գլխավորությամբ Վանատուրի տաճարի սրբապայրում ամեն տարի զումարվում էին նախարարների, բարձրաստիճան քրմերի, ազառների, գյուղական ավագների ու շինական-

ների ավանդական «աշխարհաժողովները»: Այս աշխարհաժողովների մասին հնագույն հիշատակությունը գտնում ենք մ. թ. առաջին դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլաբիոսի աշխատություններում:

Պատմագիտական աղբյուրներից հայտնի է, որ աշխարհաժողովը համահայկական հավաք էր, որտեղ քննարկվում էին պետական ու ազգային կարևոր հարցեր, ընդունվում էին օրենքներ ու կանոններ: Պատահական չէ, որ «աշխարհաժողովները» գումարվում էին Վանատուրի սրբավայրում: Հրավիրյալները հյուրեր էին, ուստի նրանց ժողովատեղին ընտրված էր հենց Վանատուրի տաճարում, որտեղ այդ առիթով կատարվում էին տոնախմբություններ և զանազան թատերական ներկայացումներ:

Քրիստոնեական շրջանում աշխարհաժողովները մեծ մասամբ գումարվում էին հայոց թագավորների բնակատեղեղում՝ Շահապիվանում և Վաղարշապատում:

Գիտնականները պարզել են, որ Վանատուրն ու Ամանորը առանձին աստվածներ չէին: Ղ. Ալիշանի կարծիքով, Վանատուրն ու Ամանորը լատինացիների այգեգործության հովանավոր Վարտումնոս և Պոմոնա ամուսին աստվածների նման նույնպես ամուսիններ էին:

Ըստ պատմագիտական ու ազգագրական բազմաթիվ տվյալների, Վանատուրի ու Ամանորի պաշտամունքի հետքերը ժողովրդի մեջ գոյատևել են մինչև մեր դարի սկիզբները: Օրինակ՝ ազգագրագետ Վարդ Բոլոյանի կարծիքով, Վանատուրի և Ամանորի պաշտամունքի ծիսական տարրերը պահպանվել են Նուրիհ-Պուրպատիկների ու «երկթե մարդ» կոչվող տիկնիկատիպ էակների մեջ: Հայկական ժողովրդական երգերում իգական նուրիհների զգեստը նկարագրվել է «շալե-շապիկ, կարմիր գոտիկ» խոսքերով, իսկ արական Նուրիհներինը՝ «շալե (բրոյա) շապիկ, կեմե (խոտից հյուսած) գոտիկ» բառերով: Նուրիհներն ու պուրպատիկները փաստորեն հենց Վանատուր և Ամանոր ամուսին — աստվածությունների ձևափոխված անուններն են, որ ժողովուրդը պահել էր մինչև մեր դարի կեսերը: Նուրիհները ցախավելից սարքած խրտվիլակներ էին կամ մեծ չափի տիկնիկներ: Գլուղացի կանայք հաճախ ընտրում էին մի աղջնակ, մաղը կործում գլխին, սպիտակ սավանով ոտքից գլուխ ծածկում էին՝ նրան դարձնելով կենդանի նուրիհ: Վանանց թափորը նուրիհներին առաջներն առած, իսկ ցախավելից պատրաստած լինելու դեպքում՝ ցախավել-նուրիհներին ձեռքերով գլխներից վեր պարզած, գլուղացիների դռներից անցնելով, մթերքներ և չարագեղեն էին հավաքում: Իսկ երաշտի ժամանակ, նուրիհները ձեռներին, զանազան ծիսական աղոթքներ ու երգեր ասելով, թմբուկ խփում, աստծուց անձրև էին խնդրում:

Մենք արդեն գիտենք, որ հնում տարբեր ժողովուրդներ ամանորը տարբեր ժամանակ էին տոնում: Այսինքն՝ միասնական նոր տարի չի եղել: Դա այդպես էլ պիտի լիներ, որովհետև հին աշխարհի պետությունների միջև առևտրա-տնտեսական, մշակութային ու գիտական կապերն այսօրվա համեմատ շատ ավելի թույլ են եղել: Ամեն մի ժողովուրդ պարփակված էր իր կենցաղի, սովորույթների ու հավատալիքների մեջ: Ուստի, նայած երկրի աշխարհագրական դիրքին, հավատալիքներին ու ապրելակերպին, նոր տարին տարբեր ժամանակ է տոնվել: Ամանորը առաջին անգամ հունվարի 1-ից սկսել են հռոմեացիները՝ Հուլիոս Կեսարի օրոք՝ մ. թ. ա. 46 թվին*: Հուլիոս Կեսարի հրամանով կազմված այդ նոր տոմարը նրա անունով էլ կոչվում է հուլյան տոմար, և աշխարհի շատ ժողովուրդների ծանայել է մինչև 18—19-րդ դարերը: Պատմական որոշ տեղեկություններ գիտնականներին թույլ են տվել ենթադրելու, որ հայերը հուլյան տոմարին ծանոթ էին դեռևս Հուլիոս Կեսարի ժամանակներից: Իսկ ավելի հավաստի տվյալներով, հայերը սահմանափակ ձևով (արքունիքում և քրմերի շրջանում) հուլյան տոմարը պաշտոնապես ընդունել են մ. թ. 122 թ.: Բայց քրիստոնեական Հայաստանը հուլյան տոմարին անցնելու մասին պաշտոնական որոշում կայացրեց միայն 1317 թ., Ադանայի եկեղեցական ժողովում: Սակայն այդ տոմարը շատ նեղ շրջանակներում է գործածվել, իսկ գործածվելիս էլ՝ անաբայման հայոց տոմարի զուգադրությամբ:

Հուլյան տոմարի տարին ուներ ոչ թե 365 օր 5 ժամ, 48 րոպե 46 վայրկյան, այլ 365 օր, 6 ժամ: Այսինքն՝ ճշգրիտ հաշվումներով որոշված տարուց 11 րոպե 14 վայրկյանով երկար էր: Անճշտությունը վերացնելու նպատակով Հռոմի Գրիգոր 13-րդ պապը (XVI դար) Եվրոպայի նշանավոր տոմարագետներին հրավիրում է Հռոմ, որպեսզի մշակեն նոր տոմար: Բազմաթիվ նախագծերից ընդունվում է իտալացի բժիշկ և աստղագետ Ալիսսե Լիլիոյի նախագիծը, որը սկսվում է կիրառվել 1582 թ. հոկտեմբերի 15-ից: Քանի որ հուլյան տոմարի 11 րոպե 14 վայրկյանի սխալը մ. թ. ա. 46 թ. մինչև 1582 թիվը կուտակվել դարձել էր 10 օր, այսինքն՝ ժամանակը 10 օր ետ էր ընկել, ուստի սխալը ուղղելու համար որոշվեց 1582 թ. հոկտեմբերի 4-ից հետո ոչ թե հոկտեմբերի 5 ընդունել, այլ՝ հոկտեմբերի 15:

* Գիտնականների մեծ մասի կարծիքով, հռոմեացիք նոր տարին հունվարի մեկից են սկսել ավելի վաղ՝ մ. թ. ա. VII դարում՝ Նոմա Պոմպիլիոս կայսեր հրամանով:

Այսպես սկսվեց նոր տոմարը, որը Հռոմի Գրիգոր պապի անունով կոչվեց «Գրիգորյան»: Հայերը աշխարհի առաջին ժողովուրդներից էին, որ թեև խիստ սահմանափակ, բայց գործածեցին գրիգորյան տոմարը: Հայ իրականության մեջ նոր տոմարի առաջինը իտալահայերն անցան (1584 թ.), ապա՝ Ամստերդամի (XVII դ.) հայոց գաղթավայրի կաթոլիկները, հետագայում՝ պոլսահայ կաթոլիկները, իսկ 1783 թվականից՝ նաև լեհահայերը:

Գրիգորյան տոմարը, մոտ 340 տարվա ընթացքում, ընդունեցին աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները: Վերջինն ընդունեց Եգիպտոսը (1928 թ.), իսկ Ռուսաստանը նոր տոմարին անցավ 1918 թ. հունվարի 1-ին: Քանի որ 1582 թ. մինչև 1918 թ., այսինքն՝ 336 տարում վերոհիշյալ 11 րոպե 14 վայրկյանը կուտակվել-դարձել էր 3 օր, ուստի այդ երկրում նոր տոմարը հինից երկար էր ոչ թե 10, այլ 13 օրով: Այստեղից էլ հին տոմարի 13 օրվա տարբերությունը:

Ստորև բերված ժամանակագրությունը ցույց է տալիս, թե աշխարհի երկրներից ու ժողովուրդներից որը երբ է ընդունել նոր տոմարը:

| | |
|-----------------------|---|
| 1582 թ. հոկտեմբերի 15 | — Իտալիա, Իսպանիա և Պորտուգալիա |
| 1582 թ. դեկտեմբերի 20 | — Ֆրանսիա |
| 1583 թ. հունվարի 1 | — Հոլանդիա |
| 1583 թ. հունվարի 16 | — Բավարիա |
| 1584 թ. հունվարի 1 | — Իտալիայի հայկական կաթոլիկ գաղթօջախը |
| 1584 թ. հունվարի 17 | — Գերմանիայի կաթոլիկ համայնքը |
| 1587 թ. հունվարի 1 | — Լեհաստան |
| 1587 թ. նոյեմբերի 1 | — Հունգարիա |
| 1610 թ. սեպտեմբերի 2 | — Պրուսիա |
| 1668 թ. հունվարի 1 | — Ամստերդամի հայոց գաղութի կաթոլիկ համայնքը |
| 1697 թ. հունվարի 1 | — Պոլսի հայոց գաղութի կաթոլիկ համայնքը |
| 1700 թ. մարտի 1 | — Դանիան և Գերմանիայի բողոքական հատվածը |
| 1752 թ. սեպտեմբերի 14 | — Անգլիա |
| 1753 թ. մարտի 1 | — Շվեդիա |
| 1783 թ. հունվարի 1 | — Լեհահայ գաղութը |
| 1873 թ. հունվարի 1 | — Ճապոնիա |
| 1911 թ. նոյեմբերի 20 | — Չինաստան |
| 1914 թ. հունվարի 1 | — Վենետիկի հայոց մխիթարյան միաբանությունը |
| 1918 թ. հունվարի 1 | — Ռուսաստան |
| 1919 թ. փետրվարի 1 | — Սերբիա |
| 1920 թ. դեկտեմբերի 2 | — Խորհրդային Հայաստան |
| 1923 թ. մարտի 20 | — Հունաստան |
| 1927 թ. հունվարի 1 | — Թուրքիա |
| 1928 թ. հոկտեմբերի 1 | — Եգիպտոս |



ՆԿԼՍԸՐԴ

Հայոց տոմարի առաջին ամիսն է, հերթականությամբ համապատասխանում է հուլյան տոմարի հունվարին: Նավասարդ բառը կազմված է նավա (նոր) և սարդ (տարի) բառերից և նշանակում է նոր տարի, ամանոր: Հայոց անջարժ տոմարով նավասարդը տևել է օգոստոսի 11-ից սեպտեմբերի 9-ը: Այդ ամսանվան ծագման մասին Անանիա Շիրակացին (VII դ.), Հովհաննես Իմաստասերը (1045—1129) և այլ խոշոր գիտնականներ ավանդում են, որ Նավասարդը Հայկ Նահապետի դուստրերից մեկի անունն էր, որով մեր նախահայրը անվանել էր տարվա առաջին ամիսը: Ամանորի հենց հաջորդ օրը հին հայերը տոնում էին իրենց ամենաշքեղ ու ամենակարևոր տոնը: Այն նվիրված էր հայոց աստվածների հայր Արամազդին և կոչվում էր «Նավասարդյան տոներ»: Այդ տոնը տարբեր ժամանակներում նվիրված է եղել տարբեր աստվածների: Մոտավորապես մ. թ. ա. III հազարամյակում, Նավասարդյան տոները նվիրված են եղել Հայկ նահապետին: Քանի որ Հայկը հայոց առաջին հզոր թագավորն էր, նրա անունով Հայաստանի բնակիչները կոչվեցին հայեր, իսկ երկիրը՝ Հայք կամ Հայաստան: Հայկը նաև ժամանակի, չափի և տոմարի սահմանողն ու տնօրինողն էր, կամ օտար հորջորջմամբ՝ ժամանակի աստվածը:

Հայտնի է, որ Արամազդը ևս համարվել է ժամանակի որդին: Սա կնշանակի Արամազդի՝ ժամանակի որդին լինելու հանգամանքը իր մեջ կրում է նաև նրա՝ Հայկի հաջորդը լինելու վերհուշը: Արամազդի գերբնական հզորության և երկնային էության խորհրդանշաններից մեկը ծիածանն էր՝ նրա գոտին: Արամազդին մեծարում էին հետևյալ խոսքերով. «Մեծն արին Արամազդ, արարիչ երկնի և երկրի, լիության պարարտության, արարիչ աստվածների, ամպրոպային պատկերն Արամազդի»:

Ինչպես ասվեց, Արամազդն ունեցել է նաև «Հյուրընկալ» տիտղոսը: Փսկ սա՝ որտեղից է գալիս:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով Արամազդից առաջ հայոց գերագույն աստվածը եղել է Վանատուրը: Բայց մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերից սկսած, Աքեմենյան Պարսկաստանի և Հունաստանի հետ առևտրատնտեսական ու քաղաքական կապերի ազդեցությամբ, Հայկին փոխարինած Վանատուրը զուգադրվեց պահլավա-պարսկական և հունական դիցարանների գերագույն աստվածներ Ահուրամազդային ու Զևսին և նավասարդի 2-րդ տոնը նվիրվեց Արամազդին՝ երկրի ու երկնքի արարչին: (Արամազդը հիշեցնում էր նաև հռոմեական Յուպիտերին ու հնդկական Ինդրային): Այսպիսով՝ Արամազդ աստվածության գերիշխանության հետևանքով, Վանատուրը կորցրեց իր երբեմնի տիտղոսը, պահեց միայն հյուրընկալ աստվածության հատկանիշը: Իսկ Արամազդն էլ պահեց Վանատուրի հյուրընկալության տիտղոսը: Ահա թե ինչու Արամազդի տաճարներին կից եղել են իջևանատուն-հյուրանոցներ՝ հեռավոր վայրերից եկած ուխտավորների համար:

Արամազդի տաճարին կից հյուրատներ կառուցելու սովորությունը ժողովուրդը պահեց նաև քրիստոնեության մուտքից հետո: Մինչև մեր դարի սկզբները առանձին նշանավոր ուխտատեղերն ու տաճարները ունեին իջևանատուն-հյուրանոցներ: Իհարկե, պատահական չէր, որ հայոց թագավորների գլխավորությամբ գումարվող աշխարհածողովները փոխանակ տեղի ունենային Արամազդի տաճարում, կատարվում էին Վանատուրի սրբավայրում: Սա այն պատճառով, որ Հյուրընկալ Վանատուրը Հայկից հետո և Արամազդից առաջ եղել է մեր գերագույն աստվածը: Բայց հետագայում, երբ Արամազդը փոխարինել է Վանատուրին, ավանդությունը չի խախտվել. հյուրատներ կառուցվել են Արամազդի տաճարներում, բայց աշխարհածողովները շարունակվել են Վանատուրի գլխավոր սրբավայրում:

Արամազդի գլխավոր մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Դարանաղ-

յաց գավառի Հանի կամ Աճի քաղաքում*: Աղբյուրներում Արամազդի մի ուրիշ մեհյան էլ հիշատակվում է Վասպուրականի Աճնացյաց գավառի մեջ, Պաղատ լեռան վրա: Այս բազինը կոչվել է «Տուն Արամազդի և Վատղիկի»: Հետաքրքիր է, որ այս տաճարի վայրում կամ մոտերքում կառուցված Բուֆֆի (Փուֆֆու) ս. Գրիգոր եկեղեցում մի աքաղաղ էին պահում, որը ձմեռ ժամանակ գուշակում էր ճամփորդների հաջողությունը: Այստեղ ևս մենք տեսնում ենք հեթանոսական հավատալիքների ուղղակի անցումը քրիստոնեությանը:

Քանի որ «Նավասարդյան տոները» առանց ընդմիջման հաջորդում էին Ամանորին և շարունակվում էին մինչև նավասարդի 6-ը, ուստի Վանատուրի ու Արամազդի տոները ձուլվեցին իրար և միասին կոչվեցին «Նավասարդյան տոներ»: Այսինքն՝ Արամազդը տոների առումով ևս ներառեց Վանատուրի պաշտամունքի որոշ տարրեր: Ուստի Արամազդն էլ է հաճախ անվանվել «Հյուրընկալ»:

Նավասարդյան տոները ուղեկցվել են երգ-երաժշտությամբ, պարերով, թատերական ու կրկեսային ներկայացումներով, ցուցքերով, զինախաղերով ու մարզական մրցումներով: Այդ մրցումները կոչվում էին «Նավասարդյան խաղեր» և փաստորեն համահայկական լինելով, հիշեցրել են հույների գերագույն աստված Զևսին նվիրված օլիմպիական խաղերը, որոնց հիմնադիրը հույն ժողովրդի հերոս Հերակլեսն էր:

Ինչպես հեթանոսական բազմաթիվ այլ ծեսեր, ժողովուրդը մինչև վերջերս պահել էր նաև նավասարդյան տոները օգոստոսին կատարելու հիմնավոր սովորությունը: Նավասարդյան տոները մինչև մեր դարի 30—40-ական թվականները պահպանվել էին Սյունիքում, Շահապոնքում (ներկայիս Նախիջևանի ԻԽՍՀ-ի Շահբուզի շրջան), Արցախում, Պարսկահայքում, Վայոց ձորում և այլուր:

Նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանը գրում է, որ Վարանդայում նավասարդյան տոներին, շատերն ի նշան ուրախության, ծառերի վրա կարմիր շորեր էին ձգում և կարմիր թելով ճյուղերը կապտում, որոնք անմիջական աղերս ունեին վանատուրյան նվիրական կարմիր գույնին (շիլա շապիկ, կարմիր գոտիկ):

Սյունիքում այդ տոնին գիշերը գոմերը մաքրում էին և անասունների տակ գարի փռում, պոչերին կարմիր թել կապում, որպեսզի տարին առատ ու կարմիր օրերով լեցուն լիներ:

* Դարանաղյաց Աճին չպիտի շփոթել Բագրատունյաց հայկական թագավորության հռչակավոր մայրաքաղաքի հետ, որի ավերակները գտնվում են Ախուրյանի աջ ափին, Աճի երկաթուղային կայարանից 7 կմ հեռավորությամբ:

Նավասարդյան տոնը Պարսկահայքի Սալմաստ գավառում, Աշտարակում և Շահապոնքում անվանել են «Խլվիկի տոն»: Խլվիկ էր կոչվում 8—12 տարեկան երեխաների այն խումբը, որը նավասարդ-խլվիկի տոնին գյուղացիների երդիկներից թելով գուպա կախելով, փոխված ձայնով չիր, չամիչ, փշատ, գաթա և այլ ուտելիքներ էր պահանջում: Տանտիկի-նը և հարսները երդիկից իրենց թուրսու վրա կախված գուպաները զվարճալի կատակների ուղեկցությամբ լցնում էին զանազան բարիքներ, որպեսզի օձիքներն ազատեին չարածնի երեխաներից:

Պարսկահայքի Խոյ քաղաքից 1820-ական թթ. Շահապոնքի Նորս գյուղի գաղթածների սերունդները, մինչև 1950-ական թվականները այդ արարողությունը կատարել են Տերենտեսի (տրենդեզ) տոնին, փետրվարի 13-ին: Երեխաները երդիկներից գուպաները կախելով, ասերգում էին.

Ալկե մարեմ, մարեմ, մարեմ,
Ծեր /ծեր/ տղայի /կամ/ խարսի, այսինքն՝ հարսի/
սուերը /կոշիկները/ կարեմ,
Չամիչ տվեք ատամներս շարեմ,
Գյոզ (պոպոկ) տվեք՝ փորս լարեմ,
Շաքար տվեք՝ սիրտս ուզելի (սիրտս ուզում է),
Կորկոտ տվեք՝ փորս լցնեմ:
Քյոխվա, տանուտեր, մի խնայի,
Աստված ծեր (ծեր) խարս ու փեսին պախի (պահի):

Կամ.

Մարեմ, մարեմ
Ծեր խարսի շորերը կարեմ,
Չամիչ տվեք՝ աչքերը դնեմ,
Փշատ տվեք՝ ատամները շարեմ,
Գյոզ տվեք՝ գլուխը ջարդեմ:

• • •

Ասացինք Նավասարդյան տոներին գուսանները երգում-պարում էին զանազան երգեր ու պարեր: Հետաքրքիր է, այդ երգերից ինչ-որ բան հասել է մեզ, թե՛ ոչ:

Պարզվում է, հասել է:

XI դարի հայ մեծ իմաստասեր, մաթեմատիկոս ու երաժշտագետ Գրիգոր Մագիստրոսի (990—1058) մի նամակում պահպանվել է այդ տոներին երգված երգերից մեկը, որը ժողովուրդը հնագույն ժամանակներից հասցրել է մինչև տասնմեկերորդ դար:

Ով պիտի տար ինձ ծովը ծխանի
Եվ առավոտը նավասարդի,
Եղնիկների վազը
Եվ եղբերուների վարգելը,
Մեք փող էինք փչում
Եվ թմբուկ զարկում,
Ինչպես օրենքն է թագավորների:

Ո տայր ինձ զծովս ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի
Զվազելն եղանց
Եւ զվարգելն եղբերուաց,
Մեք փող հարուաք
Եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց:

Նավասարդ ամսին հին հայերը տոնել են ևս մի շատ սիրված ու նշանավոր տոն, որն իր նշանակությամբ զիջել է միայն Նավասարդյան տոներին: Այդ տոնը պտղաբերության, ծննդաբերության ու մայրության աստվածուհի Անահիտի տոնն էր: Անահիտը Արամազդի դուստրն էր*, Արտաշատ մայրաքաղաքի հովանավորը, հայոց գերագույն աստվածուհին: Որոշ բանասերների կարծիքով, Անահիտ անունը ծագել է հին պարսկական Անահիտա և պահլավերեն Անահիտ (անթիծ) անուններից: Գ. Ղափանցյա-նը ենթադրում էր, թե այդ անունը ծագում է աքքադերեցից:

Մ. Աբեղյանը Անահիտ անունը կապում է ասորեստանյան Իշտար աստվածուհու Անատու մականունի հետ: Նորագույն հետազոտությունների հիման վրա այժմ ընդունված է հետևյալ տեսակետը: Անահիտի պաշտամունքը զուտ հայկական է, որը, ինչպես Արամազդը, իրանա-պահլավական ազդեցությամբ փոխարինել է հայոց հնագույն աստվածուհի Նարի պաշտամունքին՝ պահելով Նարի բոլոր հիմնական հատկությունները: Անահիտը մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերից սկսած՝ նմանություններ ուներ հունական Արտեմիս, իսկ ավելի ուշ՝ հռոմեական Դիանա աստվածուհիներին: Նրա գլխավոր տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա ավանում: Եկեղյաց գավառը Անահիտի պատվին կոչվել է նաև ԱՆԱՀ-ՏԱԿԱՆ: Այստեղ կանգնեցված է եղել Անահիտի ոսկեծուլ արձանը: Հոմերական պատմիչ Պլինիոս Ավագը (մ.թ.ա. I դ.) իր «Բնական պատմություն» աշխատության մեջ հաղորդում է, որ Անահիտի ոսկեծուլ արձանը մ.թ.ա. 34 թ. հռոմեական զորավար Անտոնիոսը հափշտակելով, մասնատել ու բաժանել է իր զինվորների մեջ:

Անահիտին նվիրված մեծյաններ կային Արտաշատ, Արմավիր, Բագարան, Անահտաձոր, Աշտիշատ և այլ քաղաքներում, Վասպուրականի Անձևացյաց գավառի Դարբնաց քար և Սյունիքի Բաղք գավառի Անտաձոր (Անահտաձոր) վայրերում, ինչպես նաև Կապարովկիայի Գամիրք գավառի՝ մի ժամանակ Հայաստանի կազմում գտնված Կոմանա քաղաքում և այլուր: Այդ տաճարներում ևս եղել են դիցուհու արձաններ: Օրինակ՝ Աշ-

* Միջնադարյան մի Հայամավուրդում Անահիտը համարվում է Արամազդի կինը:

տիշատի Անահտական տաճարի ոսկե արձանը, Ագաթանգեղոսի վկայությամբ, կոչվել է ոսկեմայր: Մովսես Խորենացին գրում է, որ Արտաշատի տաճարի Անահիտի արձանը պղնձածուլ-ոսկեզոծ էր: Ալեքսանդրիացի Կղենենս մատենագրի վկայությամբ, հայոց Արտաշես թագավորը Անահիտ տիկնոջ ոսկե արձանը կանգնեցրել էր նաև Շոշ քաղաքում:

Այժմ Լոնդոնի բրիտանական թանգարանում պահվում է Անահիտի բրոնզե գլուխը: Պեղումներից պարզվել է, որ հին Հայաստանում կտրել են նաև Անահիտի պատկերով դրամներ:

Անահիտի տոնը մեծ շուքով սկսվել է նավասարդի սկզբին (համընկնում է օգոստոսի 23-ին) և նվիրված է եղել բերքահավաքին: Դիցուհուն զոհաբերվում էր առաջին բերքը: Ըստ Ագաթանգեղոսի, ժողովուրդը դիցուհու արձանն ու բազիլը պատում էր ծառերի դալար ու թալճյուղերով ու պսակներով, նրան զոհաբերում էին սպիտակաթույր սրբազան երինջներ: Անահիտի ամեն մի մեհյան ունեցել է հարյուրավոր մշակներ ու հարճեր, որոնք պահպանում էին մեհյանի հարստությունները, զոհաբերության համար առանձնացված երինջները և այլն: Անահիտին զոհաբերվող երինջների ճակատները խարանում էին: Տոներին քրմապետը, տոնական զգեստ հագած, առաջնորդում էր քրմերին և ուխտավորներին, որոնք երգերով ու աղոթքներով դիցուհու արձանը պտտում էին մեհյանի շուրջը: Դրանից հետո սկսվում էին պարերն ու խրախճանքը:

Հայոց կանանց տոնը մեր ժողովրդին ուղեկցել է հազարամյակներ ու տարբեր անուններով հասել է մինչև մեր օրերը: Քրիստոնեության մուտքից հետո, ավելի ճիշտ՝ հենց այդ ժամանակներում, Անահիտի պաշտամունքը փոխարինվել է աստվածածնի տոնով: Այդ մասին շատ կարևոր փաստ է հաղորդում քերթողահայր Մովսես Խորենացին՝ իր «Թուրք առ Սահակայ Արծրունույ» աշխատության մեջ: Պատմահայրը գրում էր, որ Բարդուղիմեոս առաքյալը Հայաստան մտնելով, Ագոստոսի և Կանգուտի կոտորածների Անահիտի արձանները շարդուսիշուր է անում և կառուցելով քրիստոնեական մատուռ, այնտեղ գետեղում է Աստվածամոր պատկերը: Նույնն է անում նաև Գրիգոր Լուսավորիչը: Նա, տեսնելով ժողովրդի միջից անհմար է վերացնել Անահիտին նվիրված տոնը, ստիպված այն նվիրեց Մարիամ Աստվածածնին (տոնվում էր օգոստոսին): Աստվածածնի տոնը հետագայում շփոթվեց վերափոխման տոնի հետ, որը ևս տոնվում էր օգոստոսին: ժողովուրդը մինչև վերջերս էլ պահել էր Անահիտ դիցուհու տոներին նվիրված վաղնջական ծեսերն ու արարողությունները՝ իհարկե Աստվածածնի անվամբ: Բայց Անահիտի տոնին կատարվող ծառի ճյուղերի նվիրումը երկի փոխադրվել է գարնանամուտին

տոնվող ծաղկազարդի (որոշ բարբառներում՝ ծառզարդար, ուտօրհնէք*, ուտօշնէք, հոտօրհնէք) տոնի մեջ՝ հիմնականում պահելով իր հեթանոսական իմաստը: Այսպես՝ ժողովուրդը մինչև վերջերս էլ ծաղկազարդի տոնին ունենու կամ այլ վաղահաս ծառի թարմ ոտեր էր տանում եկեղեցի: Քահանան բոլորը օրհնում էր և բաժանում ներկաներին: Մարդիկ օրհնված ճյուղերը տանում էին տուն՝ հավատալով, որ եթե այդ ճյուղերը թաթախեն յուղի, պանրի ու այլ մթերքների ամանների և խնցղիների մեջ, այդ տարվա բերքը և մթերքը առատ կլինի ու չի փչանա: Այժմ էլ ծաղկազարդի տոնին հավատացյալները ունենու կամ խաղողի որթեր են տանում եկեղեցի: Ծաղկազարդի տոնը թեև կապվում է Քրիստոսի Երուսաղեմ մտնելու հետ, բայց ժողովուրդն այդ տոնը «ծաղկազարդ» կամ «ծառզարդ» է կոչում: Մ. Օրմանյանի կարծիքով, ոչ ավետարաններում, ո՛չ որևէ ժողովրդի տոնացույցում, ո՛չ էլ քրիստոնեական որևէ այլ ավանդության մեջ ծաղկի մասին ոչ մի խոսք չկա: Այս հանգամանքը նկատի առնելով՝ Օրմանյանը հետևցնում է թե ծաղկազարդ-ծառզարդարը զուտ հայկական է և ոչ մի կապ չունի քրիստոնեության հետ:

Նախասարդ ամսին հին Հայաստանում տոնում էին ևս մի շատ տարածված ու գեղեցիկ տոն՝ Վարդավաթի տոնը, որը նվիրված էր սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկին: Աստղիկը Վահագն Վիշապաքաղի կինն էր, ուստի Աշտիշատի Աստղկան տաճարը կոչվել է նաև «Վահագնի սենյակ»: Վարդավաթի տոնը, ըստ Վահական վարդապետի, կատարվում էր Ավելյաց ամսին: Այդ տոնի ծագման վերաբերյալ որոշակի պատկերացում կարելի է կազմել Աստղիկ դիցուհու ծննդյան մասին պատմող մի ավանդությունից: Այդ ավանդությունը պահպանվել է Երուսաղեմի ս. Հակոբյանց հայոց վանքի ձեռագրատանը գտնվող մի միջնադարյան հայերեն ձեռագրում:

Հայոց գերագույն աստված Արամազդը, — նշված է այնտեղ, — կասկածելով թե իր երկվորյակը կարող էր հետագայում իրեն մրցակից դառնալ, նրան սպանում, զցում է ծովը: Թափված արյունից ծովը փոփրում է:

* Ուտօրհնէքը նույն ծառզարդարի անվանումներից մեկն է: Ընդհանրապես այդ տոնը տոնում էին գաղթիկն նախորդող կիրակի օրը: Այն գարնանամուտի ավետաբերությանն էր: Ծառզարդար-ուտօրհնէք-ուտօշնէքի մերձեցումը հին հայերը հարյուրամյակներ ու հազարամյակներ շարունակ որոշում էին ունենու օգնության: Այսպես՝ եթե ունենու ճյուղերի կեղևը դանակի կտրով մի քիչ ծեծելուց հետո պոկվում էր, ասում էին «ուղը ջուր է ընկել», այսինքն ունենու ավիշը հոսում է: Այդ ժամանակ երեխաները ունենու ճյուղերից կտրում ՊԼԿԱՆ կոչվող խաղալիք էին սարքում:

Սպիտակաթուր, փոթորկադեզ ալիքներից ծնվում է Աստղիկը: Դիցուհին ծովից դուրս է գալիս, և որտեղից որ քայլում էր, ոտքերից կաթկթացող արյունից վարդ էր բուսնում:

Մի այլ ավանդություն, որը 1860-ական թվականների վերջին գրի է առել նոր ժամանակների մեր խոշորագույն բանահավաք Գարեգին Սըրվանձտյանը, պատմում է, թե Աստղիկը Արածանիի ջրերում գիշերները լողանալու սովորություն ուներ: Հայ կտրիճները նրա մերկ գեղեցկությամբ հիանալու ցանկությամբ, լեռան լանջին կրակ են վառել, որ լուգանքի վայրը լուսավորելով, հիանան նրա գեղեցկությամբ: Դիցուհին կտրիճների մտադրությունը իմանալով, շրջապատում մշուշ է գույացրել, որով քողարկել է իր մերկությունը: Ավանդությունն այնուհետև հետևեցնում է, որ այստեղից էլ այդ վայրը կոչվեց Մշուշ-Մուշ: Այս ավանդությունների վրա հենվելով, գիտնականներից ոմանք Աստղիկին համարել են նաև ջրի աստված և Հայաստանի լեռներում հանդիպող «վիշապ» կոչվող ձկնակերպ վիթխարի կոթողները համարում են Աստղիկի արձանները (վիշապը, խաչքարի նման, միայն Հայաստանում է կերտվել): Կարծիքներ կան նաև, որ Աստղիկը ջրի, ծովի, անձրևի Ծովինար (Նար) դիցուհու դուստրն է: Քանի որ Ծովինարը, ըստ ժողովրդական հավատալիքների, կարող էր աղետաբեր կարկուտ թափել կամ կենարար անձրև պարգևել, ուստի այդ կարծիքի հետևորդները Ծովինարի հիշյալ կարողությունը զուգադրում են Աստղիկի մշուշ ստեղծելու կարողությանը և կարծում, թե Աստղիկը հայոց դիցաբանության արշալույսին կարող էր լինել Հայկի ու մեծ մայր Ծովինարի դուստրը: Քանի որ այդ դիցուհուն հին հայերը անվանել են «Վարդածղի-վարդամատն Աստղիկ» (ծղի նշանակում է բազուկ, ոսկեծղի՝ ոսկեբազուկ, վարդածղի՝ վարդաբազուկ ուստի որոշ գիտնականներ (Ալիշան, Տաղավարյան և այլք) Վարդավառի անունը բխեցրել են հայերեն վարդ բառից: Այժմ ընդունելի է այն տեսակետը, թե «վարդ» խեթերեն ջուր է նշանակել, իսկ «արր»՝ վիհնալ, որը մոտիկ է սրսկել, ցանել բառի իմաստին:

Այդ տոնին ջուր սրսկելու սովորությամբ մասին խոսում է հայկական ժողովրդական մի ավանդություն: Ասում են, — նշվում է ավանդության մեջ, — երբ Նոյը ջրհեղեղից հետո իր տապանով հասել է Մասսի գագաթը և այնտեղից իջել Նախիջևան, որպեսզի ջրհեղեղի սարսափելի հիշատակը անմոռաց մնա մարդկանց մեջ, Նոյն իր զավակներին պատվիրում է իրար վրա ջուր ցանել:

Այդ սովորությամբ, իրոք, հայ ժողովրդի հնագույն ծեսերից է, որ կատարվել է Վարդավառի տոնին: Մինչև այժմ էլ Վարդավառին մարդիկ իրար վրա ջուր են ցանում:

Վարդավառին հավատացյալները ուխտատեղերում նաև աղավճի են թոցրել, որը, Մ. Օրմանյանի և ուրիշների կարծիքով, դարձյալ հայկազունյաց շրջանի հայկական ծես է:

Մինչև անցյալ դարավերջ պահպանված վարդավառի ժողովրդական ծիսակատարությունները գիտնականներին հիմք են տվել պնդելու, որ դրանց մեջ պահպանվել են Աստղիկ դիցուհու մեծություններում քրմերի ու քրմուհիների արարողությունները, վերապրուկները: Օրինակ՝ Ազուլիսում Վարդավառի տոնից 2—3 շաբաթ առաջ նշանված աղջիկները տաշտերի մեջ ցորեն կամ գարի էին ծլեցնում: Վարդավառի տոնին այդ ծածկաճանչ զանգվածի մեջ երեխայի մեծության սովորական կամ խաչաձև փայտ են տնկել և զարդարել վարդերով, մրգերով ու մանր վարունգներով: Այդ ամբողջը խնդում (որոշ բարբառներում՝ խթում) էր կոչվում: Վարդավառի կեսօրից հետո մի պառավ կին խնդումը վերցնում-տանում էր գյուղի հրապարակը և իբր հսկում էր նրան: Տղամարդիկ ու կանաչ խնդումի շուրջը պարում էին զուռնայի ու դիրիջնակայի նվագակցությամբ: Երկարատև պարից հետո պառավը վերցնում էր խնդումը, դնում գլխին և ինքն էլ էր սկսում հատուկ կատակերգ երգելով պարել: Երգի մեջ պառավը երկյուղ էր հայտնում, որ գուցե խնդումը փախցնեն: Այդ ժամանակ տղամարդիկ հանկարծ հարձակվում էին պառավի վրա և խնդումը վայր գցելով, կատակներով ու ծիծաղով փախցնում էին վարդերը, մրգերն ու վարունգները: Պառավն այս անգամ անեծքի երգ էր երգում, որը, Վ. Բոլյանի կարծիքով, քրիստոնեության դեմ ուղղված թաքուն նզովք էր՝ հին սովորությունները վերացնելու դեմ:

Հին հայկական այս տոնը այնքան է մտած եղել ժողովրդի կենցաղ, որ եկեղեցին, Վարդավառի փոխարեն թեև սահմանեց «Տօն պայծառակերպութեան Քրիստոսի», բայց ժողովուրդը շարունակել է Վարդավառ ասել: Եկեղեցին, ժողովրդի բառապաշարից չկարողանալով հանել այդ բառը, ստիպված տոնը իր պաշտոնական օրացույցում (տոնացույց) Վարդավառ էլ կոչեց՝ թեև եկեղեցական արարողությունների ժամանակ այն կոչվում է «Տօն պայծառակերպութեան»:

Աստղիկին նվիրված մեծությունները գտնվում էին Աշտիշատում, Արտաշատում, Անձնաց գավառի Պաղատ լեռան գագաթին, Վանի մոտերքի Արտամետ քաղաքում և այլուր:

Ինչպես հայկազունեաց շրջանի տոմարի այլ տոներին, այնպես էլ Վարդավառի տոնին ժողովուրդը երգել է բազմաթիվ երգեր: Մեջբերում ենք Վարդավառին երգվող մի ժողովրդական կատակերգ:

Վարթեվրին Երգուշաբթին, Գանայ Գայ, Գանայ Գայ,
 գովան Էրգու դեքերգին, հանրայ Գայ, Գանրայ Գայ,
 սաբիբ վըր պուդգի քերքին¹, //—//—//—,
 թաթխան իրարու խոր դին², //—//—//—,
 վերցին զփոցխ ու կերընդին, //—//—//—,
 ընգան հըդ ծորու ափին, //—//—//—,
 ծորեցին ծորթըփեցին, //—//—//—,
 մանդրիկ, մանդրիկ խորմեցին, //—//—//—,
 կեմիգ³ չեղավ կապեցին, //—//—//—,
 ուտի ճըղով կապեցին, //—//—//—,
 ճընջուղ⁴ հողազ բերեցին, //—//—//—,
 խարզան չեղավ քըշեցին, //—//—//—,
 սև օձ խարզան էնեցին, //—//—//—,
 սելիկ չեղավ կրեցին, //—//—//—,
 ոեսի սելով կրեցին, //—//—//—,
 յարոջ տոնով ընցուցին, //—//—//—,
 յար քնուզ էր, չիմցըցին, //—//—//—,
 քնուզ էր, քորընուզ էր, //—//—//—,
 բագուզ էր, կարմըրուզ էր, //—//—//—,
 հանին զփեշգիր սրբեցին, //—//—//—,
 անուշ բագ⁵ մը առեցին ... և այլն:

¹ Պոստուկի տակը առած քերքի համար: Կաթով լի պոստուկը երբ դնում էին կրակին և կաթը եռում էր, դրանից հետո այն դատարկում էին մի ուրիշ պոստուկ՝ մածուկի կամ այլ բանի համար: Պոստուկի տակը «առնում էր»: Այդ պոստուկի տակինը (քերքը) գոլալով կամ դանակով երեխաները քերում ուտում էին:

² Կպան իրարու հոր մեռելներից, այսինքն՝ վիճեցին, հայհույեցին իրար:

³ Խուրձ կապելու պարան, չվան:

⁴ Ծիտ:

⁵ Պաշ:



Հ Ո Ւ Ի

(ըստ Հովհաննես Սարկավազի կազմած անշարժ տոմարի, տևել է սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 9-ը)

Հոռին հայոց տոմարի երկրորդ ամիսն է: Անանիա Ծիրակացին (VII դար), Հովհաննես Սարկավազ Իմաստասերը (1045—1129 թթ.) և Գրիգոր Տաթևացին (1346—1409 թթ.) նշում են, որ հոռին ևս Հայկ Նահապետի դուստրերից մեկի անունն էր:

Վանական Վարդապետը (1181—1225 թթ.), որ երկար ժամանակ ապրել ու ստեղծագործել է Տաուշում, ամսանունը բխեցնում է «հոր» գոյականից: Այդ ամսին, գրում է նա, մարդիկ իրենց բերքը (ցորեն, գարի և այլն) ամբարում էին հորերի մեջ, որ չփչանար:

Գիտնականներից ոմանց կարծիքով (Հ. Տայեցի, Հր. Աճառյան և ուրիշներ), հոռին ծագում է կովկասյան լեզուների օրի (երկու) թվականից: Ստ. Մալխասյանը հիմնավորապես հերքեց այդ տեսակետը և հավանական համարեց, որ հոռին ծագում է ուտի (որթատունկ) բառից և նշանակում է ուտիի, որթատունկի ամիս: Կան նաև այլ կարծիքներ:

Քանի որ հոռին աշնան ամիս է եղել, ավելի հավանականը Վանական Վարդապետի ստուգաբանությունն է: Իրոք, տարվա այդ ժամանակ շինականը բերքը հորում էր նախապես փորված հորերում, որ չփչանար:

Այժմ տեսնենք, թե մարդկությունը երբվանի՞ց է սկսել ժամանակը չափել ներկայումս ընդունված միավորներով:

Ըստ տոմարագիտության տվյալների, տարվա տևողությունը որոշելու գաղափարը ծագել է Ասորեստանում, Եգիպտոսում, Հայաստանում և Չինաստանում: Անտիկ պատմիչներ Դիոդորոս Սիկիլլացու, Կլեյտարքոսի և ուրիշների վկայությամբ Բաբելոնի թագուհի Շամիրամը (մ. թ. թ. XIII դար), որը պատմահայր Մովսես Խորենացու տվյալներով սիրահարվել էր հայոց թագավոր Արա Գեղեցիկին, Եփրատի ափին կառուցած իր Նինվե մայրաքաղաքը շրջափակող պարսպի երկարությունը նշանակել էր 365 ասպարեզ (ատտիկյան մեկ ասպարեզը հավասար էր 177 մետրի): Այսինքն՝ Ասորեստանի թագուհին իր քաղաքի պարսպի երկարությունը համապատասխանեցրել էր տարվա օրերի քանակին:


Հին քաղղեացիները հավատացել են, թե աստղերով կարելի է գուշակել մարդկանց ապագան: Նրանք երկնքում հաշվել էին 30 այդպիսի աստղ-աստված, որոնցից գլխավորները 12-ն էին: Փաստորեն քաղղեացիների համար 30 աստղերը ամսվա 30 օրերի խորհրդանիշն էին, իսկ 12 գլխավոր աստղ-աստվածները՝ տարվա ամիսները և երկնքի 12 կենդանակերպերը: Քանի որ ամեն մի համաստեղություն նմանեցվել է որևէ կենդանու կամ առարկայի (ցուլ, խոյ, ձուկ, կշեռք և այլն), ուստի ամիսներն ունեցել են իրենց նշանները: Գերմանացի հնագետ Ֆ. Մաունդերը, տոմարագետներ Վ. Օլկոտտը, Սվարցը, Բ. Թումանյանը, Լ. Բադալյանը և ուրիշները կարծում են, որ 12 ամիսներից յուրաքանչյուրին մի համաստեղության անուն տալը ծագել է մեզանից մոտ 5000 տարի առաջ, Փոքր Ասիայում և Հայաստանում:

Հայոց տոմարով ևս տարին 12 ամիս է ունեցել, ամեն մեկը 30 օր: Որպեսզի տարվա 365 օրերի թիվը լրանա, ունեցել ենք նաև լրացուցիչ 13-րդ ամիսը, որը կոչվել է Ավելեաց ամիս՝ 5 օր տևողությամբ: Հայկական տոմարի բոլոր ամիսներն ու օրերը անուններ են ունեցել: Այդ անունները հայերեն բառեր են՝ կապված հին հեթանոսական աստվածների և Հայկական լեոնաշխարհի գետերի, տեղանունների ու լեռների անվանումների հետ: Հին հայերը ոչ միայն անվանել են ամիսը, այլև ամեն մի ամիս ունեցել է իր նշանը: Տարվա 12 ամիսների նշանները կապել են 12 համաստեղությունների հետ:

ՀԱՅՈՑ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԵՐԸ

- | | | |
|-------------------|-------------------|------------------------|
| 1. Նավասարդ — խոյ | 5. Քաղոց — առյուծ | 9. Ահեկան — աղեղնավոր |
| 2. Հոռի — ցուլ | 6. Արաց — կույս | 10. Մարեր — այծեղջյուր |
| 3. Սահմի — եկավոր | 7. Մեհեկան — կշիռ | 11. Մարգաց — ջրհոս |
| 4. Տրե — խեցգետին | 8. Արեգ — կարիճ | 12. Հրոտից — ձկներ |
| | | 13. Հավելեաց: |

Հայերս այս ամսանունները գործածել ենք մինչև XVIII դարը, որից հետո այդ անունները գործածությունից դուրս են եկել՝ տեղը զիջելով ներկայիս հռոմեական ամսանուններին:





ՍԼԿՄԻ

(ըստ Հովհաննէս Սարկավագի կազմած անշարժ տոմարի, տակէ է հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 8-ը)

Հայոց տոմարի երրորդ ամիսն է: Ըստ Անանիա Շիրակացու (VII դ.) և Գրիգոր Տաթևացու (1346—1409 թթ.), սահմին Հայկի դուստրերից մեկի անունն է եղել: Վանական Վարդապետը (XIII դար) սահմին կապում է «սահմանել» բայի հետ:

Համաշխարհային տոմարի պատմությունից հայտնի է, որ ժողովուրդների մեծ մասը ամսվա անունը դրել է, ելնելով իր կենցաղի, ապրելակերպի, տարվա այդ եղանակին կատարվող աշխատանքների և այլ երեվոյթների բնույթից ու բովանդակությունից: Վանական Վարդապետն այդ ամսվա անունը բխեցնելով սահմանել բայից, նկատի ունի աշխատանքները սահմանելու պարագան: Այսինքն՝ որոշակի աշխատանքների սահմանը այդ ամիսն է, որից հետո ուշ կլինի: Միջնադարի մեծ իմաստասերն այնուհետև նշում է, թե այդ ամիսն մարդիկ սահմանում էին, որ անհրաժեշտ է տները նորոգել և կատարել ձմռանը պատրաստվելու այլ գործեր: Ձմռանը պատրաստվելու այս սահմանը մինչև վերջերս էլ ժողովուրդը պահպանել է: Օրինակ՝ Հայաստանի լեռնային հեռավոր գյուղերում մինչև

հիմա էլ «ձմեռվա հացը» հոկտեմբեր-նոյեմբեր ամսին են թխում, որպեսզի «ձմեռը հանի», այսինքն՝ բավարարի մինչև գարուն:

Լեզվաբան Ստ. Մալխասյանի (1857—1947 թթ.) կարծիքով, սահմի նշանակում է «սերմանց ամիս», այսինքն՝ աշնանացան սերմը ցանելու ամիս: Գիտնականներից ոմանք (Հր. Աճառյան, Էդ. Աղայան և ուրիշներ) այս ամսանունը բխեցնում են «սահմ» բառից, որը Մեդրիի, Ղարաբաղի և մի քանի այլ բարբառներում նշանակում է «վախ, երկյուղ»: Այս բառը հին հայերենից է անցել բարբառներին: Այն ժամանակակից հայերենում պահպանվել է միայն «սահմոկել» բառի մեջ: Այս իրողության վրա հենվելով, Էդ. Աղայանը կարծում է սահմի ամսանունը սահմ բառի սեռական հոլովն է և դարձել է ամսանուն, հավանաբար տարվա այդ ժամանակի հետ կապված բնակլիմայական պայմանների պատճառով: Ի դեպ, Խոյի բարբառում կա սահմորիա բառը: Սահմորիա նշանակում է հողե կտուրների եզրերից մոտ 10 սմ բարձրությամբ կտուրի չորս կողմը բոլորող շրջանակը, որը արվում էր, որպեսզի անձրևաջուրը ոչ թե տան պատերի վրայով թափվի, այլ հավաքվելով ուղղվեր դեպի չոունկաթջրհորդանը: Այդ սահմորիան հիմնականում ամեն տարի նորոգում էին անձրևային շրջանի նախօրեին: Հավանական է, սահմի ամսանվան ծագումը կապված լինի նաև սահմորիան նորոգելու, այսինքն՝ ձմեռվանը նախապատրաստվելու ժամանակի հետ:

Այս բացատրությունները թեև տարբեր են Վանական Վարդապետի բացատրությունից, բայց նորից ցույց են տալիս, որ ամսանունների ծագումը սերտ կապ ունի տարվա եղանակներից:

• • •

Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի ձեռագրերից մեկի լուսանցքում նշված է, որ սահմի ամսի 8-ին հայկազունյաց Հայաստանը տոնում էր Վահագն Վիշապաբաղի (վիշապներ կոտորող) տոնը: Վահագնի աստվածությունը ևս, ինչպես Հայկը, Անահիտը և այլք, ժամանակի ընթացքում փոփոխություն է կրել: Այսպես, գիտնականներից շատերի կարծիքով, Վահագնը հնում ներառել է նաև արևի Վահե աստծո պաշտամունքը: Ըստ այդ գիտնականների, Վահագն դիցանունը կազմված է Վահե» և «ագնի» բառերի միացությունից: Վահ «բերել» է նշանակում, իսկ ագնի՝ կրակ, հուր: Այստեղից՝ Վահագն նշանակում է հրաբեր: Վահագնը հետո համարվել է քաջության, ուժի, հերոսության ու ռազմի աստված: Վահագնի Վահեվանյան կոչված նշանավոր տաճարը գտնվում էր դարձյալ Աշտիշատում (Տարոն): Հին հայերը վեպեր են հյուսել նաև Վահագն Վիշապաբաղի մասին: Պատմահայր Մովսես Խորենացին

5-րդ դարում ժողովրդից գրառել և մեզ է ավանդել Վահագնի ծննդյան մասին մի գողտրիկ բանաստեղծություն:

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունեք
Եւ զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ.
Եւ ի բոցոյն վազեր
Խարտեաշ պատանեկիկ:
Նա հուր հեր ուներ,
Բոց ուներ մորուս
Եւ աշկունքն էին արեգակունք:

Երկուն էր երկինքը, երկուն էր երկիրը,
Երկուն էր և ծովը ծիրանի.
Երկունքը բոցել էր ծովուն
Նաև կարմրիկ եղեգնիկին:
Եղեգան փողից ծուխ էր ելնում,
Եղեգան փողից բոց էր ելնում
Եվ բոցի միջից վազում էր
Մի խարտյաշ պատանեկիկ:
Նա հուր հեր (մազեր) ուներ,
Բոց միրուք ուներ
Եվ աշքերն էին արեգակունք:

Ինչպես տեսնում ենք, գողթան բանաստեղծները Վահագնի մասին վիպել են, թե նա ծնվել է կարմիր եղեգնից, որ նրա վարսերը և մորուքը կրակ էին, իսկ աչքերը՝ արեգակներ: Այսինքն՝ Վահագնի պաշտամունքը միաժամանակ ունեցել է նաև արևի պաշտամունքի տարրեր: Իսկ հայկական դիցարանի արևի աստված Վահեի մասին վանեցիները մինչև վերջերս էլ պահել էին մի շատ հին սովորություն: Պսակի հաջորդ առավոտ, հարսանքավորները հարս ու փեսայի հետ բարձրացել են կտուրը կամ որևէ բարձր տեղ, որտեղից լավ երևացել է մայրամուտը, և ամուրիների խումբը դիմելով արևին, երգել է այս երգը.

Էգ (արի) բարև, այ, էգ բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տայ թագավորին՝ շատ արև (կյանք):
Վահե, Վահե:

Էգ բարև, այ, էգ բարև,
Էգն արևուն տանք բարև,
Տայ թագուհուն՝ շատ արև:
Վահե, Վահե:

Քրիստոնեության մուտքից հետո եկեղեցին չկարողացավ վերացնել նաև Վահագնի պաշտամունքի հետ կապված ծիսակատարություններն ու սովորությունները: Որպեսզի ժողովրդի հիշողությունից վտարի հեթանոս Վահագնին, եկեղեցին նրա տոնը անվանափոխեց ս. Սարգսի: Բայց հասարակ ժողովուրդը այդ աստվածության վաղ-հայկական կերպարը և նրա հետ կապված վաղնջական ծեսերն ու արարողությունները գրեթե անփոփոխ վերագրեց ս. Սարգսին և հասցրեց մինչև մեր դարի առաջին կեսը: Իրոք, ս. Սարգիսը ևս, ինչպես Վահագն Վիշապաքաղը, միջնադարյան մանրանկարչության մեջ և ուշ շրջանի այլ կարգի նկարներում, միշտ պատկերված է վիշապին նիզակով խոցելիս: Ս. Սարգսի տոներից կա-

1 Փեսա:

2 Հարս:

տարվող ժողովրդի ծեսերն ու հավատալիքները՝ ևս կապ չունեն քրիստոնեության հետ: Օրինակ՝ ամուսնացած երիտասարդները, մանավանդ աղջիկները, այդ տոներից մի շաբաթ պաս պահելուց հետո, աղի կլոն (անժուռ, կլոր գաթայանման թխվածք) էին կերել: Երազներին ով իրենց ջուր էր տալիս, հավատում էին, թե նրա հետ պիտի ամուսնանան: Այդ օրերին օրիորդները ուշի ուշով հետևում էին իրենց աթարի դեպին թառող սարյակներին: Սարյակները որ կողմը որ նայում էին, փեսացուն այդ կողմից պիտի գար, այսինքն՝ փեսացուն այդ կողմի փողոցում կամ գյուղում պիտի ապրելիս լիներ: Հետաքրքիր ու զվարճալի մի ուրիշ ծես էլ է եղել: Փոխինձը սկուտեղի մեջ գիշերը դրել են սենյակի որևէ անկյունում: Առավոտյան կանայք ու աղջիկներն ուշադիր զննել են սկուտեղը՝ փոխինձի վրա ս. Սարգսի (Վահագն Վիշապաքաղի) նժույզի սմբակի հետք հայտնաբերելու հույսով: Եթե փոխինձի վրա սմբակի հետք հայտնաբերվեր, կնշանակեր ընտանիքին մեծ բարիք և երջանկություն էր սպասվում այդ տարի: Չարանձի տղաները հաճախ հին պայտ էին ճարում, գիշերը գողտուկ դրոշմում էին փոխինձի վրա՝ առավոտյան շտապ նվերներ ստանալով բարի ու միամիտ նանիկներից:

Հայկական ժողովրդական մի ուրիշ ավանդության մեջ հստակորեն երևում է ս. Սարգսի ակնառու ընդհանրությունները ամպրոպի ու կայծակի աստված Վահագն Վիշապաքաղի հետ: Մի ազահ և հարուստ գյուղացի, — պատմում է ավանդությունը, — չնայած իր մարագում լիքը դարման է ունենում, աչքը տնկում է անճար պառավի այծերի բաժնին դարմանին, և գիշերը գողանում է պառավի դարմանը: Հրեշտակն աննկատ ծակում է ազահ հարուստի քնոցը և դարմանը մաս-մաս թափվում է գետին: Թափված դարմանի հետքով պառավը առավոտյան պարզում է գողի ով լինելը և անիծում ազահին: Այդ օրն էլ ս. Սարգսի պասն էր, երկինքը պայծառ ու արևոտ: Պառավի անեծքը տեղ է հասնում և ս. Սարգիսը այնպիսի փոթորիկ է բարձրացնում, այնպիսի կայծակ ու ամպրոպ, որ կտորվում է հարուստի ամբողջ հոտը: Ս. Սարգսի բարձրացրած այդ փոթորիկը (թիփի) այդ օրվանից «Պառավի ցրտեր» է կոչվում:

Վահագնի մասին մի շատ հին ավանդություն է բերում Անանիա Ծիրակացին: «Հին հայերը պատմում էին, — գրում է միջնադարի մեծ տիեզերագետը, — թե ձմռան պարզկա մի գիշեր Վահագն վիշապաքաղը գողանում է ասորաց նախնի Բարշամի հարդը: Հարդը տանելիս թափափվում է և հետքը թողնում երկնքում: Այդ օրվանից երկնքի աստղերի խիտ խումբը («Ծեր կաթինը») կոչվում է «Հարդագողի ճանապարհ»:

Այսպիսով՝ ինչպես մյուս աստվածների, այնպես էլ Վահագնի պաշ-

տամուկները թեև դարերի ընթացքում փոխվել է, բայց պաշտամուկներին կապված ծեսերը, արարողությունները, հավատալիքներն ու ավանդությունները ժողովուրդը պահել հասցրել է մինչև վերջերս: Այս նկատառումներից էլնելով է, որ գիտնականները ժողովրդական ավանդություններն ու ազգային ծեսերը համարում են տվյալ ժողովրդի վաղնջեանական պատմության կարևոր վավերագրերից:

Վահագնի պաշտամուկները հին Հայաստանի տարածված պաշտամուկներից էր և պատահական չէ, որ մեր տոմարի օրերից մեկը նրա անունը է կրում:

Հայոց հին տոմարի ամիսը 30 օր է ունեցել, ուստի հայկական օրանունները երեսունն են, որոնք հաստատուն են բոլոր 12 ամիսների համար:

ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ

- | | | |
|------------|--------------|---------------|
| 1. Արեգ | 11. Երեգվան | 21. Գրգուտ |
| 2. Հրանտ | 12. Անի | 22. Կորդուիք |
| 3. Արամ | 13. Պարխար | 23. Ծմակ |
| 4. Մարգար | 14. Վանատուր | 24. Լուսնակ |
| 5. Ահրանք | 15. Արամազդ | 25. Ճրոն |
| 6. Մագրեղ | 16. Մանի | 26. Նպատ |
| 7. Ասողիկ | 17. Ասակ | 27. Վահագն |
| 8. Միհր | 18. Մասիս | 28. Սիմ |
| 9. Չոպարեթ | 19. Անահիտ | 29. Վարագ |
| 10. Մուրց | 20. Արագած | 30. Գիշերավար |

Ինչպես ասվեց, այդ օրանունները բոլորն էլ հայերեն բառեր են և վերցված են մեր հեթանոսական աստվածների, լեոների, գետերի, տեղանունների, երկնային լուսատուների անուններից և հայերեն այլ բառերից: Ծանոթանանք առավել դժվար հստականալի անսանունների բացատրությանը:

ԱՀՐԱՆՔ — Ծագում է ահ բառի գրաբարյան հնագույն ձևից (արհ), որը հետագայում հնչյունափոխվել-դարձել է ահ, ինչպես ԽՍՏՈՐԸ դարձել է ՍԽՏՈՐ, մեղրը որոշ բարբառներում հնչյունափոխվել-դարձել է մերդ և այլն: Ահ բառը արդի հայերենում պահպանվել է մի քանի բարդ բառերում, ինչպես, օրինակ՝ արհավիրք, արհական (սարսափելի) և այլն:

ՉՈՊԱՐԵԹ — Կազմված է ՉՈՊ և ԲԵՐ բառերի բարդությունից: Հին հայերենում ձուպ նշանակել է խառնակություն, շփոթություն, իսկ ձուպարեթ նշանակում է խառնակություն, շփոթություն բերող:

ՄՈՒՐՑ — Հայկական լեոնաշխարհի գետերից մեկի անունն է:

ԵՐԵՉՎԱՆ — Հայաստանի Երիզա (հետագայում՝ Երզնկա) քաղաքի անունից:

ԱՆԻ — Հայաստանի Դարանաղյաց գավառի Անի քաղաքի անունից, որտեղ գտնվում էր Արամազդի գլխավոր տաճարը և հայոց թագավորների դամբարանները (չշփոթել Ծիրակի Անիի հետ):

ՆՊԱՏ, ՊԱՐԽԱՐ, ՍԻՄ, ԿՈՐԴՈՒՅ — Հայաստանի լեոների անունները:

ԳՐԳՈՒՌ — Լեոնանուն: Այս լեոնն հետ կապված ընդարձակ վիպերգից մի երկու տող է պահպանվել, որը իր «Հին հավատք հայոց» աշխատության մեջ գետեղել է Ղևոնդ Ալիշանը:

Վիպերգի հերոսը խնդրում է Գրգուտ լեոնանը.

— Գրգուտ, ընկալ զիս (Գրգուտ, լսիր ինձ):

— Գնա ի Մասիս,

Ձի բարձր է քան զիս, — պատասխանում է լեոնը: (Գնա Մասիս մոտ, քանզի ինձնից բարձր է):

ՄԱՆԻ — Մեծ Հայքի Թորդան գյուղի մոտակա լեոնանունն է:

ԱՍԱԿ — Կազմված է ասել բառի ԱՍ արմատից և ԱԿ ածանցից: Նշանակում է՝ ասացող:

Այս բառը հնում նշանակել է գուշակող:

ԾՄԱԿ — Նշանակում է շուք տեղ՝ ձորի մեջ, նաև՝ անտառ: Գործածվում է մինչև այսօր:

ՅՐՈՆ — Տեղանուն: Կապում են նաև Ծիր կաթինի (Հարդագողի նախաբառ) հին անվանը՝ առնչելով Վահագնի մասին հայտնի ախանդությանը:

ԳԻՇԵՐԱՎԱՐ — Արուսյակ (Վեներա) մոլորակի հայկական մյուս անունը:



ՏԻԷ

(ըստ Հովհաննես Իմաստասերի կազմած անշարժ տոմարի, տևել է
Շույթների 9-ից դեկտեմբերի 8-ը)

Հայոց տոմարի չորրորդ ամիսն է: Ծագում է Տիր աստծո անունից: Անանիա Շիրակացին և Հովհաննես Իմաստասերը նշում են, որ Տիրը Հայկ Նահապետի որդիներից էր:

Ըստ Ագաթանգեղոսի և Մովսես Խորենացու, Տիրը հայոց գերագույն աստված Արամազդի որդին էր՝ գրի, գրչության, գիտության և պերճախոսության աստվածը:

Քանի որ Արամազդը նույն Հայկ աստծո հետագա անվանափոխումն է, ուստի միջնադարի մատենագիրների կարծիքները միանում են. այսինքն՝ Տրե ամսանունը ծագում է Հայկ Նահապետի (Արամազդ) որդի Տիր աստծո անունից: Մերօրյա գիտնականներն այս ստուգաբանությունը ճիշտ են համարում: Հետաքրքիր է, որ հին իլլանդացիների պատերազմի աստծո անունը Տիր էր:

Ասացինք, Տիրը հայոց դիցարանի գրի, գրչության և գիտության աստվածն էր: Գրչության և գիտության աստվածությունն ունենալը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը դեռևս քրիստոնեության մուտքից և գրերի

գյուտից (405 թ.) հազարամյակներ առաջ պաշտամունք է ունեցել գրի, դպրության և գիտության հանդեպ:

Դա իրոք այդպես է:

Մերօրյա գիտնականների միահամուռ կարծիքով, գրի ամենանախնական ձևերից մեկը պատկերագրությունն ու գաղափարագրությունն է: Պատկերագրությունն նշանակում է, որ այս կամ այն միտքը արտահայտվել է ոչ թե բառերով ու նախադասությամբ, այլ պատկերներով: Իսկ գաղափարագիրը որևէ բառի կամ նրա մի մասի իմաստը արտահայտող նշան է:

Այ. Աբրահամյանը, Ա. Մարտիրոսյանը և ուրիշներ ցույց են տվել, որ հայոց գրի սկիզբը պետք է որոնել V—IV հազարամյակների մեր ժայռապատկերներում, որոնցից այդ նշաններն անցել են քրիստոնեության շնորհիվ և գրերի գյուտից 10—11 դար հետո էլ գործածվել են մեր միջնադարյան տոմարական, տիեզերագիտական, ալքիմիական, բժշկագիտական և այլ բնույթի գրչագիր մատյաններում:

Միջին դարերում մեր հները կազմել են նույնիսկ այդ գաղափարագրերի ցուցակներ և ցանկեր՝ համապատասխան բացատրություններով: Հայոց հնագույն «գրերից»՝ գաղափարագրերից, մեզ է հասել ավելի քան երկուհարյուր նիշ, որոնցից մոտ 50-ը, մասնագետների կարծիքով, ուղղակի գալիս է հայոց լեռների ժայռապատկերներից:

Այսպիսով, պատահական չէ, որ հայոց աստվածների ցուցակում կա նաև գրի ու դպրության Տիր աստվածությունը:

Տիրը Համարվել է Արամազդի դպիրն ու սուրհանդակը, ուստի ճեպընթաց էր, թևավոր, սաղավարտակիր և ձեռքին ուներ վիշապազուլու գավազան, որը իմաստության խորհրդանիշ էր: Տիրի գավազանի այս ձևը փոխանցվել է քրիստոնեությանը: Հայոց եկեղեցու եպիսկոպոսների ու կաթողիկոսների գավազանները ևս վիշապազուլու-օձազուլու են: Տիրի մեհյանները համարվում էին արվեստի տաճարներ: Նրա մեհյանում կանգնեցված է եղել Հունաստանից բերված Ապոլոնի պղնձածուլ-ոսկեզօծ արձանը: Տիր աստծո մեհյաններից մեկի մոտավոր տեղը իմանում ենք Ագաթանգեղոսի մի տեղեկությունից: Իր «Պատմությունը Հայոց» երկում պատմիչը գրում է. «Տրդատ թագավորը Վաղարշապատ¹ քաղաքից շարժվեց գնաց Արտաշատ² քաղաքը՝ ավիրելու Անահիտ դիցուհու տաճարը: Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր³, երագացույց,

¹ Ներկայիս Էջմիածին քաղաքը:

² Արտաշատը գտնվում էր Խոր Վիրապ վանքի շրջակայքում:

³ Գրագիր, քարտուղար:

երագահան պաշտամունքի Տիր աստծո իմաստության ուսման մեհյանի և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել: Այս հատվածի երևում է, որ Տիրի մեհյանը գտնվում էր Արտաշատ և Վաղարշապատ մարաքաղաքների միջև ինչ-որ տեղ: Նկատի ունենալով Ագաթանգեղոսի այն վկայությունը, թե Տրդատ թագավորի շքախումբը Վաղարշապատի դուրս գալուց հետո նախ քանդեց Տիրի մեհյանը, ապա շարունակեց ճամփան դեպի Արտաշատ, գիտնականներից ոմանք կարծում են Տիր աստծո մեհյաններից մեկը կանգնած է եղել Ջվարթնոց տաճարի տեղը:

Ինչպես մյուս աստվածների, այնպես էլ Տիրի հետ կապված հավատալիքները ժողովրդի հիշողության մեջ մնացել են մինչև օրս: Օրինակ հայկական ժողովրդական մի հին ավանդություն պատմում է, թե Տիրը ծնվածներին մուտքագրում էր ծննդյան մատյան, իսկ մահացածներին դուրս էր անում մատյանից: Տիրը ում հոգին որ ուզում էր ելք անել, գնում էր նրա մոտ, հոգին առնում և ծոցը դրած տանում էր երկինք: Այստեղից էլ մինչև հիմա ժողովրդախոսակցական լեզվի մեջ մնացած «գրողի տարած», «գրողը քեզ տանի» և այլ արտահայտություններ: Պահպանվել են նաև Տիրի պաշտամունքին առնչվող լեզվական ու աշխարհագրական տղվյալներ: Բանասեր Բ. Սարգսյանի կարծիքով, քրիստոնեական արարողություններում միշտ հիշատակվող Տեր բառը ուղղակի Տիր աստծո անունից է ծագում: Նշանավոր բանասեր Կ. Կոստանյանը (1850—1920 թթ) Տիր անունից է բխեցնում «Տիրացու» եկեղեցական պաշտոնը: Որոշ գիտնականներ Տիր աստծո անվան հետ են կապում պատմական Հայաստանի Տիրակատար քաղաքի, Տիրինկատար լեռան ու Տիրառիճ գյուղի անունները՝ վերջին բնակավայրը համարելով այդ աստծո մեհյաններից մեկի վայրը:

Ինչպես հեթանոսական մյուս աստվածները, այնպես էլ Տիրը և ունեցել է հատուկ տոն: Այժմ վերջնականապես պարզված չէ, թե Տիրին նվիրված ի՞նչ տոներ են եղել, բայց գիտնականներից ոմանք հետաքրքիր ենթադրություններ են արել, որոնք բավական համոզիչ են: Օրինակ Մ. Օրմանյանի կարծիքով, մինչև այսօր ժողովրդի մեջ պահպանված Տյառընընդառաջ տոնը, որը տոնվում է փետրվարի 14-ին, Տիր աստծուն նվիրված հեթանոսական տոնի վերհուշն է: Մ. Օրմանյանն, իբրև իր ենթադրությունը հաստատող կովան, վկայակոչում է այն փաստը, որ տյառընդառաջին ժողովուրդը տերընդես կամ տրընդես է ասում (խոյի բարբառում այն կոչվում է տ ա ն դ ը ո ե ճ): Իսկ տերընտես-տրնդեզ տանդոեջը ոչ թե տյառընդառաջ բառի հնչյունափոխված ձևն է, այլ Տիր

աստծոն նվիրված ինչ-որ տոնի անվան աղավաղումը, որը, ինչպես շատ այլ տոներ, հարմարեցվել է քրիստոնեությանը:

Իրոք, տրընդեզին մինչև այսօր էլ կտուրներին կամ որևէ բարձր տեղ խարույկ են վառում և նորապասկներին ու երիտասարդ աղջիկներին թոցնում կրակի վրայով: Ըստ հին ավանդության, այդ կրակը ոչնչացնում է չար աչքի և հմայությունների ազդեցությունը՝ նորահարսներին ապահովելով անփորձանք, արգասաբեր կյանք: Դա, անշուշտ, սրբազան կրակի հետ կապված հեթանոսական ծեսի վերապրուկ է, որը, Մ. Օրմանյանի կարծիքով, անցել է Տիրի պաշտամունքին, այնտեղից՝ քրիստոնեությանը:

Հին հայերը ապրիլ ամսին տոնել են նաև գատիկը, որը նույնպես ոչ մի կապ չունի քրիստոնեության հետ: Թեև հրեական պասեքը հայերեն թարգմանվում է գատիկ, բայց գատիկը ավելի հին երևույթ է, քան պասեքը և նշանակում է գատել, բաժանել: Այս տոնը հավանաբար գատիկ է կոչվել ձմեռվանից զարունը գատվելու առթիվ: Որոշ գիտնականներ գատիկը կապում են գիշերահավասարի հետ, որը տեղի է ունենում մարտի 21-ին (գիշերահավասարը տարվա այն ժամանակն է, երբ գիշերվա ու ցերեկվա տևողությունները հավասարվում են): Այդ վարկածի հետևորդները պնդում են, որ հին հայերի գատիկը մարտի 21-ին էր, որը քրիստոնեության մուտքից հետո տեղաշարժվել է դեպի ապրիլ ամիսը: Բոլոր դեպքերում, գատիկի տոնի մեջ ևս բազմաթիվ հեթանոսական սովորույթներ կան (ձու նախշելը, ձու խաղալը, ձու գլորելը և այլն), որը կապ չունի քրիստոնեությանը:

• • •

Արդեն գիտենք, որ մեր ամիսները և ամսվա 30 օրերն անուններ են ունեցել: Հայոց տոմարում անուններ են ունեցել նաև օրվա 24 ժամերը:

Գիտնականները ենթադրում են, որ օրը առաջին անգամ հավասար մասերի են բաժանել բաբելացիները: Բաբելացիներից հետո մյուս հին ժողովուրդները ևս սկսել են օրը հավասար մասերի բաժանել, բայց ոչ անպայման 24 մասի, այլ ամեն ժողովուրդ օրը տարբեր մասերի է բաժանել՝ 6, 7, 12, 24 և այլն: Գիտնականների մեծ մասի կարծիքով, Եվրոպայում օրը 24 հավասար մասի բաժանելու գաղափարն առաջին անգամ գործնականորեն կիրառել է մ. թ. ա. II դարի հույն հռչակավոր տիեզերագետ, տոմարագետ և քարտեզագիր Պտղոմեոսը: Նրանից հետո օրը 24 ժամի բաժանելը դարձել է համատարած: Բայց հայտնի է, որ հայոց տոմարի 24 ժամանուններն առնվազն երեք հազար տարվա պատմություն



Ս. ՄԵՍՐՈՂ

ունեն: Ի նկատի ունենալով այս հանգամանքը և հիմնվելով մեր ժամանուների պատմա-լեզվաբանական քննության վրա, գիտնականները պարզել են, որ հին հայերը օրը 24 մասերի են բաժանել Պտղոմեոսից շատ դարեր առաջ:

Ահա հայոց տոմարի ժամանուները, որոնք հայերեն են, և բոլոր բառերը բնորոշում են սովյալ ժամի երևույթները:

Օրինակ՝ Հրակաթ նշանակում է օրվա ամենաշոգ ժամը, երբ «վերևից կրակ է կաթում»: Այգ նշանակում է արևածագից առաջ: Խավարակ կնշանակի աչքերը խավարում են, այսինքն՝ չեն տեսնում մթության մեջ և այլն:

Յերեկվա ժամանուները

Գիշերվա ժամանուները

- | | |
|----------------|----------------------|
| 1. ԱՅԳ | 13. ԽԱՎԱՐԱԾ |
| 2. ԾԱՅԳ | 14. ԱՂՋԱՄՈՒՂՋ |
| 3. ՋՈՐԱՅՅԱԼ | 15. ՄԹՆԱՅՅԱԼ |
| 4. ՃՈՒԱԳԱՅԹՅԱԼ | 16. ՇԱՂԱԿՈՏ |
| 5. ՇԱՌԱԿԻՂՅԱԼ | 17. ԿԱՄԱԿՈՏ (Կամվոտ) |
| 6. ԵՐԿՐԱՏԵՍ | 18. ԲԱՎԱԿԱՆ |
| 7. ՇԱՆԹԱԿՈՂ | 19. ԽՈԹԱՓՅԱԼ |
| 8. ՀՐԱԿԱԹ | 20. ԳԻՋԱԿ |
| 9. ՀՈՒՐԹԱՓՅԱԼ | 21. ԼՈՒՍԱԿՆ |
| 10. ԹԱՂԱՆԹՅԱԼ | 22. ԱՌԱԿՈՏ |
| 11. ԱՐԱԳՈՏ | 23. ԼՈՒՍԱՓԱՅԼ |
| 12. ԱՐՓՈՂ | 24. ՓԱՅԼԱԾՈՒ |

Չնայած հայերս մեր ամսանուներն ու օրանուները ավանդաբար գործածել ենք մինչև ժէ—ժԸ դդ., այսինքն՝ չենք հրաժարվել ավանդական անուներից, բայց դա մեր լուսամիտ հներին չի խանգարել միշտ հետևելու համաշխարհային տիեզերագիտության և տոմարի նվաճումներին: Հայ տոմարագետ-իմաստասերներ Սահակ Պարթևը, Հովհան Մանդակունին (Ե դ.), Աթանաս Տարոնացին (Ջ դ.), Անանիա Շիրակացին (Է դ.), Հովհաննես Իմաստասերը (ԺԱ—ԺԲ դդ.), Ազարիա Ջուղայեցին (ԺԷ դ.), Սիմեոն Երևանցին (ԺԸ դ.) և ուրիշներ, պահելով սեփական տոմարի ավանդույթները, միշտ բարեփոխել ու արդիացրել են մեր տոմարը՝ ձգտելով այն համահունչուն դարձնել ժամանակի պահանջներին: Օրինակ՝ ինչպես արդեն գիտենք, 1582 թ. նոր տոմարը շատ երկրներում ընդունվեց՝ հարյուրամյակներ հետո: Մինչդեռ հայերն արդեն 1584 թվականին, այն է՝ նոր տոմարին անցնելուց ընդամենը երկու տարի անց, Վենետիկում

թարգմանաբար հրատարակեցին նոր տոմարի մասին եվրոպացի գիտնականների աշխատությունը, որտեղ գիտության վերջին նվաճումների հիման վրա ապացուցվում էր նոր տոմարին անցնելու անհրաժեշտությունը: Այդ օրացույցը կոչվում էր «Գրիգորեան հավիտենական տոմար...»: Թարգմանիչն ու հրատարակիչն էր ժամանակի պայծառ մտածողներից մեկը՝ Հովհաննես Տերզցին:

Ժամանակը հաշվելիս տարբեր ժողովուրդներ օրվա սկիզբը տարբեր պահերից են սկսել: Այսպես՝ չինացիները, հրեաները, արեւացիները օրվա սկիզբն ընդունել են արեամուտը. հույները, պարսիկները, ասորիները պրևաձագը:

Ինչպես երևում է մեր ժամանուկների ցուցակից, հայերը օրվա սկիզբը համարել են այգաբացը, որը չի մտնում տոմարական հին համակարգերից և ոչ մեկի մեջ: Բայց ինչպես տոմարագիտական այլ բազմաթիվ երևույթներ, այնպես էլ օրվա սկիզբը, ժամանակ առ ժամանակ փոփոխվել է թե՛ Հայաստանում, և թե՛ այլ երկրներում: Օրինակ՝ Անանիա Շիրակացու ժամանակ Հայաստանում արդեն օրվա սկիզբը համարվել է ոչ թե այգաբացը, այլ լուսաբացը:

Ժամանակի չափումը կայունացնելու և բոլոր երկրների համար միասնական ժամանակ սահմանելու նպատակով, 1925 թ. հունվարի մեկից ամբողջ աշխարհում օրվա սկիզբը ընդունվեց կեսգիշերը:



ՔԼԼԸՅ

(Ըստ Հովհաննես Սարկավազի կազմած անշարժ տոմարի, տևել է դեկտեմբերի 9-ից հունվարի 7-ը)

Հայոց տոմարի հինգերորդ ամիսն է: Անանիա Շիրակացին և Հովհաննես Իմաստասերը նշում են, որ քաղոցը Հայկ Նահապետի որդիներից մեկի անունն էր: Ֆրանսիացի գիտնական Ե. Դյուլորիեն (1807—1881 թթ.) և հայագետ Քերոլբե Պատկանյանը (1833—1889 թթ.) քաղոց ամսանունը թխեցնում էին «քաղել» բայից: Հր. Աճառյանը (1876—1953 թթ.) և Ստ. Մալխասյանը (1857—1947 թթ.) այս բառը ստուգաբանում էին կապելով ք ա ղ (արու այծ) բառի հետ և բացատրում որպես կենդանիների զուգավորման ամիս: Արդի գիտնականների մեծ մասը ավելի հավանական է համարում վերջին մեկնությունը:

• • •

Հայտնի է, որ տարին այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում երկիրը մեկ պտույտ է գործում Արեգակի շուրջը: Տարին հաշվելու այս ելակետը կոչվում է արեգակնային տոմար: Տեսնենք տարին հաշվելու ուրիշ էլ ի՞նչ սկզբունքներ են եղել հնում:

Նախնադարյան մարդու առաջին օրացույցն իրար հաջորդող գիշերվա ու ցերեկվա պարզունակ հաշիվն էր: Նախնադարյան մարդը տեսնում էր արևը ծագում է, հետո շարժվում է դեպի արևմուտք, սկսվում է երեկոն, ապա երևում է Լուսինը, որը ևս գիշերվա ընթացքում շարժվում է: Մարդը նկատում է նաև, որ նորը (Լուսնի մահիկը) օրերի ընթացքում հետզհետե մեծանում դառնում է կիսալուսին, ապա լիալուսին, հետո կրկին մաշվում դառնում է նոր և այդպես շարունակ:

Հնագույն ժամանակներում ժամանակը սկսում են չափել լուսնի այդ փոփոխություններով: Այսինքն՝ հետևում են, թե, նախ քանի՞ օր հետո է նորը դառնում լիալուսին, ապա՝ դարձյալ մահիկ: Ապա հաշվում են, թե ասե՞նք այս գարնանից մինչև հաջորդ գարուն, այն է՝ մեկ տարում Լուսնի փոփոխությունը քանի՞ անգամ է կրկնվում: Այսպես առաջացել է լուսնային տարի կամ լուսնային տոմար հասկացությունը: Լուսնի այս փոփոխությունը տոմարագիտության մեջ հայտնի է «Լուսնի փուլերի պարբերաշրջան» անվամբ: Շատ հին ժամանակներից մարդը պարզել է, որ Լուսնի մեկ պարբերաշրջանը հավասար է 29 օր 12 ժամ 44 րոպեի: (Լուսնի փուլերի մեկ պարբերաշրջանը ժամանակի այն հատվածն է, որի ընթացքում նորը աճում-դառնում է լիալուսին, ապա մաշվելով, վերածվում է նորի):

Մոտ չորս հազար տարի առաջ Ասորիքում բավականին ճշգրիտ հաշվել էին, որ լուսնային տարին տևում է 354 օր 9 ժամ (ավելի ճշգրիտ հաշվումներով լուսնային տարին տևում է 354 օր 8 ժամ 49 րոպե 34 վայրկյան): Այսինքն՝ լուսնային տարին մոտ 11 օրով պակաս է արեգակնային տարուց:

Ըստ ընդունված կարծիքի, լուսնային օրացույցը առաջինը ասորեստանցիներն են գործածել (մոտ մ. թ. ա. ԺԸ—ԺԷ դդ.), ապա բաբելացիները, հույները, հռոմեացիք, չինացիները և այլ ժողովուրդներ: Հիմա էլ մահմեդական որոշ երկրներում դեռևս գործածում են լուսնային տոմար: Հին աշխարհի մեծ իմաստասեր և մաթեմատիկոս Պյութագորասը (մ. թ. ա. 570 — մոտ 500) կարծում էր, որ գոյություն ունի նաև տիեզերական տարի: Նրա հաշվումներով, տիեզերական տարին հավասար է երկրային 1080 տարվա: Ինչպես որ երկրային մեկ տարում երկրի վրա տեղի է ունենում եղանակի պարբերական հերթափոխություն, այնպես էլ տիեզերքում է: Տիեզերական մեկ տարում տիեզերքը կատարում է մեկ պտույտ և վերադառնում է նախնական վիճակին:

Այս փաստերը ցույց են տալիս, թե մարդկային միտքը պարզունակ գործիքներով ինչ մեծ թռիչքներ է կատարել, թե հնադարյան գիտնա-

կաններն ինչպես են անգե՞ն աչքով դիտարկել տիեզերքը՝ ձգտելով թափանցել նրա գաղտնիքների մեջ, հայտնաբերել երկնային լուսատուների շարժումների օրենքները, ճշտել, թե դեպի ո՞ր և ի՞նչ ուղղությամբ է ընթանում շարժումն ու զարգացումը:

Տոմարագիտության բարձրագույն նվաճումը արեգակնային օրացույցն է, որով այժմ առաջնորդվում է քաղաքակիրթ աշխարհը: Գիտնականները պարզել են, որ հայերն առաջին ժողովուրդներից են, որոնք անցել են արեգակնային տոմարին՝ թեև երկար ժամանակ պահել են նաև լուսնային օրացույցը:

• • •

Բոլորը գիտեն, որ գոյություն ունեն «մեր թվարկություն» և «մեր թվարկությունից առաջ» հասկացությունները: Շատ կարևոր է իմանալ, թե այդ հասկացությունները ի՞նչ են նշանակում:

Հնում տարբեր պետական միավորումներ ու ազգեր տարբեր թվարկություններ են ունեցել: Մի խոսքով՝ աշխարհը միասնական տոմար չի ունեցել:

Իսկ ինչի՞ հետ են կապված թվարկությունները:

Թվարկությունների սկզբնավորությունը միշտ կապված է եղել այս կամ այն ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ: Միջնադարում, օրինակ, ամենատարածված թվականությունը «արարչության» թվականն էր, որը գործածել են տասնյակ ժողովուրդներ: Այդ թվարկությունը սկսում է այն օրից, երբ աստված ստեղծեց (արարեց) մարդուն: Այստեղից էլ՝ «արարչության թվական» հորջորջումը: Ընդ որում՝ արարչության բազմաթիվ թվականներ են եղել (յոթանասունից կամ եվսեբեոսի, կայսերական, ասորական, աղեքսանդրյան, հռոմեական և այլն): Արարչական թվարկության սկիզբը որոշ ժողովուրդներ դրել են աշխարհի ստեղծման օրը, ուրիշներ՝ դրախտից Ադամին վտարելու օրը: Հայ տոմարագետները (օր. Հովհաննես Իմաստասերը) ճիշտ էին համարում արարչության թվականը սկսել Ադամին դրախտից վտարելու օրվանից: Ըստ այդ հաշվարկի, արարչության թվականով այժմ 7191 թիվն է:

Հին հռոմեացիները իրենց թվականությունը սկսել են Հռոմի հիմնարկության օրվանից, որը տեղի է ունեցել մ. թ. ա. 753 թ.:

Մահմեդական ժողովուրդներն իրենց թվարկությունը սկսել են այն օրվանից, երբ Մուհամմեդը Մեքքա քաղաքից փախավ Մադինա: Դա տեղի է ունեցել մ. թ. 622 թ.: Մուսուլմանական աշխարհի որոշ ժողովուրդներ մինչև հիմա էլ գործածում են այդ թվականությունը: 1990 թ. նրանց 1410 թիվն է: Բայց ինչո՞ւ ոչ թե 1366 (1990—622 = է 1368), այլ 1410:

Որովհետև այս տոմարով տարից 11 օրով կարճ լինելով այսօրվա օրացուցային տարուց, ոչ թե 365,25 օր ունի, այլ 354 օր: Այսինքն՝ **Հիշրեթ** կոչվող մուսուլմանական տոմարը ոչ թե արեգակնային է, այլ՝ լուսնային:


Իսկ «մեր թվականությունը» ինչի հետ է կապված:

Այն կապված է Քրիստոսի ծննդյան հետ: Հիսուս Քրիստոսը ծնվել է **1992** տարի առաջ՝ մեկ թվին: «Մեր թվականությունը» կամ ինչպես այլ կերպ ասում են՝ Քրիստոսի թվարկությունը, առաջինը սկսել են գործածել Հռոմում՝ 532 թվին: Մոտավորապես 8—10-րդ դարերում այդ թվարկությունը հետզհետե տարածվեց և դարձավ քաղաքակիրթ աշխարհի միասնական թվականությունը: Ի դեպ, նոր թվարկություններ են ստեղծվել ու գործածվել նաև ավելի ուշ ժամանակներում: Օրինակ՝ 1793 թ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո ֆրանսիացիք կազմեցին նոր տոմար, որի մեկ թվականը սկսվում էր 1792 թ. հոկտեմբերի 22-ից: Նրանք փոխեցին նաև հուլյան տոմարի ամսանունները (Թերմիդոր, ժերմինալ, Բրյումեր և այլն): Հետաքրքիր է, որ այդ տոմարը լիովին համընկնում էր հայոց հին տոմարին: Տարին ուներ 365 օր, 13 ամիս: 12 ամիսներից յուրաքանչյուրը բաղկացած էր 30 օրից, իսկ 13-րդը կոչվում էր հավելյալ ամիս և ուներ 5 օր: Ֆրանսիան այս տոմարը գործածեց 15 տարի: 1806 թ. Նապոլեոն Բոնապարտը այն վերացրեց, բայց 1871 թ. Փարիզյան կոմունայի ժամանակ հեղափոխական ֆրանսիան այդ տոմարը կարճ միջոցով կրկին մտցրեց շրջանառության մեջ:

Հին հայերը ևս ունեցել են սեփական թվականություն, որը տարբեր է եղել բոլոր հին տոմարներից ու թվարկություններից: Թեև միջնադարյան Հայաստանում գործածվել է տարբեր ժողովուրդների 15 թվականություն, բայց տարածված են եղել հայկական 3 ինքնուրույն թվականները: Առաջինը կոչվել է «Տոմարական թվականություն հայոց», ըստ որի այժմ 1441 թիվն է: Այս թվարկությունը սկսում է 552 թվից: Սույն թվարկության մասին կան նաև այլ կարծիքներ, որ Հայոց մեծ թվականը սկսվել է 551 թ. հուլիսի 11-ին, 553 թ. հուլիսի 11-ին և 553 թ. հունվարին:

1084 թ. օգոստոսի 11-ից հայ իրականության մեջ սկսել է գործածվել Հովհաննես Սարկավազ Իմաստասերի կազմած նոր թվականությունը, որն իր անունով կոչվել է նաև «Սարկավագադիր» թվականություն: Այս թվականությունն ավելի շատ հայտնի է «Հայոց փոքր թվական» հորջորջումով: Ըստ Հայոց փոքր թվականության, այժմ 908 թիվն է, որն սկսել է 1991 թ. օգոստոսից, իսկ 1992 թ. օգոստոսին կսկսվի 909 թվականը:

Եվ, վերջապես, գործածվում է նաև երրորդ թվականությունը, որը



ԴԵՎՈՒՂ ԱՆԻՇԱՆ

կոչվել է «Հայոց բուն թվականություն»: «Հայոց բուն թվականությունը» սկսվել է Բելի հանդեպ Հայկ Նահապետի տարած հաղթանակի օրվանից Այս թվականության սկզբից անցել է 4485 տարի: Այսինքն՝ Հայկը Բելին նետահարեց 4485 տարի առաջ:

Հայ մեծ պատմաբան, բանաստեղծ և աշխարհագրագետ Ղևոնդ Ալիշանը (1820—1901) հիմնվելով անտիկ գիտնականներ Ափրիկիանոսի, Եվսեբիոս Կեսարացու և ուրիշների հաղորդած տվյալների վրա, ապացուցել է, որ «Բուն հայոց թվականությունը» իրոք համընկնում է Բելի մահվան տարուն: Այդ հաշվումները բավական պարզ և հասկանալի են: Այսպես՝ պատմական բազմաթիվ աղբյուրներից ստուգապես հայտնի է, որ մ. թ. 428 թ. ավարտվել է հայոց հնագույն տոմարի երկրորդ Հայկյան շրջանը: Հայկյան շրջանը, ըստ նույն աղբյուրների, տևել է 1460 տարի: Քանի որ պատմական տվյալները վկայում են, որ մ. թ. 428 թ. ավարտվել է Հայկյան երկրորդ շրջանը, հետևապես, մինչև մ. թ. 428 թ. անցել էր երկու անգամ 1460 տարի, այսինքն՝ 2920 տարի: Եթե 2920 տարուց հանենք մեր թվականության 428 տարին, հեշտությամբ կպարզենք, որ հնագույն տոմարի Հայկյան առաջին շրջանը սկսվել է մեր թվականությունից 2492 տարի առաջ:

Չափազանց կարևոր է այն հանգամանքը, որ հայերը չուզեցին ընդունել Քրիստոսի ծնունդից սկսվող թվարկությունը և Ջ դարի կեսերին ստեղծեցին ու շրջանառության մեջ դրեցին իրենց սեփականը, որով առաջնորդվել են մինչև XVIII դարի սկիզբները: Սա խիստ համարձակ քայլ էր և մի նպատակ ուներ. որքան հնարավոր է հոգեբանորեն ազատագրվել Հռոմից և Բյուզանդիայից, որոնք ամեն ջանք գործադրում էին հայությանը թեքել դեպի իրենց մշակույթն ու բարքերը, ոչնչացնել մեր նախնիների ազգային դեմքն ու հոգևոր ազատությունը: Էլ ավելի հետաքրքիր է, որ, ինչպես նշում է Աշ. Գ. Աբրահամյանը, հայ տոմարագետները, ուսումնասիրելով Քրիստոսի ծննդյան տարվա հետ կապված իրադարձությունները, հոռմեական, բյուզանդական և պեքսանդրյան դպրոցի տոմարագետների հաշվումները սխալ համարեցին: Հայ գիտնականները ապացուցեցին, որ Քրիստոսը ծնվել է ոչ թե մեկ թվին, այլ երկու տարի առաջ, այսինքն՝ եթե օտար գիտնականները ընդունեին հայերի շտկումը, այժմ ոչ թե 1992 թիվը կլիներ, այլ 1994 թիվը: Սա կնշանակի վաղ միջնադարում հայ տոմարագիտությունը համաշխարհային մակարդակ է ունեցել և հայ իմաստասեր-տոմարագետներն այնքան վստահ են եղել իրենց հաշվումների մեջ են այնքան ազատախոհ, որ նույնիսկ հերքել են սրբագործված Քրիստոսի թվականությունը:

Այսուհանդերձ, դա չի խանգարել, որպեսզի հայ տոմարագետները փայլուն կերպով յուրացնեին համաշխարհային տոմարագիտական մտքի նորությունները: Ավելին՝ մեր հին մատենագիրները շատ հաճախ «Հայոց մեծ թվականության» կողքը դրել են նաև մեր թվականը, երբեմն նաև՝ այլ թվականներ, որպեսզի իրենց նկարագրած իրադարձությունները առավելագույն ճշտությամբ փոխանցեն սերունդներին: Հայ մատենագրության մեջ տարբեր թվականությունների զուգահեռ գործածությունը տոմարագետներին հնարավորություն է տալիս բազմաթիվ կարևոր ճշտումներ անել:



ԼԼԾ

(Ըստ սարկավագադիր տոմարակարգի, տևել է հունվարի 3-ից փետրվարի 6-ը)

Հայոց տոմարի 6-րդ ամիսն է:

Անանիա Շիրակացին, Ղևոնդ Ալիշանը (1820—1901) և ուրիշներ արացը համարում են Հայկ Նահապետի յոթ որդիներից մեկը: XIII դարի իմաստասեր և տոմարագետ Վանական Վարդապետը արաց ամսանունը բխեցնում է «արանց» գոյականից, որը գրաբար նշանակում է «տղամարդկանց»: Միջնադարի մեծ մտածողն այնուհետև բերում է մի հին ավանդություն, ըստ որի ձմռան այդ ամսին մեր երկրի լեռնային ձյունոտ ճամփաներն այնքան վտանգավոր են եղել, այնպիսի բուք է եղել, որ «ասում են արանց, այսինքն՝ տղամարդկանց ճանապարհ է, ոչ թե թույլերի ու կանանց: Այստեղից էլ այդ ամսվա անունը դրել են Արաց»: Այդ ամիսն Արաց են անվանում նաև Հովհաննես Իմաստասերն ու Գրիգոր Տաթևացին: Ֆրանսիացի հայագետ Պոլ դը Լագարդը և լեզվաբան էդ. Ադայանը հիմնավորում են այս բացատրությունը՝ գիտականորեն ապացուցելով, որ Արացը ծագել է գրաբարի այր (տղամարդ) բառի հոգնակի սեռականից (ուղղական-արք, սեռական-արաց):

Անցյալ գրույցից մենք իմացանք, թե տարին հաշվելիս ի՞նչ սկզբունքներ, ի՞նչ թվականություններ են գոյություն ունեցել: Բազմիցս խոսք եղավ նաև «տոմարական համակարգ» հասկացության մասին: Այժմ տեսնենք ի՞նչ ասել է տոմարական համակարգ, և հայոց տոմարն ի՞նչ տեղ ունի համաշխարհային տոմարական սակավաթիվ համակարգերի մեջ:

Տոմարական ինքնուրույն համակարգ է այն տոմարը, որը մյուսներից տարբերվում է սեփական թվականությամբ, տարեշրջաններով, ամսանուններով ու օրանուններով, օրվա և տարվա սկզբով (ամսանորով) և այլ հանգամանքներով:

Սովորաբար տոմարական համակարգը ծառայում է մի քանի ժողովուրդների, այսինքն՝ շատ ժողովուրդներ, չունենալով իրենց սեփական տոմարը, վերցնում օգտագործում են որևէ ժողովրդի ստեղծած տոմարը: Այսպես՝ եթովպացիները, կապադովկիացիները, վրացիները և այլ ժողովուրդներ գործածել են եգիպտական տոմարը, արևելյան սլավոնները՝ արարչագործության տոմարի բյուզանդական տարբերակը և այլն:

Մենք արդեն գիտենք, որ հայկական տոմարը վերոհիշյալ պարագաներով առանձնանում է բոլորից: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ մասնագետները կարծում են, որ հայոց տոմարը ոչ միայն աշխարհի հնագույն տոմարներից է, այլև բոլորից տարբերվող, ինքնուրույն համակարգ՝ համաշխարհային տոմարագիտության մեջ:

Հայոց տոմարի մասին գրավոր հնագույն հիշատակությունը գտնում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի մեջ: Քերթողահայրը գրում է, թե Արտաշես Աշխարհակալը (մ. թ. ա. 189—160 թթ.) կարգավորել է տալիս հայոց տոմարը, խրախուսում գիտությունների ու արվեստների զարգացումը:

Որոշ գիտնականների կարծիքով, հայոց տոմարի հիմնադիրը Հայկ Նահապետն էր: Այդ տեսակետի հետևորդները, իբրև հիշյալ կարծիքը հիմնավորող փաստարկ, վկայակոչում են հին մատենագիրների այն տեղեկությունները, թե Հայկը ժամանակի, չափի ու տևողության աստվածն էր, իսկ երկնքի համաստեղություններից մեկը (Օրիոն-Հայկ) կոչվել է նրա անունով:

Այսպես՝ Հովհաննես Իմաստասերը գրել է. «Հայոց առաջին նահապետ Հայկը կարգեց ամիսները և դրանք անվանեց իր ուստերի և դուստրերի անուններով»: Իսկ Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ գրում է, թե հայոց տոմարը սկիզբ է առել Հայկի օրոք:

Բայց մ. թ. ա. V—III հազարամյակներից ու ավելի վաղ ժամանակներից մեզ հասած բազմաթիվ ժայռապատկերները, քարերի վրա պատկերված աստղագիտական քարտեզներ և այլ նյութեր արդի գիտնականներին թույլ են տվել եզրակացնելու, որ աստղագիտությունը և դրա հետ կապված տոմարագիտությունը Հայաստանում զարգացած էր եղել Հայկ Նահապետից էլ ավելի վաղ ժամանակներում:

• • •

Քանի որ տոմարագիտությունը սերտորեն առնչվում է աստղագիտությանը, իսկ վերջինս՝ թվաբանությանն ու մաթեմատիկային, տեսնենք հին հայերը թվանշանները ինչպե՞ս էին նշանակում:

Եթե դուք ուշադիր զննեք միջնադարյան տապանաքարերը կամ ճարտարապետական հուշարձանների ու խաչքարերի արձանագրությունները, բազմիցս կհանդիպեք այսպիսի մակագրությունների՝ թուլին ՄԺԳ, ՆԽԸ, ՌԾԷ և այլն: Սա նշանակում է միջնադարյան Հայաստանում թվերը նշում էին մետրոպոլիտանային տառերով: Հիշյալ մակագրությունները վերծանելու համար նախ և առաջ անհրաժեշտ է գիտենալ հայկական թվային համակարգի սկզբունքը: Այս սկզբունքը շատ պարզ է, եթե անգիր գիտենք մեր այբուբենը: Հայոց այբուբենը 405 թ. մինչև 11—12-րդ դարերը ունեցել է 36 տառ (օ, ֆ տառերը ավելացվել են միջնադարում):

Այբուբենի 36 տառերը Մետրոպ Մաշտոցը գիտակցաբար բաժանել է 4 սյունակի՝ ամեն մեկում 9 տառ: Առաջին սյունակում խմբավորել է միավորներ նշանակող տառերը, երկրորդում՝ տասնավորներ, երրորդում՝ հարյուրավորներ, չորրորդում՝ հազարավորներ նշանակող տառերը:

| | | | |
|-------|--------|---------|-----------|
| Ա — 1 | Ժ — 10 | Ճ — 100 | Ռ — 1000 |
| Բ — 2 | Ի — 20 | Մ — 200 | Ս — 2000 |
| Գ — 3 | Լ — 30 | Յ — 300 | Վ — 3000 |
| Դ — 4 | Խ — 40 | Ն — 400 | Տ — 4000 |
| Ե — 5 | Ծ — 50 | Շ — 500 | Ր — 5000 |
| Զ — 6 | Կ — 60 | Ո — 600 | Յ — 6000 |
| Է — 7 | Ը — 70 | Չ — 700 | ՌԻ — 7000 |
| Ը — 8 | Ձ — 80 | Պ — 800 | Փ — 8000 |
| Թ — 9 | Ղ — 90 | Ջ — 900 | Զ — 9000 |

Թվական այս համակարգը հայերս գործածել ենք մինչև 18-րդ դարի վերջերը՝ թեև 10—11-րդ դարից ծանոթ էինք արաբական կոչվող ներկայիս թվանշաններին, որոնք ծագմամբ հնդկական են:

Աղյուսակից երևում է հայոց թվական համակարգը ոչ թե տասնավորների համակարգի վրա էր հիմնված, ինչպես այսօր ընդունված է, այլ իննյակների:

Այժմ տեսնենք մեր հները ինչպե՞ս են օգտվել այդ համակարգից: Դիցուք անհրաժեշտ էր գրել 551 և 1984: Վերցնում էին 500 նշանակող տառը (Շ), ապա 50 նշանակողը (Մ) և 1-ը (Ա) և այդ տառերը շարում էին իրար կողք: ՇՄԱ: Նույնն էլ 1984 թ. համար՝ ՌՁԳ:

Որպեսզի նշված տառախումբը տարեթիվ հասկացվեր, երկու կողմերից առնում էին միջակետների կամ վերջակետի մեջ, իսկ վերևից դնում էին նշան (պատվի նշան): Օր.: ՇՄԱ: ՌՁԳ:

Մինչև այսօր էլ դարերը նշվում են մետրոպոլիտանային այբուբենով: Օրինակ՝ 4-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ դդ. գրելու փոխարեն հայերենում ընդունված է գրել Դ, Ը, ԺԸ, ԺԹ դարեր:

Ինչպես արդեն նկատեցինք, հայոց թվական համակարգը զրո նշան չի ունեցել: Եթե ցանկացել են գրել, ասենք, 1040, վերցրել են 1000 նշանակող տառը (Ռ) և կողքը դրել 40 նշանակող տառը (Խ) և ստացել 1040 (: ՌԽ):

Այժմ տեսնենք ինչպե՞ս կարելի է վերծանել մի խաչքարի արձանագրություն, ուր դիցուք գրված է. «Կանգնեցաւ զխաչս ի թվ. հայոց : ՈՒՋ.»: Մենք արդեն գիտենք, որ թեև Հայաստանում գործածվել են մի քանի թվարկություններ, բայց շինարարական արձանագրություններում, խաչքարերի ու տապանաքարերի վրա հիմնականում նշվում էր հայոց մեծ թվականը: Քանի որ հայոց մեծ թվականը սկսում է մ. թ. 552 թվին, ուստի 551 տարով միշտ փոքր է լինում մեր թվարկությունից: Հետևաբար : ՈՒՋ :-ն վերծանելու համար պետք է հիշյալ թվին (ՈՒՋ = 646), գումարենք 551: Տվյալ դեպքում : ՈՒՋ :-ն նշանակում է, որ խաչքարը կանգնեցվել է 646 + 551 = 1197 թվին:

Իսկ ավելի մեծ թվերը ինչպես են նշանակել: Հայոց թվական համակարգում միլիոն, միլիարդ, տրիլիոն և այլ հասկացություններ չեն եղել: Հազարից հետո եկող հաջորդ միավորը կոչվել է բյուր, որը 10 հազարն էր: Եվ ահա բյուրի միջոցով էլ ստացել են ավելի մեծ թվեր: Որպեսզի տվյալ տառը 10 հազար անգամ մեծանար, այդ տառի գլխին դնում էին V նշանը: Այսպիսով V նշանը ամեն մի տառի թվային նշանակությունը 10 հազարով մեծացրել է:

Օրինակ՝ Ա նշանակել է մեկ բյուր, այսինքն՝ 10 000, Ճ-ն, որը առանց բյուրի նշանի 100-ն է, բյուրի նշանով դառնում է մեկ միլիոն,



Ս. ՍԱՀԱԿ

Ռ-Գ՝ 10 միլիոն,
Ք-Գ՝ 90 միլիոն:

Մի խոսքով՝ վերևում բերված հայոց թվական համակարգը կարելի է արտահայտել բյուրով, որի դեպքում ամեն մի թիվ մեծանում է 10 հազար անգամ:

Միջնադարի հայ մաթեմատիկոսները¹ գործածել են նաև բյուրից շատ ավելի մեծ թվեր՝ իրենց հայկական անուններով: Այդ թվերն արտահայտելու համար հայերենն ունի Գունդ, Ավազ գունդ, Արքա գունդ և Կայսր գունդ հասկացությունները: Այս հասկացությունների թվային արժեքների մասին մատենադարանի մի ձեռագրում նշված է, որ՝

Մեկ գունդը հավասար է 10 հազար բյուրի (հարյուր միլիոն),

Մեկ Ավազ գունդը՝ 10 հազար գունդի (մեկ միլիարդ),

Մեկ Արքա գունդը հավասար էր տասը հազար Ավազ գունդի: Սա համապատասխանում է այժմյան տասը կվադրիլիոնին (10 000 000 000 000 000),

Մեկ Կայսր գունդը հավասար էր տասը հազար Արքա գունդի և համապատասխանում էր հարյուր կվինտիլիոնին (100 000 000 000 000 000 000):

Սա նշանակում է՝ հայկական թվային համակարգը ի վիճակի է եղել արտահայտելու շատ մեծ թվեր: Բայց ամենակարևորն այն է, որ մեր նախնիները գործածել են **թվական ինքնուրույն ենթահամակարգ՝ սեփական թվանուններով և տասնավորների, հարյուրավորների, հազարավորների յուրահատուկ կառուցվածքով:** Այսինքն՝ հայոց թվական համակարգը ևս մի առանձնահատուկ երևույթ է:

Անհրաժեշտ է նշել, որ թեև 5-րդ դարում ստեղծված հայկական այբուբենի թվային համակարգը զրո թիվը չի ունեցել, բայց մաթեմատիկայի զարգացման ավելի բարձր աստիճանում, երբ զրոն շատ մեծ նշանակություն ստացավ, մեր համարողները մեծ թվերով հաշվումներ անելիս, սկսեցին գործածել նաև զրո հասկացությունը: Ջրոյին ուշ միջնադարում անվանում էին նաև կետ: Այս տեսակետից, և ընդհանրապես հայկական թվականների նշանակության մասին պատկերացում կազմելու առումով, եզակի երևույթ է մարտիրոս Ղրիմեցու (մոտ 1620—1683 թթ.) մի քերթվածը: Այն ուշագրավ է նաև մաթեմատիկայի պատմության համար: Ստորև բերում ենք այդ բանաստեղծությունից մի հատված՝ բնագրով և զուգադիր աշխարհաբար թարգմանությամբ:

¹ Հնում հայերը մաթեմատիկական «Համարողական արվեստ» էին ասում, մաթեմատիկոսին՝ «Համարող»:

Ջրիրն որ ասաք, տասըն հազար,
 Է ստուգիւ ծերունեաց շար:
 Քառորդ կրկնեալ նոյնքան հազար,
 Նա բոլորին մին գունդ ճարտար:
 Նոյնագունակ իսկ և յարմար,
 ըզգունդն աւագ տեսցուք ի շար:
 Ջի սա ունի գերկրորդն դար,
 Երկտասան կէտից յարմար:
 Իսկ գունդըն արքայ դիմեաց ի սար,
 որոյ շաղի ելքն է դժուար:
 Գահաւանդակ յերրորդըն դար,
 Վեշտասան կետ սորայն ի շար:
 Յետ այսօրիկ զորեղաբար,
 Կայսրըն խմբիւք բազմահազար:
 Հզօրոք դիմեալ ելնէ ի ծայր,
 Քսան համար կետն որ ի շար:

Բյուրը, որ ասացինք, տասը հազարն է,
 Ստուգորեն ծերունիների շարքն է:
 Քառապատիկ կրկնելով նույնքան հազար,
 Կկազմի մի գունդ ճարտար:
 Նույնանման իսկ և հարմար,
 Ավագ գունդը տեսնենք շարված:
 Քանգի սա պահում է երկրորդ դարը
 տասներկու զրոների հարմար:
 Իսկ արքա գունդը դիմեց դեպի սարը
 Որի շավղի ելքը դժվար է:
 Գահավանդակը՝ երկրորդ դարում
 սրա շարքերը՝ տասնվեց զրո:
 Սրանից հետո զորեղաբար
 Կայսրն է՝ խմբերով բազմահազար:
 Հզորներով դուրս է եկել սահման,
 Շարքերը՝ քսան զրոներով (հաշված):

Թարգմանությունը՝ հանգուցյալ լեզվաբան
 ՍԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ



ՄԵՇԵԿԱԼ

(տակն է փետրվարի 7-ից մինչև մարտի 8-ը)

Հայոց տոմարի 7-րդ ամիսն է: Գրիգոր Տաթևացին, Անանիա Շիրակացին, Հովհաննես Իմաստասերը և ուրիշներ նշում են, որ մեհեկին կամ մեհեկանը Հայկի յոթ որդիներից մեկի անունից է ծագել: Կանական Կարդապետը մեհեկան անունը բխեցնում է մահ բառից: Նա գրում է, որ այդ ամսին բույսերն ու տնկիները ձյունածածկ և եղյամապատ լինելով, մահացածի նման են, դրանց աճը դադարում է, մեռյալ վիճակի մեջ են:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով այս ամսանունը ծագում է մահիկ բառից, որը նշանակում է նորալուսին: Ղ. Ալիշանը, նշում է, որ լուսնի պաշտամունքը հեթանոսական Հայաստանի տարածված պաշտամունքներից էր, կարծում է մեհեկան ամսանունը մահիկ բառից կարող էր ծագած լինել՝ մանավանդ, որ այդ ամսին հաջորդում էր արեգ ամիսը: Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանի (1848—1908), ֆրանսիացի հայագետ Է. Բենվիլիստի (1902—1980), Էդ. Աղայանի և Հ. Բաղայանի կարծիքով մեհեկան ամսանունը ծագել է հայոց Միհր աստծո անունից:

Մեր նախորդ գրույցներից արդեն գիտենք, որ աստղագիտությունը և դրա հետ սերտորեն առնչվող տոմարագիտությունը, գիտության հնագույն տեսակներից է: Իրոք՝ դեռևս մ. թ. ա. 4-րդ հազարամյակից սկսած՝ այն բավական զարգացած է եղել մայաների մեջ, Եգիպտոսում, Բաբելոնում, Ասորեստանում, ացտեկների երկրում (ապրել են այժմյան Մեքսիկայի տարածքում), Չինաստանում, Հայաստանում և այլ երկրներում:

Մեր թվականությունից մոտ 2700 տարի առաջ կառուցված Եգիպտական բուրգերի վրա պատկերված էր Օրիոնի (Հայկի) համաստեղությունը, Մեծ շան համաստեղության Սիրիուս աստղը (երկնքի ամենապայծառ աստղը):

Այժմյան Հարավ-արևելյան Մեքսիկայի, Հոնդուրասի և Գվատեմալայի տարածքում ապրած մայաները մ. թ. ա. 4-րդ հազարամյակում արդեն օրացույց ունեին:

Հայաստանի տարածքում՝ Սանահինից հայտնաբերված բրոնզե գոտի-օրացույցը վերաբերում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակին, որի վրա, իբրև շաբաթվա յոթ օրերի խորհրդանիշներ, պատկերված են Արևը, Լուսինը և անգն աչքով տեսանելի հինգ մոլորակները (Փայլածու, Լուսնաթագ, Արուսյակ, Երևակ և Հրատ): Դա մասնագետների կարծիքով լուսնաարեգակնային հնագույն օրացույցներից մեկն է աշխարհում: Աստղագիտական տեսակետից մեծ արժեք է ներկայացնում նաև Սևանի ավազանից հայտնաբերված արեգակնային համակարգությունը պատկերող մ. թ. ա. 10—9-րդ դարի թիթեղյա իրը: Այդ առարկայի ստորին մասում համեմատաբար խոշոր չափերով պատկերված է սնամեջ երկիրը՝ շրջապատված ջրերով ու օդով, իսկ դրանից վերև պատրաստված են յոթը լուսատուները: Ամենավերևի ճառագայթող սկավառակը մյուսներից ավելի մեծ է և հավանաբար խորհրդանշում է արեգակը:

Մեծամորում և Գեղամա լեռներում հայտնաբերված 4—3 հազարամյակներին վերաբերող քարերի վրա արված զանազան գծագրական պատկերները գիտնականների մի մասը համարում է երկնային քարտեզներ, իսկ աշխարհի առաջին երկաթածուլարանից՝ Մեծամորում պեղված մ. թ. ա. 3—2 հազարամյակի յոթ սանդուղքներ ունեցող փորվածքը՝ աստղադիտարան: Այդ վարկածը հավանական է, քանի որ ըստ տոմարագետներ Լ. Սվարցի, Մաունդերի, Վ. Օլկոտտի, Ֆլամմարիոնիի, Բ. Թունանյանի, Աշ. Աբրահամյանի և ուրիշների, համաստեղությունների կենդանակերպի անուն տալու (Մեծ արջ, Առյուծ և այլն) գաղափարը ծագել է Եփրատի հովտում և Արարատ լեռան շրջակայքում, մ. թ. ա. 3-րդ հազարամյակում:


Նույն գիտնականների կարծիքով երկնային ոլորտը համաստեղությունների են բաժանել նույնպես Հայաստանում և Փոքր Ասիայում: Վ. Օլկոտտը նույնիսկ տալիս է համաստեղություններին անուն տալու ժամանակը: Նրա կարծիքով այդ բանը տեղի է ունեցել մ. թ. ա. 2800 թ., այն երկրում, որի տարածքն ընկնում էր 36-ից 42 աստիճանների հյուսիսային լայնությունների միջև: Ինչպես գիտեք, պատմական Հայաստանի տարածքը ընդգրկում էր նաև ա՛յդ լայնությունները:

Բայց հին աշխարհի այդ տոմարագետներից շատ քչերի անուններն են մեզ հասել: Ինչպես ասվեց, գրավոր աղբյուրներից հայտնի տոմարի առաջին գործիչը Հայաստանի կառավարիչ կամ իշխան Հայկ Նահապետն էր, որը մ. թ. ա. 2492 թ. կարգել է հայոց տոմարը: Հնագույն տոմարագետների անուններ են պահպանվել նաև չինական աղբյուրներում: Ըստ այդ աղբյուրների, չին թագավորները աստղագետների հերթապահություն էին սահմանում, որպեսզի նրանք որոշեին արևի խավարման ժամանակը և գոլուշացնեին ժողովրդին: Եվ ահա մ. թ. ա. 2137 թ. Չինաստանում պետք է արեգակի խավարում լիներ: Չինական թագավորի աստղագետ-տոմարագետներ Խին և Խոն հարբած լինելով, խավարման ժամվա մասին տեղյակ չեն պահում ժողովրդին: Հանկարծակի խավարումը մեծ իրարանցում և խուճապ է հարուցում ժողովրդի մեջ: Այդ պատճառով թագավորը հարբած աստղագետներին գլխատել է տալիս:

Համեմատաբար շատ անուններ են հասել մ. թ. ա. առաջին հազարամյակից: Մ. թ. ա. 593 թ. Սոլոնը Հունաստանում առաջին անգամ լուսնային և արեգակնային օրացույցները համաձայնեցրել է իրար:

Մ. թ. ա. 5-րդ դարում ապրած հույն գիտնականներ Մետոնը և Եվթոմոնոսը առաջին անգամ որոշել են ամառային արևադարձի ժամանակը (ամառային արևադարձը տարվա այն ժամանակն է, երբ ցերեկը ամենաերկարն է, իսկ գիշերը՝ ամենակարճը: Իսկ ձմեռային արևադարձի ժամանակ գիշերն է ամենաերկարը, ցերեկը՝ ամենակարճը):

Արիստարքոս Սամոսատցին (320—250 մ. թ. ա.)՝ առաջին անգամ տվել է Կոպեոնիկոսի հայտնագործած արևակենտրոն համակարգի գաղափարը, որն այն ժամանակ խիստ հանդուգն է համարվել ու տարածում չի ստացել: Կոպեոնիկոսի արևակենտրոն համակարգի մասին վաղուցուցական ժամանակներում եղած պատկերացման պերճախոս օրինակ է նաև Հայաստանի պատմության պետական թանգարանում պահպանվող հին Հայաստանում պատրաստված, մ. թ. ա. 1—2 դարերին վերագրվող երկրակենտրոն համակարգի մանրակերտը: Հույն աստղագետ Եվդոկսը (մ. թ. ա. 7 դար) առաջինն է նկարագրել երկնքի համաստեղությունները: Նրա գրած երկհատոր աշխատությունը ակադեմիկոսի բանաստեղծ



Գեղամա լեռներից հայտնաբերված երկնքի շարտեզ

առտու Բ-Ե (մ. թ. ա. 9 դար) չափածոյի վերածելով, հասցրել է մեզ: ին նշանավոր աստղագետ Շի Շենը մ. թ. ա. 7 դարում կազմեց առաջին աստղային ցուցակը (807 աստղ): Մ. թ. ա. Բ դարի աստղագետ-տոմագետ Հիպպարքոսի ցուցակը արդեն պարունակում էր 1022 աստղ: Խոռո տոմարագետ էր Եգիպտոսից հրավիրված Սոզիգենեսը: Նա, ինչպես արդեն գիտենք, Հուլիոս Կեսարի հրամանով մ. թ. ա. 45 թ. հռոմեացիների համար կազմեց նրանց առաջին արեգակնային օրացույցը:

Հուլյն աստղագետ և տոմարագետ Հիպպարքոսը (մ. թ. ա. 190—125) առաջին անգամ բացահայտել է Արեգակի և Լուսնի շարժման օրինաչափությունները, որոշել Լուսնի հեռավորությունը Երկրից, բազմաթիվ տոմարական ու աստղագիտական բարդ հաշվումներով որոշել է 1022 աստղերի կոորդինատները, տվել աստղերի պայծառության չափերը (պայծառությունների ստորաբաժանումները) և այլն:

Հուլյն աստղագետ, մաթեմատիկոս, աշխարհագրագետ և տոմարագետ Կլավդիոս Պտղոմեոսը (մ. թ. Բ դար) իր «Ալմագեստ» աշխատությունում ավելի հանգամանորեն է զբաղվել ամառային ու ձմեռային արևադարձի խնդիրներով, ստեղծել է տիեզերքի կառուցվածքի մասին հին աշխարհի հռչակավոր երկրակենտրոն տեսությունը:

Խոշոր տոմարագետներ են եղել նաև Հայաստանում: Հնագույն շրջանի հայ տոմարագետների անուններ առայժմ չեն հայտնաբերվել: Մեր պատմագիրների աշխատություններից գիտենք միայն, որ հեթանոսական Հայաստանում տոմարով ու աստղագիտությամբ զգբաղվում էին քրմերը: Ինչպես ասվեց, Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկում նշվում է, որ Արտաշես Աշխարհակալը (մ. թ. ա. 189—160) կարգավորեց հայոց տոմարը: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Հայաստանում մ. թ. ա. 9 դարում ևս գոյություն է ունեցել ինքնուրույն տոմար, որը մ. թ. ա. Բ դ. առաջին կեսին Արտաշես Ա թագավորի հրամանով կատարելագործվել է:

Հայ առաջին տոմարագետների մասին ավելի ստույգ տեղեկություններ են պահպանվել մ. թ. Ե—Է դարերի մատենագիրների ու իմաստասերների երկերում: Այդ աշխատություններից պարզվում է, որ Զ դարի նշանավոր տոմարագետներից էր Աթանաս Տարոնացին: Նա հայոց կաթողիկոս Մովսես Եղվարդեցու առաջադրանքով ստեղծեց «Հայոց մեծ թվականը», որը, ինչպես գիտենք, սկսվում է 552 թվականից:

Բայց վաղ միջնադարի խոշորագույն տոմարագետը Անանիա Շիրակացին էր: Է դարի համաշխարհային գիտության այդ մեծ գործիչը նաև հայերեն թվաբանության առաջին դասագրքի հեղինակն է, իմաստասեր,

աստղագետ, օդերևութաբան, քարտեզագիր, աշխարհագրագետ, մատենագիր և երաժիշտ:

Անանիա Շիրակացին եվրոպացի գիտնականներից դարեր առաջ երկիրը զննածն է համարել, ճիշտ է բացատրել Լուսնի և Արեգակի խավարումները: Եւ հանճարեղ խորաթափանցությամբ ծովերի մակընթացություններն ու տեղատվությունները բխեցրել է Լուսնի ազդեցությունից, նշել, որ Լուսինը սեփական լույս չունի, այլ ստանում է Արեգակից, որ լույսի արագությունը անհամեմատ մեծ է ձայնի արագությունից և այլն: Անանիա Շիրակացին գրել է տոմարագիտական, տիեզերագիտական, թվաբանական ու իմաստասիրական բազմաթիվ երկեր: Գիտնականների մեծ մասը նրան է վերագրում հայերեն առաջին աշխարհագրական քարտեզը (Աշխարհացույց): Այս աշխատության մեջ Շիրակացին տեսականորեն հաշվարկել էր ամբողջ երկրագնդի աստիճանացանցը: Իհարկե, ըստ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի, գործնականում նա գծել էր միայն երկրագնդի այն մասի աստիճանացանցը, որը հայտնի էր վաղ միջնադարում (Երկրագնդի հյուսիսային 63°-ից մինչև հարավային 16° 25' զուգահեռականների ու 0°—180° միջօրեականների միջև ձգվող մակերևույթը): Ըստ Անանիա Շիրակացու աշխարհացույցի, երկրագունդը բաղկացած էր երեք մայրցամաքներից՝ Եվրոպա, Լիբիա և Ասիա: Նրա աշխարհացույցի վրա պատկերված էր միայն Ատլանտյան օվկիանոսը, որին անվանում էր «Արևմտյան օվկիանոս», իսկ Հնդկական օվկիանոսը՝ «Հնդկական ծով»: Քարտեզի վրա պատկերված էին նաև Միջերկրական, Սև ու Կասպից ծովերը:

Իր «Տիեզերագիտություն» աշխատության մեջ Անանիա Շիրակացին երկրի զննածնության մասին հետևյալն է գրում. «Եթե որևէ մեկը կամենա երկրի դիրքը պատկերացնելու համար... ակնառու օրինակ ստանալ, ինձ թվում է, հարմար օրինակը ձունն է: Ինչպես որ դրա դեղնուցը զննածն գտնվում է մեջտեղում, սպիտակուցը՝ շուրջը, իսկ կենտրոնը շրջապատում է չորս կողմից, ճիշտ այդպես էլ երկիրը գտնվում է մեջտեղում, օղը՝ դրա շուրջը, իսկ երկինքը շրջապատում է չորս կողմը»:

Լուսնի լույսի մասին Շիրակացին գրում է.

«Ես հավանություն եմ տալիս այն բազմաթիվ գիտնականների կարծիքին, ովքեր կարծում են, թե Լուսինը իր լույսը Արեգակից է ստանում»:


Անանիա Շիրակացու թվաբանական խնդրագրքի մասին պատկերացում տալու համար, ձեզ ներկայացնում ենք հիշյալ խնդրագրքից մեզ հասած 25 խնդիրներից մեկը: Այդ խնդիրները ոչ միայն գեղեցիկ են և հետաքրքիր, այլև վերջրած լինելով հայ ժողովրդի կենցաղից ու ապրելակերպից, պարունակում են պատմական, ճարտարապետական, քաղաքա-

ցիական և այլ կարգի շատ կարևոր տվյալներ: Օրինակ, եթե լուծեք ձեզ ներկայացվող խնդիրը, կարող եք պատկերացում կազմել, թե է դարում հայ ճարտարապետներն ու քարագործ վարպետները միջին մեծության եկեղեցին քանի օրում էին կառուցում, օրական քանի՞ շարք էին շարում, քանի՞ քար էին դնում մի շարքի մեջ և այլն:

Ահա այդ խնդիրը:

«Ես եկեղեցի էի կառուցում: Վարձեցի մի որմնադիր, որը օրական 140 քար էր շարում: Աշխատանքը սկսելուց 39 օր հետո վարձեցի մեկ ուրիշ որմնադիր, որը օրական 218 քար էր շարում: Երբ երկրորդ որմնադրի շարած քարերի թիվը հավասարվեց առաջինին, եկեղեցի կառուցվեց: Իմացիր թե երկրորդ որմնադիրը քանի՞ օրում հավասարվեց առաջինին»:

Շիրակացին 532 տարվա համար կազմել է հայկական անշարժ տոմարի աղյուսակ, որը թեև իր ժամանակի ամենակատարյալ տոմարն էր, բայց ցավոք չի գործածվել:



ԼՐԵԻ

(ըստ սարկավագադիր անշարժ տոմարի,
տեղ է մարտի 9-ից ապրիլի 7-ը)

Հայոց տոմարի 8-րդ ամիսն է: Միջնադարի մեծ իմաստասեր, տընտեսագետ, նկարիչ, երաժշտագետ և հանրագիտակ, Տաթևի համալսարանի ռաբունապետ (ռեկտոր) Գրիգոր Տաթևացին (1346—1409) իր «Գիրք հարցմանց» հանրագիտարանում գրում է, թե Արեգը Հայկ նահապետի դուստրերից մեկի անունն էր: Նույնն են ասել նաև Անանիա Շիրակացին և Հովհաննես Իմաստասերը:

Վանական Վարդապետի կարծիքով Արեգ ամսանունը ծագում է Արեգակ բառից, քանի որ տարվա այդ եղանակին Արեգակի գորությամբ բույսերը առավելագույն չափով զարթնում և փթթում են: Արեգ ամսանունը Արև բառից են ծագեցնում Ղևոնդ Ալիշանը, Հրաչյա Աճառյանը, Է. Բենվենիստը և ուրիշներ: Արեգ է կոչվել նաև յուրաքանչյուր ամսվա առաջին օրը:

Արդի գիտնականների մեծամասնությունն այդ ամսանվան ծագումը կապում է հայոց հեթանոսական դիցուհի Արեգ աստվածուհուն: Այսինքն՝ ճշտվում է հայոց հին մատենագիրների այն ստուգաբանությունը, ըստ որի Արեգը Հայկ նահապետի դուստրն էր:

Ազգագրական, մատենագրական, բանահյուսական ու հնագիտական բազմաթիվ աղբյուրների վկայությամբ, արեգակը հին Հայաստանի ամենատարածված պաշտամունքներից էր: Մովսես Խորենացին գրում է, որ Վաղարշակ թագավորը մ. թ. երկրորդ դարի կեսերին «Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսինն և իր նախնիներին»: Ղևոնդ Ալիշանի կարծիքով քերթողահոր հիշատակած արձանները Միհրի կերպարանքով կիսանդրիներ պիտի եղած լինեին: Ըստ ժողովրդական մի ավանդության, Արևը մի առյուծի մեջքին նստած սլանում է երկնականարով... Առյուծն իր վիթխարի թրով Արևին պաշտպանում է քաջքերից»: Այս ավանդությունը համեմատելով պեղումներից հայտնաբերված հայոց Հայկ (Խալդ) աստծո (մ. թ. ա. Ը դ.) հայտնի պատկերին, Վ. Բորյանը կարծում է, թե Արև աստծո արձանը հաստատված է եղել Առյուծ-Պատվանդանի վրա: Արևապաշտությունը այնպիսի խորը արմատներ էր գցել հայ ժողովրդի մեջ, որ քրիստոնեությունը երկար ժամանակ չէր կարողանում մոռացության տալ այն: Օրինակ, միջնադարի մեծ մտածող Գրիգոր Մագիստրոսը ժԱ դարի կեսերին գրում է, որ արևապաշտները իրենց արևորդի անվանելով, թեև արտաքնապես քրիստոնյա էին ձևանում, բայց մնացել էին հին կրոնին: Ներսես Շնորհալին (1098—1173) արևորդիներին դարձի բերելու համար հատուկ գրություն է հղում քրիստոնեական եկեղեցու առաջնորդներին՝ հորդորելով առանց բռնությունների, համոզելու միջոցով դարձի բերել աղանդավորներին: Պատմական աղբյուրների վկայությամբ նույնիսկ ժԴ դարում, այսինքն՝ քրիստոնեությունը ընդունելուց տաս դար հետո, Հայաստանում արևապաշտներ էին ամբողջական գյուղեր, որոնցից չորսը Լենգ Թեմուրը իսպառ ոչնչացնում է: Միաթար Ապարանցու տվյալներով, հայ արևորդիները աղոթելիս դեմքերը դեպի արևն էին դարձնում՝ արեգակի դեմ բռնելով բարդու, շուշանի և բամբակեցու սրբազան ոստեր: Նույն հեղինակը գրում է, որ հայ արևորդիների առաջնորդները կոչվում էին ՀԱՋԸՐՊԵՏ:

Հին հայերի սիրված աստվածություններից էր նաև Լուսինը, որի պաշտամունքը ևս երկար ժամանակ պահպանվել է ժողովրդի մեջ: Հայկական միջնադարյան մի Տոմարագրքի մեջ լուսինը պատկերված է երկու ծովային գոմեջների տեսքով: Լուսը մերթ մտնում է մեկի, մերթ մյուսի բերանը, որով և լուսավորում է երկիրը: Բայց մեծ մասամբ լուսինը, ինչպես և Արևը, պատկերվում են մարդու կերպարանքով: Լուսնի աստվածությունը հին հայերը կոչել են Փառնակ: Լուսնի պաշտամունքի ծիսակատարությունները գլխավորում էին մոզերը, որոնք, ըստ Ե դարի հայ մեծ իմաստասեր Եգնիկ Կողբացու, հավատում էին, թե դյուլթելով կարելի է Լուսինը իջեցնել երկիր: Ե—ԺԱ դարի հայ իմաստասերներ ու պատմա-

գիրքեր եզնիկ Կողբացու, Հովհան Մանդակունու, Չազար Փարպեցու, Գրիգոր Մագիստրոսի և այլոց աշխատություններից երևում է, որ Լուսնի պաշտամունքը քրիստոնեության մուտքից դարեր հետո էլ չի վերացել Հայաստանում: Ուստի պատահական չէ, որ մեր ժողովուրդը Արեգակին և Լուսնին նվիրված բազմաթիվ ավանդություններ է ստեղծել:

Այդ կարգի ավանդություններից մեկը այսպես է պատմում: Արևը և Լուսինը քույր ու եղբայր էին: Արևը մի հրաշագեղ օրիորդ, Լուսինը՝ մի քաջ պարմանի: Ծնողները որոշում են իրենց զավակներին ուղարկել հերթապահության, աղջկան՝ գիշերը, տղային՝ ցերեկը: Աղջիկ-Արևը հրաժարվում է գիշերով դուրս գալ, ասելով թե վախենում է: Ստիպված Լուսնյակին են ուղարկում գիշերը հսկելու: Որոշ ժամանակ անց Արևը ասում է, թե ինքը ցերեկով ամաչում է դուրս գալ, որովհետև բոլորը նայում են իրեն: Ծնողները նրան խորհուրդ են տալիս մի բուռ ասեղ պահել ձեռքը, որ նայողի աչքերը ծակի: Այստեղից՝ Արևի շողերը: Օրերից մի օր Լուսնյակի մայրը լավաշի համար խմոր է հունցելիս լինում: Չարածի Լուսինը չարություն է անում՝ խանգարելով մորն աշխատել: Մայրը ջղայնանում է՝ խմորոտ տաշտաքերով խփում է տղայի երեսին: Մի կտոր խմոր կպչում է տղայի դեմքին: Այստեղից՝ Լիալուսնի մեջ երևացող բծերը:

• • •

Քանի որ տոմարագիտությունը սկսվում է ժամանակի չափումից, մասնագիտական գրականությունից քաղած օրինակներով տեսնենք հնում, երբ ժամանակի չափման ներկայիս ճշգրիտ սարքերը չկային, ժամանակը ի՞նչ միջոցներով են չափել:

Գիտության հայտնի ժամանակի չափման հնագույն միջոցը արեգակնային ժամացույցն է: Այն միջազգային բառով կոչվում է գնումն:

Տեսնենք արևի ժամացույցը ի՞նչ զարգացում է ունեցել նախամարդուց մինչև մ. թ. ա. 3—2-րդ հազարամյակը:

Բուրոս գիտենք, որ առարկաների ստվերները արևածագին և արևամուտին սովորականից երկար են լինում:

Երբ արեգակը հետգհետե բարձրանում է դեպի զենիթ, ստվերը կամաց-կամաց կարճանալով հասնում է նվազագույնի: Հետո, երբ Արեգակը թեքվում է դեպի արևմուտք, ստվերը հակառակ կողմից դարձյալ սկսում է երկարել՝ մայրամուտին հասնելով նվազագույնի: Օրվա այն ժամին, երբ արեգակը գտնվում է զենիթում, ստվերի երկարությունը հասնում է նվա-

զագույնի: Օրվա այդ պահը հնուց ի վեր կոչել են կեսօր: Այսինքն՝ օրը կես է դառել:

Անհիշելի ժամանակներից Հայաստանում մարդու ստվերը եղել է մեր նախնիների ամենաճշգրիտ և գործնական ժամացույցը: Նրանք իրենց ստվերի երկարությամբ կամ կարճությամբ որոշում էին օրվա ժամը:

Հնդիկներին ժամացույց է ծառայել ձեռնափայտը: Հնդիկ ճանապարհորդները իրենց ձեռքի զավազանը մերթ ընդ մերթ խրում էին հողի մեջ և ճշտում ժամը: Քաղաքակրթության զարգացման հետագա աստիճաններում արեգակնային այս պարզագույն ժամացույցը կատարելագործվել է գրեթե առանց նշանակալի փոփոխության հասել մինչև մեր օրերը: Այդ կատարելագործված ժամացույցը հետևյալ պարզ տեսքն է ունեցել: Կլոր, հարթ մակերեսի ճիշտ կենտրոնում ամրացրել են մի անշարժ ձող և մակերևույթի վրա կատարել 12 համակարալած բաժանում: Արեգակը արևածագից արևմուտք դառնալուն զուգընթաց շարժվել է նաև ձողիկի ստվերը, որով և չափել են ժամանակը: Այս տեսակի ժամացույցների՝ գիտությանը հայտնի հնագույն նմուշները վերաբերում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակին: Նման ժամացույցներ էին գործածում եգիպտացիները, բաբելացիները, հայերը, հույները և այլ հին ժողովուրդներ: Օրինակ՝ հույն մեծ իմաստասերներ Անաքսիմանդը (մ. թ. ա. 2 դար), իսկ ավելի ուշ՝ Արիստոտելը (մ. թ. ա. 7 դար) հատուկ զբաղվել են արեգակնային ժամացույցը կատարելագործելու հարցերով: Գոյություն են ունեցել եռանկյունի, բրգաձև ու օղակաձև արեգակնային ժամացույցներ: Հայաստանում տարածված էր օղակաձև-ուղղաձիգ ժամացույցը, իսկ Եգիպտոսում՝ բրգաձևը: Հայաստանում արեգակնային ժամացույցներ են պահպանվել Ե—ԺԳ դարերի վանական համալիրներ Երերույքի, Ջվարթնոցի, Բջնիի, Կեչառիսի ու այլ տաճարների վրա: Նշանավոր է Ջվարթնոցի ժամացույցը (618 թ.), ինչպես նաև հետագա դարերի եկեղեցիների ու այլ հուշարձանների վրա փորագրված ժամացույցները (Դսեղի, Ծաղկածորի, Դիլիջանի, Նոյեմբերյանի, Արցախի ու այլ վայրերի վանքերի պատերին):

Աշխարհի ամենամեծ արեգակնային ժամացույցը գտնվում է Ֆլորենցիայի (Իտալիա) տաճարի վրա՝ 92 մ բարձրությամբ (1462 թ.):

Քանի որ արեգակնային ժամացույցը կարելի էր գործածել միայն ցերեկը, ուստի մարդիկ մտածել են այլ տիպի ժամացույցներ ստեղծելու մասին: Այդպիսին է եղել ջրի ժամացույցը, որը կոչվել է կլեպսիդրիս: Ջրի ժամացույցը Եգիպտոսում հայտնի է եղել մեզանից մոտ 3,5 հազար տարի առաջ: Ջրի պարզագույն ժամացույցը բաղկացած էր 2 անոթից: Վերի անոթի հատակի փոքր անցքից ջուրը հավասարաչափ թափվում էր մյուս



Հաղարծնի արևի ժամացույցը, ԺԳ դ.

անոթի մեջ: Ժամանակը որոշվում էր այնտեղ լցված ջրի մակարդակով: Հետագա դարերում ստեղծել են նաև ավազի ժամացույցը: Այս տեսակի ժամացույցների մասին հնագույն տեղեկությունը վերաբերում է մ. թ. Ը դարին: Եվրոպայում այն սկսել է տարածվել ԺԴ—ԺԵ դարերում: Ավազի ժամացույցը ևս շատ պարզ կառուցվածք ունի: Երկու ապակե սրվակներ իրար կցված են շատ նեղ անցքով: Վերևի սրվակի մեջ լցնում էին մանր ավազ և ուղղաձիգ կախում որևէ հենարանից: Ավազը կամաց-կամաց հոսում էր ստորին սրվակը: Հենց որ ներքևի սրվակը լցվում էր, շուտ էին տալիս գլխիվայր և դարձյալ դնում այնպես, որպեսզի ավազով լցված կեսը միշտ վերի մասում լինի:

Բայց թե՛ արեգակնային, թե՛ ջրի ու ավազի ժամացույցները բախարար կատարյալ չէին ժամանակի ճշգրիտ չափումների համար: Գիտության զարգացման հաջորդ փուլում հայտնաբերվում է մեխանիկական ժամացույցը, որը մարդկությանը ծառայում է առաջօր: Այդ ժամացույցը ցույց էր տալիս օրվա բոլոր ժամերը:

Մեխանիկական հնագույն ժամացույցը, ըստ որոշ գիտնականների, ստեղծել է չինացի Լիանգ Լինգ Սանը մ. թ. 724 թ.:

Եվրոպայում չինացիներից անկախ, մեխանիկական ժամացույցի գյուտարարը համարվում է իտալացի աստղագետ և մաթեմատիկոս Հերբերտ Աուրիլիացին՝ հետագայում Հռոմի Սիլվեստր Բ պապը: Այդ գյուտը կատարվել է մոտ 1000 թվին: Մեխանիկական ժամացույցը Եվրոպայում տարածվում է ԺԴ—ԺԵ դդ.: Այն սկզբնապես շատ մեծ չափերի է եղել, ուստի տեղադրվել է քաղաքների ամենատեսանելի ու բարձր շենքերի վրա: ԺԵ դարից սկսած, երբ կատարելագործվելուց հետո դրանց չափերը փոքրացան, սկսեցին տեղադրել նաև տներում: Գրպանի ժամացույցի գյուտը պատկանում է նյուրնբերգի (Գերմանիա) գիտնական Փ. Հենլայնին (1504 թ.): Մինչև ժՋ դարը այդ ժամացույցները միայն ժամ ցույց տվող սլաք ունեին: ԺՋ դարից սկսած ժամացույցների վրա երևում է նաև րոպե ցույց տվող սլաքը: Վայրկյանացույց ունեցող գրպանի ժամացույցների արտադրությունը սկսվում է միայն ԺԸ դարի 2-րդ կեսին:

Հայ իրականության մեջ տնային և գրպանի ժամացույցները մուտք են գործել Եվրոպայի ու Լեհաստանի հայկական գաղթավայրերում ԺԵ—ԺՋ դարերում:

Հետաքրքիր է, որ ձեռքի առաջին ժամացույցները երևան եկան միայն 1919 թ.: 1952 թ. Եվրոպայում սկսվում է էլեկտրական ժամացույցների արտադրությունը: Այս ասպարեզում արդի գիտության վերջին խոսքը էլեկտրոնային կամ կվարցային կոշվող ժամացույցներն են, որոնք

առավելագույն ճշգրտությամբ չափում են թե՛ արեգակնային, և թե՛ աստղային ժամանակը:

Ժամանակի չափման մյուս միջոցը օրացույցն է, որը մարդկությունը գործածում էր հազարամյակներ ի վեր: Մենք արդեն գիտենք, որ մ. թ. ա. 4-րդ հազարամյակից սկսած հին ացտեքները, եգիպտացիք, հնդիկները, բաբելացիք, հայերը և այլ ժողովուրդներ գործածում էին գաճազան պարզագույն օրացույցներ: Հնում օրացույցները հիմնականում ծիսական նշանակություն են ունեցել, ցույց են տվել զանազան տոների ու արարողությունների օրերը և կոչվել են տոնացույց:

Մեզ հասած հայկական առաջին օրացույցը վերաբերում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերին: 1946 թ. Սանահին գյուղում պեղումներից հայտնաբերվել է երեքհազարամյա մի բրոնզե գոտի, որը հնագետների և տոմարագետների կարծիքով ծառայել է նաև իբրև օրացույց: Հին Հայաստանում օրացույց կազմելու մենաշնորհը քրմերի ձեռքն էր, նշում էին հեթանոսական դիցարանի աստվածներին նվիրված օրերն ու այլ տոները: Քրիստոնեությունը պաշտոնապես ընդունելուց հետո (301 թ.) այդ օրացույցները շարունակում էին տոնացույց կոչել: Այդ շրջանի առաջին տոնացույցը կազմել է Գրիգոր Լուսավորիչը, 4-րդ դ. սկզբին: Այստեղ նշվում էր քրիստոնեական բոլոր տոները, այդ տոներին կատարելիք ծիսակատարությունների կանոնները և այլն:

Հայոց օրացույց-տոնացույցը շոշափելի բարեփոխության են ենթարկում 5-րդ դարի խոշոր գիտնական-իմաստասերներ Սահակ Պարթևը և Հովհան Մանդակունին: Տոնացույցներ են կազմել կամ բարեփոխել նաև Ներսես Շնորհալիկն և ուրիշներ: Բայց հիշյալ օրացույցները հիմնականում ծառայել են եկեղեցուն: Աշխարհիկ օրացույցները թե՛ հայ իրականության մեջ, և թե՛ Եվրոպայում մեծ տարածում ստացան տպագրության գյուտի հայտնագործումից հետո: Գերմանացի մեծ գիտնական Գուտենբերգի հայտնագործությունը (մոտ 1450 թ.) հնարավորություն տվեց տպագրել միանգամից հարյուրավոր օրացույցներ, որոնք անհամեմատ ավելի հեշտ էր հայթայթել:

Հայերեն առաջին տպագիր օրացույցը լույս է տեսել Վենետիկում, 1513 թ., 300 օրինակով: Այն կոչվում է «Պարզատումար» և հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտի տպագրած առաջին գրքերից մեկն է: Սա մի անգամ ևս ցույց է տալիս, թե մեր մեջ օրացույցը ինչ մեծ պահանջարկ և կարևորություն է ունեցել:

Հայերեն առաջին մեկ էջանոց պատի օրացույցը դարձյալ լույս է տեսել Խտալիայում մեր տպագրության սկզբից 53 տարի հետո, 1562 թ.:

Այն կոչվում է «Խառնայիմբուր տումարի, գեղեցիկ և պիտանի», տպագրիչն էր մեր տպագրության երկրորդ մեծ երախտավորը՝ Աբգար դպիր Թոքատեցին: Նա իր երկրորդ օրացույցը («Պարզատումար») լույս է ընծայել 1568 թ., Պոլսում:

Ինչպես ասվեց, 1584 թ. Հովհաննես Տերգնեցին Հռոմում հրատարակում է «Գրիգորյան տումար» օրացույցը, որը նոր տոմարով լույս ընծայված աշխարհի առաջին օրացույցներից էր:

Ժե դարից սկսած հայերեն տպագիր օրացույցն արդեն սովորական երևույթ է դառնում: 1757 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանությունը սկսում է ամենամյա մի օրացույցի հրատարակություն, որին վիճակված էր դառնալու աշխարհի ամենատարածվածը և ոչ մի անգամ չընդհատված օրացույցը: Այն կոչվում էր. օրացույց և գուշակության օդոց»: Մինչև այսօր լույս տեսնող այս օրացույցը միաժամանակ համարվում է աշխարհի ամենատարածված պարբերական հրատարակությունը: Երկրորդը ԳԿԸ Գոթա քաղաքում գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակվող «Գոթայի ավանախն է»: Այս օրացույցի առաջին հատորը լույս է տեսել 1763 թ., անընդհատ շարունակվել է մինչև 1944 թ., այնուհետև, 12 տարի դադարելուց հետո, 1956 թ. կրկին վերահրատարակվում է:

Հայերեն երկրորդ երկարակյաց օրացույցը Վիեննայի Մխիթարյաններինն է, որը հրատարակվում է 1841 թ. մինչև այսօր: Մեր երրորդ երկարակյաց օրացույցը Պոլսի ազգային ս. Փրկիչ հիվանդանոցի հրատարակությամբ 1860 թ. մինչև այսօր լույս տեսնող «գրպանի օրացույցն» է:

Հայ օրացույցի պատմության մեջ առանձնակի դեր ունի Թեոդիկը (1873—1928): Նա Պոլսում, Վենետիկում, Վիեննայում և Փարիզում, կնոջ՝ Արշակուհի Թեոդիկի հետ, 1907—1929 թթ. 19 գիրք է տպագրել՝ 13 տարիների համար: Այդ օրացույց-տարեգրքերը 296-ից 736 էջանոց սովորատորներ են: Փաստորեն հանրագիտական թեքում ունենալով, դրանք տեղեկություններ են պարունակում թե՛ տարիների, ամիսների, երկնային երևույթների, մթնոլորտային տեղումների, և թե՛ հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգագրության, բանահյուսության, արվեստի, գրականության և բանասեր Հայկ Խաչատրյանի կարծիքով, որի աշխատություններից քաղել ենք վերոհիշյալ տվյալները, 1513 թ. մինչև 1973 թիվը՝ 460 տարում, աշխարհի բազմաթիվ երկրներում լույս է տեսել ավելի քան 1000 անուն հայերեն օրացույց և տարեցույց:



Օրացույց և գուշակություն օրոց, 1836 թ., Վենետիկ



ԱՔԵԿԱԼ

(ըստ Հովհաննես Սարկավազի անշարժ տոմարի, հայոց տոմարի 9-րդ ամիսն է, տեղ է ապրիլի 8-ից մայիսի 7-ը)

Անանիա Ծիրակացին գրում է, թե այս ամիսը հնում կոչվելիս է եղել Հարավանց: Հարավանց անունը, շարունակում է Ծիրակացին, ծագում է տարվա այդ եղանակին տարածված աշխատանքների բնույթից:

Ղևոնդ Ալիշանը նշում է, որ միջնադարի որոշ մտածողների կարծիքով այս ամսանունը կոչվել է նաև «Հարուանց», որը խոտ հարել (խոտ հնձել, քաղել) է նշանակում:

Ըստ Քերովյե Պատկանյանի, ահեկան ամսվա անունը կապված է հուր և կրակ նշանակող բառերի հետ: Գրիգոր Տաթևացու կարծիքով Ահեկին Հայկ ճահապատի երեք դուստրերից մեկի անունն էր:

• • •

Մենք արդեն գիտենք, որ է դարի մեծ մտածող Անանիա Ծիրակացին 532 տարիների համար կազմել էր հայկական անշարժ օրացույց, որը չի գործածվել: Բայց անշարժ կատարյալ տոմար կազմելու գաղափարը մնում

է հայ տոմարագետների ուշադրության կենտրոնում: Եվ ահա այդ գործը ձեռնարկում է մեր տոմարագիտության բոլոր ժամանակների մեծագույն դեմքը՝ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: «Սարկավագը» ստորին աստիճանի եկեղեցական կոչում է, իսկ «Իմաստասեր» նշանակում է «փիլիսոփա»:

Բանաստեղծ, իմաստասեր, մատենագիր, տիեզերագետ, տոմարագետ, կրթական գործիչ և երաժիշտ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը սովորել է Հաղպատի բարձրագույն դպրոցում, ապրել և ստեղծագործել է այդտեղ, ուր և թաղված է: Հովհաննես Իմաստասերի առասպելական աշխատասիրության մասին ԺԴ դարի խոշոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին բերում է մի հետաքրքիր դրվագ: Հաղպատում սովորելիս, ուսուցիչը աշակերտներին տանում է մոտակա քարայրում գտնվող ձեռագրատունը, որպեսզի վարժվեն գրչության արվեստի մեջ: Աշակերտները մինչև ճաշ պարապելուց հետո դուրս են գալիս՝ հետևներից փակելով ձեռագրատան դուռը: Երեկոյան տեսնում են Հովհաննեսը չկա: Ամենուր փնտրում, չեն գտնում: Մի քանի օր հետո, երբ կրկին մտնում են քարայր աշխատելու, տեսնում են Հովհաննեսը ձեռագրեր է կարդում: Երբ նրան զարմացած հարցնում են ի՞նչ է կերել ու խմել այդ օրերին, նա ցույց է տալիս իր կարդացած մատյանները և ասում. «սրանք են եղել իմ կերակուրն ու ըմպելիքը»:

Հովհաննես Իմաստասերը Հաղպատի դպրոցն ավարտելուց հետո մեկնում է Անի, որտեղ դեռևս Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը համալսարան էր հիմնել: Դառնալով Անիի համալսարանի ռաբունապետը, Հովհաննես Իմաստասերը այդ համալսարանի ուսումնական ծրագրերի մեջ է մտցնում նաև բնական գիտություններ: Ծուռով Անիի բարձրագույն դպրոցի և Հովհաննես Իմաստասերի հոչակը տարածվում է Հայաստանով մեկ և հարևան երկրներում: Ամեն կողմից պատանհիներ են գալիս նրան աշակերտելու:

Հովհաննես Սարկավագ Իմաստասերը գրել է նաև բանաստեղծություններ և երգեր, որոնք մեր միջնադարյան քերթության և երաժշտության լավագույն նմուշներից են: Բայց նրա ժառանգության ամենածանրակշիռ մասը տոմարն է, որին նա նվիրել է իր գիտական բազմաթիվ աշխատություններից 17-ը: Ուստի պատահական չէ, որ Հովհաննես Իմաստասերը, տոմարական նոր համակարգի ստեղծողը եղավ հայ իրականության մեջ:

Ինչպես արդեն գիտենք, Աթանաս Տարոնացու կազմած 532 տարվա տոմարը 1084 թ. լրանում էր: Այդ ընթացքում տոմարագիտությունը բավական առաջ էր գնացել, հայոց տոմարի և հուլյան տոմարի միջև առա-

ջացել էին բազմաթիվ տարբերություններ, շփոթություններ էին առաջացել նաև տոմարական հաշվումների մեջ: Մեծ դժվարություններ էին ծագել նահանջ տարվա և «իսկական» տարվա տարբերությունները ճիշտ որոշելու և մանավանդ շրջակա ազգերի տոմարներին զուգադրելու գործում:

Եվ ահա Հովհաննես Իմաստասերը ձեռնարկում է այս խառնաշփոթությունը վերացնելու չափազանց դժվար գործը: Նա խիստ բարդ հաշվումներով կարողացավ կանոնավորել վերոհիշյալ տարբերությունները, 532 տարվա համար կազմելով նոր անշարժ տոմար՝ մինչև 1616 թ.: Մեծ գիտնականը կատարեց ևս մի շատ կարևոր գործ. նա հայոց Ամանորը փոխադրեց օգոստոսի 11-ին, այսինքն՝ վերականգնեց հին հայկական տոմարի Ամանորը՝ Նավասարդի 1-ը, և հիմնեց հայոց նոր թվարկությունը, որը սկսվում էր 1084 թ.: Այս նոր թվարկությունը կոչվեց «Հայոց փոքր» կամ «Սարկավագադիր» (սարկավագից դրված, սահմանված) թվական, որը «Հայոց մեծ թվականության» հետ զուգահեռ գործածվել է մինչև ԺԸ դարի վերջերը:

Որպեսզի մի փոքր պատկերացում կազմենք Հովհաննես Իմաստասերի կատարած դժվարագույն և բարդ հաշվումների մասին, միայն մի օրինակ բերենք:

Նա իր տոմարական աշխատություններից մեկում, որը կոչվում է «Խառնախորան», կազմել է աղյուսակներ, որոնց մեջ հայկական տոմարի բոլոր օրերը մեկ առ մեկ զուգադրված են հռոմեական, հունական, պարսկական, ասորական, եբրայական, արաբական, մակեդոնական, եգիպտական, եթովպական, աթենական, բյուզանդական, կապադովկիական, ալվանական ու վրացական տոմարների տարվա բոլոր օրերի հետ: Այսինքն հայկական տոմարը նա համեմատության մեջ է դնում աշխարհի 14 ժողովուրդների տոմարների հետ: Սա կնշանակի այսօրվա համաշխարհային տոմարի պատմաբանները Հովհաննես Սարկավագի աշխատությունները չեն կարող շրջանցել, որովհետև դրանք տարբեր ժողովուրդների տոմարների բաղդատական ուսումնասիրությունների համար եզակի աղբյուրներ են: Ահա թե ինչու հայ մեծ տոմարագետի աշխատությունները համաշխարհային նշանակություն ունեն և նրան իրավամբ համարում են միջնադարի տոմարագիտական մտքի գագաթներից:

Քանի որ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի կազմած անշարժ տոմարը տևելու էր մինչև 1916 թ., ուստի անհրաժեշտ էր համաշխարհային տոմարագիտության նվաճումների օգտագործմամբ կազմել նոր տոմար:



Ս. ՍՆՎԱՏԵՍ ԽՈՐԵԱՏԻ

Մոլորակների հին հայկական
գաղափարագրերը

| | |
|----------------------|----------|
| ♀ ♂ ♃ ♄ ♅ ♆ | Փայլածու |
| ♁ ♀ γ ♂ | Արուսյակ |
| ♃ ♄ | Լուսին |
| ♃ ^m ♃ ♂ ♃ | Հրատ |
| ♃ ♃ ♃ ♃ | Լուսնթագ |
| ♃ ♃ ♃ ♃ | Երևակ |
| ♃ ♃ ♂ ♃ | Արեգակ |

Տասներկու կենդանակերպի հին
հայկական գաղափարագրերը

| | |
|-----|-----------|
| ♄ ♄ | խոյ |
| ♄ ♄ | ծուլ |
| ♃ ♃ | Եկաւոր |
| ♃ ♂ | Խեցգետին |
| ♃ ♃ | Առիւծ |
| ♃ ♃ | Կոյս |
| ♃ ♃ | Կշիռ |
| ♃ ♃ | Կարիճ |
| ♃ ♃ | Աղեղնաւոր |
| ♃ ♃ | Այծեղջիւր |
| ♃ ♃ | Ջրհոս |
| ♃ ♃ | Չուկն |

Այս Գաշխատանքը ստանձնում է ժե դարի խոշոր տոմարագետ, իմաստասեր և գիտնական Ազարիա Ջուղայեցին: Նա, ինչպես երևում է մականունից, Պարսկահայքի Ջուղա հոյակերտ ու հայաբնակ քաղաքից էր: Քանի որ Հայաստանի մի մասը այդ ժամանակ գտնվում էր Պարսկաստանի գերիշխանության ներքո, իսկ այդ երկրի Ամանորը պաշտոնապես մարտի 21-ին էր, Ազարիա Ջուղայեցին հարկ համարեց հայոց Այվանորն ու տոմսի՞րը զուգորդել պարսկականին: Այս քայլը դրոշակի հիմքեր ուներ: Պարսկահայ լայն զանգվածները մոռացել էին հայկական ամսանունները և դրանց՝ փոխարեն գործածում էին պարսկականը (շամս, ցադար, թարա, դամար և այլն)՝ ճիշտ այնպես, ինչպես այժմ մենք գործածում ենք հուլյան տոմարի ամսանունները: Բացի այդ՝ պարսկական ու հայկական տոմարների մեծ տարբերությունները բազմաթիվ դժվարություններ էին հարուցում քաղաքացիական, առևտրա-տնտեսական և մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Ուստի անհրաժեշտ էր կարգավորել այդ հակասությունները, և Ազարիա Ջուղայեցին ձեռնարկում է մեր տոմարի բարեփոխման գործը: Նա ևս իր տոմարը կազմում է 532 տարիների համար: Տարին ուներ 13 ամիս, 30-ական օրով: Վերջին ամիսը ուներ 5 կամ 6 օր՝ նայած տարվա բնույթին: Նահանջ տարիներին 13-րդ ամիսը 6 օր ուներ, իսկ սովորական տարիներին՝ 5 օր:

Ազարիա Ջուղայեցին փոխում է նաև հայերենին խորթ պարսկերեն ամսանունները: Բայց նա ոչ թե վերականգնում է մեր հին ամսանունները, այլ տարվա եղանակների ժամանակին համապատասխան, հորինում է նոր անուններ:

Ահա Ազարիա Ջուղայեցու ամսանունները, որոնք համապատասխանում են սվյալ ամսին հատուկ բնության երևույթներին.

1. Յողաբեր — տևում էր մարտի 21-ից ապրիլի 19-ը
2. Ծաղկավետ « — » — ապրիլի 20-ից մայիսի 19-ը
3. Գետահոս « — » — մայիսի 20-ից հունիսի 18-ը
4. Պտղաբեր « — » — հունիսի 19-ից հուլիսի 18-ը
5. Առատահոս « — » — հուլիսի 18-ից օգոստոսի 17-ը
6. Գոհություն « — » — օգոստոսի 18-ից սեպտեմբերի 16-ը
7. Պտղակիթ « — » — սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 16-ը
8. Տերևաթափ « — » — հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 15-ը
9. Չյունաբեր « — » — նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը
10. Սառուցյալ « — » — դեկտեմբերի 16-ից հունվարի 14-ը
11. Հողմաշունչ « — » — հունվարի 15-ից փետրվարի 15-ը

12. Չյունահալ « — » — փետրվարի 14-ից մարտի 15-ը
13. Մանիշակ « — » — մարտի 16-ից մարտի 20-ը:

Բայց Ազարիա Ջուղայեցու այս նորամուծությունը շատ քիչ տեղեր է կիրառել՝ հիմնականում Ջուղայում և հնդկահայ գաղութում:

ԺԸ դարի նշանավոր տոմարագետ, իմաստասեր և քաղաքական-հասարակական գործիչ Սիմեոն կաթողիկոս Երևանցին հայոց տոմարի մեջ նոր բարեփոխություն է մտցնում: Նա վերականգնում է հայկական ամսանունները, դրանց ժամանակը ընդհուպ մոտեցնելով եվրոպական երկրներում գործածվող Գրիգորյան տոմարին:

Ըստ Սիմեոն Երևանցու բարեփոխության, հայկական տոմարի Նավասարդի 1-ը համընկնում էր Գրիգորյան տոմարի հունվարի 6-ին:



ՄԼԻԵՐԻ


(Մարկավագադիր տոմարով տևել է մայիսի 8-ից հունիսի 6-ը)

Հայոց տոմարի 10-րդ ամիսն է: Անանիա Շիրակացու, Գրիգոր Տաթևացու և միջնադարի մի քանի այլ մտածողների կարծիքով Մարերի ամսանունը Հայկ Նահապետի դուստրերից մեկի անունից է առաջացել: Վանական վարդապետը այս ամսանունը ծագեցնում է մայրի կոչվող ծառի անունից, որովհետև մայրի ծառը հենց մայիսին էր տերևակալում: Այս ստուգաբանությունը գիտնականների մեծ մասը ընդունում է:

• • •

Մենք բազմիցս նշեցինք, որ հին և մանավանդ միջնադարյան Հայաստանը համաշխարհային տոմարի ու տոմարագիտության օրրաններից էր: Իրոք, տոմարագիտությունը հայ իրականության մեջ այնպիսի հարգ ուներ, որ այն Հայաստանի միջնակարգ և հատկապես բարձրագույն դըպրոցներում (Աճիի, Գլաձորի, Տաթևի, Հաղպատի, Մեծոփի, Ամրտուլի և այլ համալսարաններ) ավանդվող կարևոր առարկաներից է եղել:

Դպրոցներում տոմարական գիտելիքներն, իհարկե, մատուցվում էին ավելի պարզեցված ու մատչելի ծրագրով: Մեզ են հասել այդպիսի բազ-



Կարապետ վարդապետ, ԺԷ դար

մաթիվ ձեռնարկներ: Այս տեսակետից շատ հետաքրքիր է ԺԷ դարի մեծ բանաստեղծ, ծայնագիր (երգահան), իմաստասեր և տիեզերագետ ս. Ներսես Շնորհալու (մոտ 1100—1173) մի ընդարձակ բանաստեղծությունը:

Նույն դարի խոշորագույն բժիշկ, համաշխարհային բժշկագիտական մտքի կարկառուն դեմքերից մեկը՝ Մխիթար Հերացին (մտվ. 1120—1200), միաժամանակ հայտնի տիեզերագետ-տոմարագետ էր: Տոմարի մասին դպրոցականներին մատչելի լեզվով գիտելիքներ հաղորդելու համար նա Ներսես Շնորհալուն խնդրում է մի բանաստեղծություն գրել: ս. Ներսես Շնորհալին կատարում է բժշկապետի խնդրանքը և գրում հիշյալ քերթվածը: Նա այստեղ բացատրում է Արեգակի, Լուսնի, աստղերի, կենդանակերպի համաստեղությունների, մոլորակների, տարվա եղանակների, ամիսների ու այլ երևույթների էությունն ու նշանակությունը:

Այդ բանաստեղծությունից թարգմանաբար բերում ենք Երկիր մոլորակին վերաբերող քառատողը, որը ցույց է տալիս, թե մեր նախնիները ինչ պատկերացում ունեին Երկրի մասին:

Խորանի նման կիսագունդ բլուրակ եմ,
Այս նյութական աշխարհի հիմքն ու ավարտն եմ,
Էությունք կայուն, բայց անկանգառ շարժվում եմ,
Վերևի ու ներքևի ջրերի* անըրպետն եմ:

* ս. Ներսես Շնորհալին նկատի ունի օվկիանոսն ու եթերը (երկինքը):

Հայ տոմարագետ-մանկավարժները չափածո մատչելի ձեռնարկներ են կազմել նաև ուշ միջնադարում: Ոչ միայն հայ, այլև համաշխարհային տոմարի պատմության եզակի արդյունքներից է տոմարի խոշոր տեսաբան Վարդան Կաֆայեցու (1615—1712) մի ընդարձակ բանաստեղծությունը:

Վարդան Կաֆայեցին ծնվել է Ղրիմի Կաֆա (այժմ Թեոդոսիա) քաղաքում*, սկզբնական կրթությունը ստացել է Կաֆայի և Սուրխաթի (այժմ Ստարի) հայկական դպրոցներում: Նա հայտնի տաղասաց էր, գրել է նաև պատմա-բանասիրական երկեր, բայց մեր մշակույթի պատմության մեջ մնացել է իբրև չափածո տոմարի կազմող: Քառատող տներից բաղկացած այդ տոմարը կոչվում է «Պատճեն տոմարի հայոց»: Այստեղ շատ հասկանալի ու պարզ գրաբարով շարադրված է տոմարագիտության գրեթե բոլոր հիմնական կանոնները, տրվել մոլորակների, երկնային երևույթների, տարեմուտի, լուսնի պարբերաշրջանների և տոմարական այլ հասկացությունների ու երևույթների բացատրությունը: Տոմարի այս ձեռնարկը խոշոր նշանակություն է ունեցել ուշ միջնադարյան հայոց դպրոցներում տոմարագիտական գիտելիքներ արմատավորելու համար: Աշակերտները անգիր էին անում այս գործը և արդեն ինքնըստինքյան մտապահում էին տոմարագիտության բազմաթիվ բարդ կանոններ:

Վարդան Կաֆայեցու չափածո տոմարի մասին պատկերացում կազմելու համար ընթերցենք ամսանուններին ու ամսվա տևողությանը վերաբերող հատվածը:

Անուանք ամսոց ազգին հայի՝
Նաևասարո, Հոռի, Սահմի,
Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկի,
Արեգի, Ահկի և Մարերի,

Մարգաց, Հրոտից, այսպես լիցի՝
Քանիք աուրց ամսաթուխի
Յերեսնական ամեն ամսի,
Եւ աւելիքն է հինգ թուխ:

Ղրիմահայ գաղութը մեր գիտությանը տվել է ևս մի քանի խոշոր տոմարագետներ: Օրինակ ԺԵ դարի հեղինակ Եսայի Ղրիմեցու մասին ձեռագիր հիշատակարանները նշում են, որ նա «քաջ տոմարագետ և

* Ղրիմում հայերը առաջին անգամ հիշատակվում են մ. թ. ա. Բ դարում, բայց նրանք այստեղ տարածվում են Ժ դարից սկսած: ԺԱ—ԺԳ դարերում հայերն այստեղ ընկալչության թվով թաթարներից հետո երկրորդ տեղն էին բռնում: Նրանք երկրամասի ռազմա-քաղաքական, առևտրա-տնտեսական և մշակութային կյանքում այնպիսի դեր ունեին, որ օտար պատմիչները Ղրիմն անվանում էին «Արմենիա մարիտիմա», որը լատիներեն նշանակում է «ծովահայաց Հայաստան» կամ «Ծովային Հայաստան»:

աստղաբաշխ» էր: Նա Կաֆայի (այժմ Թեոդոսիա) մերձակայքում գրտնվող ս. Անտոնի վանքի միաբան էր, 1441 թ. կազմել էր տոմարական բարդ աղյուսակներ պարունակող մի ուսումնասիրություն, իսկ 1444 թ. գրել «Տումար արեգական և լուսնի» (Արեգակնային և լուսնային տոմար) աշխատությունը:

Նշանավոր տոմարագետ էր Հակոբ Ղրիմեցին (մոտ 1360—1420): Նա ծնվել է նախնական կրթությունը ստացել է Ղրիմի Սուրխաթ քաղաքում, ապա ուսանել Երզնկայի դպրոցում, որն ավարտելուց հետո կարգվել է տեղի հայոց Կապուսի վանքում՝ տոմարի դասախոս: 1410 թ. տեղափոխվել է Գանա լճի հյուսիսում գտնվող նշանավոր Մեծփա վանքի նորաբաց բարձրագույն դպրոցը և նշանակվել ռաբունապետ՝ հայկական այդ համալսարանում դասավանդելով տոմարագիտություն և իմաստասիրություն: 1416 թ. գրել է «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, որտեղ գրում է, թե տոմարագիտության համար շատ կարևոր են թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը և աստղաբաշխությունը: Իր այս դասագրքում Հակոբ Ղրիմեցին գիտության վերջին խոսքով տալիս է ոչ միայն տոմարական գիտելիքներ, այլև հիշյալ չորս գիտությունների մասին հիմնավոր տեղեկություններ:

Հակոբ Ղրիմեցին իր աշխատություններով պայքարել է սնոտիապաշտ այն աստղագետների դեմ, ովքեր կարծում էին, թե աստեղի շարժումներից կարելի է կռահել ոչ միայն առանձին մարդկանց, այլ նույնիսկ ժողովուրդների ճակատագրերը: Օրինակ՝ ԺԳ դարի հայ մի քանի աստղագետ-տոմարագետներ ինչ-որ հաշվումներ անելով փորձում էին ապացուցել թե 1416 թ. լիալուսինը այլևս չէր նվազելու: Արեգակն ու լուսինը միաժամանակ պիտի երկու հակադիր կողմերից լուսավորեին երկնականաբար, որից հետո աշխարհը պիտի կործանվեր: Հակոբ Ղրիմեցին մոտավորապես 1412 թ. մի աշխատություն է գրում, որտեղ 10 կետով հիմնավորապես հերքում է այդ կանխագուշակությունը: 1417 թ. նա գոհունակությամբ գրում է. «Մենք գոհ ենք, որովհետև ինչ որ մեկնեցինք (բացատրեցինք), ճիշտ դուրս եկավ»:

Հայ աստղագետ-տոմարագետները Հայաստանում և հայկական գաղթօջախներում տարբեր դարերում կիրառել կամ առաջարկել են օրացույցների զանազան նախագծեր: Դրանցից են Ստեփանոսի (1084), Ազարիա Ջուղայեցու (1616), Վարդան Կարբեցու (1616), Սիմեոն Երևանցու (1759) և Մինաս Կամսարականի (1807) կազմած տոմարները:



ՄԼԻԼՑ

(Մարկավագադիր տոմարակարգով տևել է հունիսի 7-ից հուլիսի 6-ը)

Հայոց տոմարի 11-րդ ամիսն է: Մարկվարտի, Հյուբեմանի, Հր. Աճառյանի, Ատ. Մալխասյանցի և ուրիշների ստուգաբանությամբ, Մարգացը ծագում է հին պարսկերեն «Մարգագանա» ամսանունից, որը նշանակում է թռչունների թխսի ամիս: Բայց ժամանակակից գիտնականներ Ա. Ֆրեյմանը, Լ. Հովհաննիսյանը և ուրիշներ Մարգագանա ամսանունը պարսկերեն չեն համարում: Նրանք ապացուցել են, որ այդ ամսանունը բաբելոնացիներից է անցել պարսիկներին և բավական հնչունափոխվել, ուստի հայերեն մարգաց ամսանունը պարսկական «մարգագանայի» հետ կապ չունի: Ըստ Բ. Պատկանյանի, Էդ. Աղայանի և ուրիշների, հայոց տոմարի 11-րդ ամսանունը կապված է հայերեն «մարգ» բառի, այսինքն՝ խոտհարքի, խոտհնձի հետ: Նույն կարծիքն է հայտնել նաև Ֆրանսիացի հայագետ Դյուլորիեն: Այս բացատրությունը, տոմարագետների մեծ մասը ընդունում է, մանավանդ որ թե՛ Անանիա Շիրակացին, և թե՛ Վանական Վարդապետը Մարգացը մոտավորապես նույն կերպ են ստուգաբանում: Անանիա Շիրակացին այս ամսանունը բխեցնում է ամառային աշխատանքների բնույթից: Վանական Վարդապետը այս առնչությամբ հետևյալն է գրում. «... իսկ

մարգացը այն ժամանակն է, երբ դաշտերի ու հովիտների, բուրաստանների ու այգեստանների մարգերը բուլորում են»: Այսինքն՝ խոտհարքից հետո չորացած խոտը վերածում են խրձերի և շարում դաշտերում:

• • •

Պատմագիտության բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ հայերը արևելքի միակ ժողովուրդն էին, որոնք դեռևս գրերի գյուտից առաջ առևտրատնտեսական և մշակութային սերտ կապեր են ունեցել Եվրոպայի բազմաթիվ երկրների հետ, յուրացրել այդ երկրների գիտական մտքի արդյունքները, կատարելագործել սեփականը:

Եվրոպայի հետ գիտական և մշակութային կապերը էլ ավելի սերտացան կիլիկյան հայկական թագավորության շրջանում (1198—1375):

Հայ-եվրոպական գիտական կապերի ամրապնդման մեջ շատ կարեւոր դեր են ունեցել բազմաթիվ երկրների (Բյուզանդիա, Իտալիա, Հոլանդիա, Լեհաստան, Ֆրանսիա և այլն) հայկական գաղթավայրերը: Դա հայ գիտնականներին ու մշակութային գործիչներին եզակի հնարավորություն է տվել ոչ միայն մոտիկից ծանոթանալու Եվրոպայի գրեթե բոլոր զարգացած երկրների գիտության ամենաթարմ նորություններին, այլև այդ երկրներում ծավալել գիտամանկավարժական կարևոր գործունեություն: Այսպես՝ Բյուզանդիայի հայկական գաղութի հայագի փիլիսոփա, աստղագետ և մեքենագետ Լևոն Փիլիսոփան (805—870) առաջինը սկսեց տառերը իբրև խորհրդանիշ գործածել թվականության մեջ՝ փաստորեն դառնալով հանրահաշվի հիմնադիրը մաթեմատիկայի պատմության մեջ: ԺԴ դարի հայ մաթեմատիկոս Արտավազդը դարձյալ բյուզանդահայ գաղութի ներկայացուցիչ էր: Նա մաթեմատիկայի պատմության մեջ առաջինը հայտնագործեց թվից քառակուսի արմատ հանելու մի եղանակ, որը համարվում է ԺԹ դարի գերմանացի գիտնական Օպպերմանի գյուտը: Կարելի է գիտության այլ բնագավառներից նման բազմաթիվ փաստեր բերել:

Եվրոպայի հետ ունեցած այս աշխույժ կապերը, և մանավանդ համաշխարհային գիտության նվաճումները յուրացնելու մշտական մղումը, հայ գիտնականներին միշտ աշալուրջ է պահել, որպեսզի ետ չմնան համաշխարհային գիտության զարգացման ընթացքից: Իրոք, հայ գիտնականները դեռևս ոսկեդարյան շրջանից (Ե դար) թարգմանում էին վաղ միջնադարյան հույն, ասորի, հռոմեացի խոշոր մտածողներ և քերթողներ Եվտիքիոս Կոստանդնուպոլսեցու (մահ. 582 թ.), Եվսեբիոս Կասարացու (մահ. 339 թ.), Հովհան Ոսկեբերանի (մահ. 407 թ.), Եփրեմ Ասորու (մահ. 373 թ.), Աթանաս Աղեքսանդրացու (295—373), Տիմոթեոս Կուզի (մահ.

477 թ.), և ուրիշների կարևորագույն աշխատությունները, որոնց մոտ 100-ի բնագրերը, բանասիրության դոկտոր L. Տեր-Պետրոսյանի հաշվարկումներով, այժմ կորած են, և դրանք գիտությանը հայտնի են միայն հայերեն թարգմանությամբ: Ի դեպ, նման աշխատություններից է նաև վաղ միջնադարի խոշորագույն տոմարագետ Անդրեաս Բյուզանդացու տոմարական գլխավոր աշխատությունը («Երկուհարյուրամյա զատկացույց»), որը հայերեն է թարգմանվել Ե դարում:

Հետագա դարերում ևս թարգմանական գրականությունը հայ գիտնական-իմաստասերների ուշադրության կենտրոնում է եղել: Մեր նախնիները թարգմանել են լատինալեզու, արաբալեզու, հունալեզու հարյուրավոր աշխատություններ, որոնց թվում երկեր, որոնք հայերեն ավելի շուտ են թարգմանվել, քան արևելյան և նույնիսկ եվրոպական լեզուներով: Օրինակ էվկլիդեսի «Երկրաչափության» որոշ հատվածներ թարգմանել էր դեռևս Անանիա Շիրակացին: Նրանից հետո Գրիգոր Մագիստրոսը (990—1058) այդ երկից թարգմանել է ավելի ընդարձակ հատվածներ: Մինչդեռ Եվրոպան հույն գիտնականի այս հոշակավոր երկին ծանոթացել է միայն ԺԲ դարում՝ այն էլ արաբերենից լատիներենի թարգմանված տարբերակով: Ուշ միջնադարի մեր նախնիները ետ չէին մնում նաև տոմարագիտական ու աստղագիտական գործերը թարգմանելու բնագավառում: Դեռևս Եսայի Ղրիմեցին (ԺԵ դ.), շատ լավ տիրապետելով իտալերենին, թարգմանել և իր գիտական աշխատություններում օգտագործել էր իտալացի տոմարագետների և աստղագետների գործերը:

Ինչպես հայտնի է, վերածնունդից հետո Եվրոպան հետզհետե դառնում է համաշխարհային գիտության կենտրոնը: Զարգացման աննախադեպ աստիճանի է հասնում նաև տոմարագիտության հիմքը՝ աստղագիտությունն ու դրա հետ կապված գիտությունները: Այս բնագավառի մեծագույն հայտնագործությունը Նիկոլայո Կոպեռնիկոսի (1473—1543) արևակենտրոն համակարգն էր, որը նա շարադրել է «Երկնոլորտի պտույտների մասին» լատիներեն աշխատության մեջ (տպ. 1542 թ.): Կոպեռնիկոսի հեղաշրջիչ աշխատությունից հետո Գ. Գալիլեյը, Յ. Կեպլերը, Ի. Նյուտոնը և ուրիշներ հիմնավորեցին ու հաստատեցին լեհ հանճարեղ գիտնականի տեսությունը: Այդ տեսության հիմքի վրա Յ. Կեպլերը հայտնագործեց մոլորակների շարժման օրենքները, Ի. Նյուտոնը մեկնաբանեց ու գիտականորեն իմաստավորեց դրանք, Գ. Գալիլեյը ինքնաշեն հեռադիտակով հայտնագործեց Լուսնթափ (Յուպիտեր) չորս արբանյակները, Ծիր Կաթինը տարրալուծեց առանձին աստղագոլայությունների, Պ. Լապլասը մշակեց արեգակնային համակարգի առաջացման իր վարկածը և տիեզերագիտությունը անջատեց աստղագիտությունից, Վ. Հերշելը նույն

արեց աստղաբաշխության պոռնով և այլն: Եվ ահա հայ տոմարագետ-աստղագետները սկսում են յուրացնել եվրոպական գիտական մտքի նվաճումները՝ իհարկե հավատարիմ մնալով հայ տոմարագիտական մտքի յուրահատկությանն ու ինքնատիպությանը: Հ. Բադալյանի և այլոց աշխատություններից բերենք մի քանի տվյալներ:

Ուշ միջնադարի խոշոր գիտնական Հովհաննես Անկյուրացին 1621 թ. թարգմանեց գերմանացի նշանավոր աստղագետ և աշխարհագրագետ Պետրոս Ասիանի (1495—1552) «Կոսմոգրաֆիա» (տիեզերագիտություն) հայտնի աշխատությունը: 1671 թ. ֆրանսերենից թարգմանված մի տոմարական աշխատության մեջ տրվում է 1671—1700 թթ. տեղի ունենալիք Արեգակի և Լուսնի բոլոր խավարումների ցանկը՝ րոպեի ճշտությամբ: Եվրոպական գիտության ընձեռած տվյալների օգտագործմամբ տոմարագետ Իսահակ Ջուղայեցին 1670-ական թթ. շարադրում է «Վասն ժամուց տուրնջեան և գիշերոյ, որք առաւելուն եւ նուագին» (գիշերվա և ցերեկվա ժամերի մասին, որոնք ավելանում և պակասում են): Հեղինակն այստեղ ընդունում է երկրի զեղանությունը, երկրի պտույտն իր առանցքի շուրջը 24 ժամում: Նա գիշերվա ու ցերեկվա տևողությունը որոշում է՝ հաշվի առնելով իր գտնված վայրի (Սպահան) աշխարհագրական լայնությունը:

Ղուկաս Վանանդեցին 1695 թ. Ամստերդամում տպագրում է հայերեն առաջին աշխարհագրական քարտեզը («Համատարած աշխարհացույց»), որտեղ պատկերված էր նաև երկնոլորտը: Այս գործում նրան օգնում են իր եղբայր Միքայել Վանանդեցին և ազգական Մատթեոս Վանանդեցին՝ երկուսն էլ նշանավոր գիտնականներ:

Ղուկաս Վանանդեցին (Նուրիջանյան) Գողթն գավառի Վանանդ գյուղից էր: Երիտասարդ հասակում զալով Եվրոպա, հաստատվում է Ամստերդամ՝ դառնալով ԺԷ դարավերջին այստեղ հիմնված հայկական տպարանի կազմակերպիչներից: Հայտնի հայագետ Շրյոդերի վկայությամբ, Ղուկաս Վանանդեցին բարեկամական կապեր է ունեցել հոշակավոր գիտնական Լայբնիցի հետ:

Ղ. Վանանդեցու «Համատարած աշխարհացույցը» հայ քարտեզագրության մեջ առաջինն էր նոր ժամանակներում: Անհրաժեշտ էր աշխարհի բազմաթիվ լեզուներից թարգմանել համապատասխան տեղանուններ, ստեղծել նոր անուններ, որոնք արտահայտեին ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի, Ամերիկայի, Եվրոպայի ու Ասիայի բազմաթիվ այլ երկրների տեղանունները: Վանանդեցիների կազմած քարտեզը փաստորեն հայ քարտեզագրական եզրաբանության (տեղամիտոլոգիա) սկզբնավորումն էր: Այդ քարտեզի վրա նշված ծովերի, օվկիանոսների, գետերի, աշխարհամասերի, քաղաքների անվանումները գրեթե առանց փոփոխության


գործածում ենք մինչև այսօր: Քարտեզը մի գույնով է, բայց հստակ երե-
վում են բոլոր աշխարհամասերի անունները: Իհարկե աշխարհամասերի
սահմանագծերում բավական շեղումներ կան, բայց դրանք ոչ թե Ղ. Վան-
ճանդեցու և իր օգնականների սխալներն են, այլ ժամանակի: Քարտեզի
վրա, աշխարհամասերը ցույց տվող կիսագնդերից թիչ վերև, տրված է նաև
երկնքի քարտեզը՝ համաստեղությունների պատկերների հետ միասին:
Այստեղ նշված են Այծեղջյուրի ու խեցգետնի արևադարձները, հասարա-
կածը և այլն: Աստղային երկնքի քարտեզի տակ դրված է Պտղոմեոսի
երկրակենտրոն տիեզերական համակարգի գծապատկերը: Գծապատկերի
կենտրոնում նշված է երկրագունդը, որի շուրջը շրջանագծերով պտտվում
են Լուսինը, Արեգակը, Փայլածուն (Մերկուրի), Արուսյակը (Վեներա),
Հրատը (Մարս), Լուսնթագը (Յուպիտեր) և Երևակը (Սատուրն): Ղու-
կաս Վանանդեցին հաջորդ տարի լույս է ընծայում «Բանալի համատա-
րածի աշխարհացոյցի մերոյ նորածնի» աշխատությունը (Մեր նորածին
համատարած աշխարհացոյցի բանալին): Այստեղ մանրամասն նկարա-
գրված է քարտեզից օգտվելու կարգը և Կոստանդնուպոլիսի արևակենտրոն
համակարգի բացատրությունը:

1698 թ: Ղուկաս Վանանդեցին, դարձյալ Ամստերդամում, տպագրում
է «Համաձայնություն հնգետեսակ ամսոց...» տոմարագիտական ուսումնա-
սիրությունը, իսկ 1702 թ.՝ «Բնաբանություն իմաստասիրական» բնագի-
տական և օդերևութաբանական աշխատությունը:

1759 թ. Վենետիկում տպագրվում է հայերեն առաջին զուտ աստ-
ղագիտական քարտեզը՝ «Աստղային երկինքը»: Քարտեզում նշված են
երկնքի 63 համաստեղությունները իրենց նշաններով, բոլոր հայտնի մո-
լորակները, ինչպես նաև Լուսնթագի (Յուպիտեր) ու Երևակի (Սատուրն)
չորս արբանյակները:

Ժէ դարի հայ գիտնականները ստեղծում են նաև կատարելագործված
աստղաբաշխական սարքեր, որոնք իրենց կարողություններով չէին զի-
ջում եվրոպական գործիքներին: Օրինակ՝ Ժէ դարում Ղուկաս Վանանդե-
ցու պատրաստած հայերեն բացատրություններ ունեցող աստրոլաբի օգ-
նությամբ հնարավոր է որոշել լուսատուների բարձրությունը հորիզոնից,
միջօրեականի ուղղությունը, կենդանակերպի համաստեղությունների դիր-
քը գիշերվա տարբեր ժամերին, լուսատուների հասարակածային կոոր-
դինատները, տվյալ վայրի աշխարհագրական լայնությունը, աշխարհի
կողմերը, օրվա ու ցերեկվա ճշգրիտ տևողությունը և այլն:

Քանի որ տոմարագիտությունը ամուր աղերսներ ուներ մաթեմատի-
կային ու երկրաչափությանը, հայ ուսանողների համար չափազանց կա-
րևոր էր նաև ուշ միջնադարի եվրոպական մաթեմատիկոսների գործերի



«Աստղային երկինք» (1748 թ.) Հայկական առաջին աստղագիտական
քարտեզը (39 սմ X 25 սմ)

թարգմանությունները: Այս մարզում նույնպես հայ թարգմանիչները լուրջ աշխատանք ծավալեցին: 1678 թ. Մարսելում լույս է տեսնում գերմանացի մաթեմատիկոս Զր. Կլավիոսի (1537—1612) «Մաթեմատիկայի դասագիրքը»:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Սուքիաս Աղամալյանցի (1730—1789) «Թվաբանություն» աշխատությունը (տպ. 1781 թ.) եվրոպական գիտության ամենավերջին արդյունքների վրա գրված դասագիրք էր, որտեղ հեղինակը բացատրում էր կոտորակային թվից ջառակուսի արմատ ու խորանարդ արմատ հանելը, երկրաչափական ու թվաբանական պրոգրեսիա, բազմանկյուն թվեր, լոգարիթմներ և այլն: Գրքի վերջում տրված էր 1—1000 թվերի լոգարիթմական աղյուսակը:

Դարձյալ Մխիթարյան միաբան Սահակ Պրոնյանը (մահ. 1806 թ.) 1794 թ. գրում է «Երկրաչափության դասագիրք», որը ստեղծվել էր եվրոպական լեզուներով գոյություն ունեցող լավագույն աշխատությունների հիման վրա և ժամանակին համարվել համաշխարհային մակարդակի դասագիրք:

Հայ տոմարագիտական ու աստղագիտական միտքը լուրջ հաջողություններ է արձանագրել նաև ժժ դարում: Եթե ժժ դարում նման աշխատությունները ստեղծվում էին մեծ մասամբ գրաբար, ապա ժժ դարի գործիչները սկսում են գրել ժողովրդին հասկանալի լեզվով: Հայ աստղագետները, գրողները, հրապարակախոսները և մշակութային գործիչները աշխարհաբար թարգմանելով, ժողովրդի մեջ տարածում էին Կոպտենիկոսի, Կեպլերի, Գալիլեյի, Նյուտոնի և համաշխարհային տիեզերագիտության մյուս մեծերի գործերը: «Բազմավեպ», «Արարատ», «Հանդէս ամսօրեայ», «Շտեմարան պիտանի գիտելեաց», «Հյուսիսափայլ» և ուրիշ հանդեսներում ու թերթերում լույս էին տեսնում աստղագիտական ու տոմարագիտական բնույթի հարյուրավոր հոդվածներ:

Դեռևս Դորպատում ուսանելիս, Խաչատուր Աբովյանը տիեզերագիտության մասին գրում է գիտահանրամատչելի աշխատություն, որտեղ նկարագրում է արևակենտրոն համակարգը, երկնոլորտը, խոսում այլ մոլորակներում կյանքի գոյության հնարավորության մասին և այլն: Տիեզերագիտական երկու հոդված է տպագրել նաև հայ ազատագրական շարժման մեծ տեսաբան Միքայել Նալբանդյանը: «Հյուսիսափայլում» լույս տեսած իր այդ հոդվածներից մեկում, Նալբանդյանը՝ ընթերցողին ծանոթացնելով գիտության վերջին նվաճումներին, ենթադրում էր, որ ժամանակի ընթացքում մարդը պիտի հայտնաբերի դեռևս անհայտ մոլորակներ:


Չուտ տիեզերագիտական ու տոմարագիտական աշխատություններ ստեղծելու առումով առանձնապես աչքի էին ընկնում Վենետիկի, Պոլսի ու Վիեննայի հայկական ուսումնական հաստատությունների գիտնականները: Այս տեսակետից առանձնանում են Գ. Գապարաջյանի «Գիսաուր աստղ կամ պատմութիւն գիսաուր աստղերու» (Վենետիկ, 1812 թ.), Խ. Սյուրմեյանի «Տոմարագիտութիւն ընդհանուր» (Վենետիկ, 1818), Ա. Պալմյանի «Հրահանգ աստղագիտութեան» (Վիեննա, 1845 թ.), Մ. Սաղաթեյանցի «Համառոտ բնական գիտութիւն» (Վիեննա, 1842 թ.), Ս. Խապայանի «Նոր դասագիրք տիեզերագիտութեան» (Երուսաղեմ, 1884 թ.), Մ. Սահակյանի «Տարերք տիեզերագիտութեան» (Վենետիկ, 1881 թ.) և մանավանդ Հ. Բարսեղյանցի «Սկզբունք աստղագիտական» (Կ. Պոլիս, 1880) և «Գիսաուրք» (Կ. Պոլիս, 1885 թ.) մեծածավալ աշխատությունները, որոնք գրված էին ժամանակի աստղագիտական ու տոմարագիտական մտքի նորագույն նվաճումների օգտագործմամբ:

Հայ աստղագետները իրենց տեսական գիտելիքները հաճախ ճշտում էին սեփական դիտումների և ուսումնասիրությունների օգնությամբ: Այս տեսակետից առանձնապես աչքի էին ընկնում Վենետիկի մխիթարյանները, որոնք 1840-ական թթ. ունեին աստղադիտարան, անհրաժեշտ գործիքներ ու սարքավորումներ: Օրինակ՝ Վ. Հովսեփյանը Լոնդոնից հայթայթած աստղագիտական գործիքներով ու սարքերով ուսումնասիրել է լուսատուների հորիզոնական կոորդինատների փոփոխությունները և օտար գիտնականների դիտումների արդյունքների մեջ կատարել կարևոր շրտկումներ:

Աստղագիտության պատմության մեջ նշանակալի ներդրում ունի Խորեն Սիմանյանը (1868—1928): Հ. Բաղայանի կարծիքով, կենդանաշրջանի լույսի, երկրի մթնոլորտում թթվածնի քանակության, աստղերի առկայծման, գիսավոր աստղերի ու արեգակնային հրավիժակների վերաբերյալ նրա դիտումներն ու դրանց վրա հիմնված աշխատությունները լուրջ ներդրում են աստղագիտական մտքի զարգացման ասպարեզներում: Խ. Սիմանյանը ճշգրտել է Արեգակի հեռավորությունը որոշելու՝ Արիստարքոս Սամոսացու հայտնաբերած եղանակը, առաջարկել նորը: 1894 թ. ս. Ղազար կղզու (Վենետիկ) հայկական աստղադիտարանում Խ. Սիմանյանը աշխարհում առաջին անգամ հայտնաբերեց Լուսնթագի (Յուպիտեր)՝ վեցերորդ արբանյակը: Հայ գիտնականի գյուտը անհրաժեշտ էր համարվեց ու մերժվեց: Ամերիկացի գիտնական Պիրյանը տասը տարի անց կրկին «հայտնաբերեց» Լուսնթագի 6-րդ արբանյակը՝ գյուտը վերագրելով իրեն: Հայ աստղագետները ժժ դարում ևս բազմիցս առաջ են քաշել տիեզերածնական



Ղուկաս Վանանդեցու աստրոլոքը, ժԷ դար



Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՏԻ

տարբեր հարցերի կապակցությամբ նոր վարկածներ (Ն. Սինանյան, Ն. Տաղավարյան), օրացուցային հաշվումների դյուրին եղանակներ (Ս. Գաթրճյան, Գ. Հովյան, Գ. Նահապետյան), կատարել են կարևոր հայտնագործություններ: Աստղագիտության ու տիեզերագրության պատմության մեջ նշանակալի հետք են թողել նաև մեր ժամանակների հայ գիտնականները (Վ. Համբարձումյան, Լ. Միրզոյան, Բ. Մարգարյան, Գ. Գուրզադյան և ուրիշներ):

Բ. Մարգարյանը հայտնաբերել է հատուկ կարգի գալակտիկաներ, որոնք իր անունով կոչվում են «Մարգարյանի գալակտիկաներ»: 1976—1979 թթ. նա ղեկավարել է միջազգային աստղագիտական միության գալակտիկաների հանձնաժողովը: Գ. Գուրզադյանը մշակել է երկթաղանթ միգամածությունների առաջացման տեսությունը, տիեզերական տարածություններն ուսումնասիրելու համար ստեղծել մի շարք գիտական սարքեր ու օպտիկական համակարգեր:

Մեր ժամանակների խոշորագույն աստղաֆիզիկոսներից է Վ. Համբարձումյանը, որը մեծ ներդրում ունի տիեզերաբանության նորագույն ուղղությունների հիմնադրման մեջ, հայտնագործել է աստղասփյուռները, գիտության պատմության մեջ հիմնադրել գալակտիկաների առաջացման նոր ուղղություն, ստեղծել գազային միգամածությունների լուսարձակման տեսությունը, որը նոր ուղղություն է աստղաֆիզիկայի պատմության մեջ: Վ. Համբարձումյանը 1961—1964 թթ. միջազգային աստղագիտական միության պրեզիդենտն էր, իսկ 1968—1972 թթ.՝ գիտական ընկերությունների միջազգային խորհրդի պրեզիդենտը (այս խորհուրդը միավորում էր 60 պետությունների գիտությունների ակադեմիաներ և միջազգային 15 գիտական միություններ): Ջուտ տոմարագիտության խնդիրներով են զբաղվել Աշ. Աբրահամյանը, Բ. Թումանյանը, Հ. Բադալյանը, Հ. Խաչատրյանը և ուրիշներ: Նոր տոմարագետների նպաստը համաշխարհային տոմարագիտությանն այն է, որ նրանք հիմնականում զբաղվելով մեր տոմարի պատմությամբ, բացահայտել են հայ տոմարագետների տեղն ու դերը համաշխարհային տոմարի զարգացման մեջ, հրատարակվել են նրանց տարբեր աշխատությունների քննական բնագրերը և այլն:

Նոր շրջանի հայ տոմարագիտության կարևորագույն արդյունքը Հ. Բադալյանի «Օրացույցի պատմություն» ստվար աշխատությունն է, (Երևան, 1970 թ.), որտեղ հեղինակը քննել է աշխարհի 18 ժողովուրդների օգտագործած տարբեր համակարգի օրացույցների պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Հ. Բադալյանը իր մենագրության մեջ զետեղել է մի ընդարձակ, բայց

մատչելի աղյուսակ, որի միջոցով կարելի է հայոց և հռոմեական տոմարներով ու թվարկություններով արձանագրված իրադարձությունների ժամանակները փոխարձաբար արտահայտել մեկը մյուսով: Աշխատության գլխավոր արժեքներից մեկն էլ այն է, որ այստեղ բերված են այն սկզբունքներն ու օրենքները, որոնք յուրացնելիս կարելի է համաշխարհային տոմարի բազմաթիվ թվարկությունների միջև եղած տարբերությունները հեշտությամբ գտնել և ստուգել ցանկացած երկրում կատարված պատմական իրադարձության ճիշտ ժամանակագրությունը:



ՀՐՈՏԻՑ

(Սարկավագադիր տոմարով տևել է հուլիսի 7-ից օգոստոսի 5-ը)

Հայոց տոմարի 12-րդ ամիսն է: Ըստ Անանիա Շիրակացու, Գրիգոր Տաթևացու և ուրիշների, «Հրոտիցը» ծագում է Հայկի որդիներից մեկի անունից: Քանի որ բազմիցս նշվեց, որ հին մատենագիրները մեր ամսանունները բխեցրել են Հայկ Նահապետի զավակների անուններից, մեք բերենք այդ վկայություններից հնագույնը:

Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» հայտնի աշխատության մեջ գրում է. «Նոյան որդի Հաբեթի ազգից Հայկ անունով մի աղեղնավոր հսկայի... անունով հայերը կոչեցին հայ... Հայկին ու նրա զավակներին մեծարելու համար, հայերը Հայկի դուստրերի (որդիների) և դուստրերի անունները վերցրեցին դրեցին իրենց ամիսների վրա: Նավասարդը, Հոռին, Սահմին, Մահեկին, Արեգը և Մարերը Հայկի դուստրերն էին, իսկ Տրեն, Քաղոցը, Արացը և Հրոտիցը՝ Հայկի որդիները»:

Ինչպես տեսնում ենք, Անանիա Շիրակացու կարծիքով, հայոց ամսանուններից 10-ը ծագում է Մեծն աղեղնավորի զավակների անունից:

Վանական Վարդապետը այս ամսանունը այլ կերպ է ստուգաբանում: Նրա կարծիքով «Հրոտիցը» ծագում է «հուր» բառից, որովհետև «այդ ամսին արեգակը ոտից գլուխ այրում է»:

Հրոտիցը «հուր» բառի հետ է կապում նաև Ք Պատկանյանը: Տոմարագետների ու բանասերների մեծ մասը այս ստուգաբանությունն է ճիշտ համարում:

• • •

Շատերը հավանաբար ուշադրություն դարձրած կլինեն, որ 28 օր ունեցող փետրվար ամիսը չորս տարին մեկ անգամ ունենում է 29 օր: Այդպիսի տարիները անվանում են «նահանջ», որովհետև չորս տարին մեկ անգամ օրացույցը մեկ օրով «ուշ է վերջանում», պատկերավոր ասած՝ նահանջում է: Իսկ այն տարիները, երբ փետրվարը 28 օր ունի, կոչում են հասարակ: «Հասարակ» գրաբարում նշանակել է «միանման», «հավասար»: Իրոք՝ տարին սովորաբար 365 օր է ունենում, այսինքն՝ չորս տարին մեկ կրկնվող նահանջ տարիներից բացի, բոլոր մյուս տարիները ունենում են հավասար օրեր և վերջանում են միանման:

Այժմ, երբ արդեն գիտենք նահանջ և հասարակ հասկացությունների իմաստը, տեսնենք թե ինչպես է այն մտել օրացույց, և Եվրոպյան երբևէ վանի՞ց է ծանոթ այդ երևույթին: Այդ անելու համար պետք է գոնե թոռուցիկ հայացք գցենք հռոմեական տոմարի պատմության վրա*:

Ինչպես հայտնի է, հին հռոմեական թվականությունը սկսվում է այն օրվանից, երբ առասպելական Հոռոմուլոսը, ըստ ավանդության, հիմնադրեց Հոռմը (մ. թ. ա. 753): Այդ տոմարով տարվա սկիզբը մարտի մեկն էր, ավարտը՝ դեկտեմբերի 30-ը: Տարին ուներ ոչ թե 12, այլ 10 ամիս, իսկ տարվա տևողությունը 304 օր էր: Հոռոմուլոսի օրացույցի տարվա ամիսները այսպիսի հաջորդականություն ունեին՝ մարտ, ապրիլ, մայիս, հունիս, քվինտիլիս, սեքստիլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր: Մարտը, մայիսը, քվինտիլիսը և հոկտեմբերը պարունակում էին 31-ական, մնացած վեցը՝ 30-ական օր:

Մ. թ. ա. է դարի սկզբին հռոմեական կայսր Նոնա Պոմպիլիոսը բարեփոխում է այդ անհարմար ու սխալաշատ օրացույցը: Նա տարվա տևողությանը ավելացնում է 51 օր, որով տարին դառնում է 355 օր: Քանի որ հին Հոռոմում կենտ թվերը սրբազան էին, կայսրը օրացույցն այնպես է կարգավորել, որ տարվա բոլոր ամիսները վերջանային կենտ թվով: Այդ նպատակով Պոմպիլիոսը 30 օր պարունակող 6 ամսից յուրաքանչյուրից մեկական օր վերցնում-ավելացնում է վերոհիշյալ 51 օրերին: Դրանցից էլ կազմում է երկու նոր ամիս՝ հունվարն ու փետրվարը: Նշված բարեփոխությամբ հին հռոմեական ամիսների քանակը դարձել է 12, որոն-

* Այս և հաջորդ հատվածը շարադրված է Հ. Բադալյանի աշխատությունների հիման վրա:

ցից չորսը ունեին 31 օր, 7-ը՝ 29, իսկ տարվա վերջին ամիս փետրվարը՝ 28 օր:

Ինչպես տեսնում եք, փետրվարից բացի, բոլոր ամիսները վերջացել են կենտ թվերով: Կենտ թիվ է եղել նաև տարվա օրերի քանակը (355), որը օրացուցային տարուց 10 օր պակաս է: Պակասը լրացնելու համար Նումա Պոմպիլիոսը մտցրել է «նահանջ» և «հասարակ» տարիների կարգը: Նրա օրացույցը կազմված էր չորս տարիների պարբերականության սկզբունքով: Այդ չորս տարուց երկուսը հասարակ էին, երկուսը նահանջ: Հասարակ տարիներն ունեին 355 օր, իսկ նահանջ տարիներից մեկը պարունակում էր 377, մյուսը՝ 378 օր: Այսինքն՝ հասարակ տարիները նահանջ տարիներից 22—23 օր պակաս էին: Ճեղքը գույացել էր նրանցից, որ նահանջ տարիներին ավելացնում էին լրացուցիչ ամսվա օրերը: Իսկ քանի որ նահանջ տարիներից մեկը մյուսից մեկ օրով ավել էր, ուստի նրանց համապատասխանող լրացուցիչ ամիսներից մեկն ուներ 22, մյուսը՝ 23 օր:

Հետաքրքիր է, որ լրացուցիչ ամիսները ամսացանկի մեջ չէին մտել: Պարզապես նահանջ տարիների դեպքում լրացուցիչ ամսվա 22 կամ 23 օրը մտցվել է փետրվար ամսվա 23-ի և 24-ի մեջ: Այսինքն՝ երբ գալիս էր փետրվարի 23-ը, փետրվարը չէին շարունակում: Փետրվարի 23-ից հետո հաշիվը ընդհատում էին, մտցնում էին լրացուցիչ ամսվա բոլոր օրերը (1, 2, 3... մինչև 22 կամ 23), հետո դարձյալ ետ էին գալիս փետրվարի 23 և այստեղից շարունակում էին հաշվել փետրվարի 24, 25... մինչև վերջ: Մի խոսքով՝ նահանջ տարիներին լրացուցիչ ամիսը մխրճվում էր փետրվարի արանքը: Հասարակ տարիներին այդպիսի բան չի եղել:

Ակնհայտ է, որ Նումա Պոմպիլիոսի բարեփոխության նպատակը օրացուցային և արևադարձային տարիների միջև եղած տարբերության կրճատումն էր: Նա, իհարկե, կարողացավ հասնել նպատակին, բայց տուժեց օրացույցը: Այն չափազանց բարդ, խրթին և անհարմար օրացույց էր: Հռոմեական օրացույցի պարզեցումը օրակարգի հարց դարձավ մ. թ. ա. առաջին դարի 40-ական թվերին: Հուլիոս Կեսարը Եգիպտոսից հրավիրված Սոսիգենեսին հանձնարարեց կազմել նոր օրացույց: Այն շատ մեծ տարբերություն չափսի ունենար արևադարձային տարվա տևողությունից, բայց միաժամանակ պետք է պարզել որ մատչելի լինի բոլորի համար:

Սոսիգենեսի ժամանակվա գիտության տվյալներով, արևադարձային տարվա տևողությունը 365 օր 6 ժամ էր: Բանի որ օրացույցի մեջ տարին 365 օր 6 ժամ ներկայացնելը հարմար չէր, Սոսիգենեսը որոշեց այդ վեց

ժամը դուրս թողնել օրացույցից, և օրացուցային տարին սահմանել 365 օր: Բայց որպեսզի արևադարձային և օրացուցային տարիների միջև գոյացած վեց ժամվա տարբերությունը վերականգնվի և տումարական հաշիվների մեջ խառնաշփոթ չառաջանա, Եգիպտոսցի աստղագետը առաջարկեց չորս տարին մեկ անգամ փետրվարին ավելացնել մեկ օր*, իսկ մնացած ամիսները հաջորդաբար ընդունել 30 և 31 օր:

Հետագայում պարզվեց, որ երկիրը արեգակի շուրջը մեկ դարձ (պտույտ) է կատարում ոչ թե 365 օր վեց ժամում, այլ 11 րոպե 14 վայրկյան պակաս ժամանակում: Այդ 11 րոպեն կուտակվում — մեկ օր էր դառնում 128 տարվա ընթացքում: Այսինքն՝ 128 տարին մեկ հուլյան տոմարի օրացույցը արևադարձային տարուց մեկ օր ետ էր ընկնում: Այս անճշտությունը վերացնելու համար 1582 թ., Հռոմի Գրիգոր ԺԳ պապի հրամանով, ինչպես արդեն գիտենք, հուլյան տոմարը բարեփոխվեց: Գիտության նոր տվյալներով, արևադարձային տարվա տևողությունը** 365 օր 5 ժամ 49 րոպե, 12 վայրկյան էր, որը ճշգրիտ հաշվումներով արևադարձային տարուց ետ էր ընկնում ընդամենը 26 վայրկյան***: Սա նշանակում է, որ ի տարբերություն հուլյան տոմարի, որը արևադարձային տարուց երկար էր 11 րոպե 14 վայրկյան, Գրիգորյան տոմարի մեջ այդ տարբերությունը կազմում էր ընդամենը 26 վայրկյան: Հուլյան տոմարի 11 րոպեի սխալի համեմատ, այս 26 վայրկյանը չնչին սխալ էր: Որովհետև, եթե հուլյան տոմարի 11 րոպեն կուտակվում մեկ օր էր դառնում 128 տարվա ընթացքում, ապա Գրիգորյան տոմարի 26 վայրկյանը մեկ օր կդառնա 3300 տարին մեկ անգամ միայն:

Բանի որ մ. թ. ա. 45 թ. մինչև 1582 թ. հուլյան տոմարի 11 րոպե 14 վայրկյանը կուտակվել-դարձել էր 10 օր, ուստի, ինչպես արդեն գիտենք, Գրիգորյան տոմարի հեղինակները 1582 թ. հոկտեմբերի 5-ից հետո գրեցին ոչ թե հոկտեմբերի 6, այլ՝ 15: Այսպիսով՝ արևադարձային և օրացուցային տարիների միջև գոյացած 10 օրվա սխալը վերացվեց: Սակայն Ալոիս Լիլիոն Սոսիգենեսի օրացույցի կառուցվածքը թողեց նույնը: Նոր տոմարը պահեց հուլյան տոմարի ամանորը, ամսանունները, ամիսների տևողությունն ու հաջորդականությունը և այլն: Նոր տոմարի հե-

* Արևադարձային տարվա տևողությունից դուրս թողնված վեց ժամը չորս օրացուցային տարվա ընթացքում կուտակվում-դառնում էր 24 ժամ (մեկ օր):

** Հիշենք, որ արևադարձային տարվա ճշգրիտ տևողությունը 365 օր 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան է:

*** 365 օր 5 ժամ 49 րոպե 12 վայրկյանից եթե հանենք 365 օր/5 ժամ 48 րոպե 46 վայրկյան, կմնա 26 վայրկյան:

դիմակները չփոխեցին նաև հուլյան տոմարի, «նահանջ» տարվա գործածության սկզբունքը, որովհետև Սոսիգենեսի հայտնագործությունը շատ հարմար էր օրացույցի համար: Մի խոսքով՝ Սոսիգենեսի կազմած օրացույցը գրեթե անփոփոխ շարունակվում է գործածվել մինչև այսօր:

Քանի որ Գրիգորյան տոմարը պահպանել է հուլյան տոմարի ամսանուններն ու դրանց հաջորդականությունը, անհրաժեշտ է գիտենալ նաև այդ ամսանունների պատմությունն ու ստուգաբանությունը:

ՀՈՒՆՎԱՐ (ազգային կամ դասական ուղղագրությամբ՝ Յունուար) առաջացել է հռոմեական դիցարանի ժամանակի աստված Յանուսի (Janus) անունից: Նա մի դեմքով դարձած էր դեպի նոր տարին, մյուսով՝ հին տարին: Յանուսը համարվել է նաև Հռոմի պահապանը և ժամանակի կառավարը:

ՓԵՏՐՎԱՐ (ազգային ուղղագրությամբ՝ փետրուար): Ենթադրվում է, թե այս ամսանունը կապված է Ֆեբրա (febra) բառի հետ, որը նշանակում է «զոհաբերություններով ուղեկցվող տոնակատարություն»: Հին Հռոմում հիշյալ տոները կատարվում էին վերջին ամսին՝ փետրվարին:

Գիտնականների մի մասը փետրվարը ծագեցնում է ննջեցյալներից հիշող Ֆեբրուարոս (Februarius) աստծո անունից: Կարծիքներ կան նաև, որ փետրվար նշանակում է «տենդ», որովհետև այդ ամսին հին Հռոմի շրջակայքում հաճախակի էին լինում տենդի համաճարակներ:

ՄԱՐՏԸ մինչև մ. թ. ա. է դարը հռոմեական օրացույցի առաջին ամիսըն էր: Մարտ ամսանունը բխեցնում են պատերազմի աստված Մարսի անունից: Հետաքրքիր է, որ զուտ հայերեն «մարտ» բառը ևս կոիվ, պատերազմ է նշանակում:

ԱՊՐԻԼԸ կապված է լատիներեն «ապրիլիս» (aprilis) բառի հետ, որը ծագում է ապերիրե (aperire) բառից: Ապերիրե նշանակել է «բացել», որն այս դեպքում «բնության արթնացում, ծառերի բողբոջում» իմաստըն է արտահայտում: Բացի այս՝ ենթադրվում է այդ ամսանունը կարող է կապված լինել նաև սիրո և բնության զարթոնքի աստվածուհի Աֆրոդիտեի, կամ լույսի, արվեստների ու երաժշտության աստված Ապոլլոնի անուններից:

ՄԱՅԻՍԸ ստուգաբանվում է լատիներեն մաիուս (maius) բառից, որը նշանակում է «նախնիք»: Մի այլ ենթադրությամբ՝ մայիսը կապված է գարնան ծաղկունքի աստծո հետ: Կա նաև այն տեսակետը, թե մայիսը նվիրված է եղել ծերությանը, որովհետև հին Հռոմում մայիս ամսին ամուսնանալն արգելված էր:

ՀՈՒՆԻՍ (դասական ուղղագրությամբ Յունիս) ամսանունը կապվում

է աստվածուհի Յունիոնի (Junio) հետ: Ըստ հռոմեական առասպելաբանության, Յունիոնը Յուպիտերի կինն էր՝ ամուսնության աստվածուհին:

Մի այլ վարկածով, այս ամսվա անունը առաջացել է Հուլիոս Կեսարին սպանած Յունիոս Բրուտուսի (Junius Brutus) անունից: Քանի որ մինչև մ. թ. ա. է դարը, հռոմեական ամիսների քանակը 10-ն էր, և տարին սկսում էր մարտից, ուստի հուլիսից (չորրորդ ամիս) հետո մնացած մյուս ամիսները կոչվում էին լատիներեն դասական թվականներով, քվինտիլիս, (հինգերորդ), սեքստիլիս (վեցերորդ), սեպտեմբեր, (յոթերորդ), հոկտեմբեր (օկտոբեր-ութերորդ), նոյեմբեր, (նոյեմբեր-իններորդ) և դեկտեմբեր (դեցեմբեր-տասներորդ): Հետագայում Հուլիոս Կեսարի և Օգոստոս կայսեր անունները հավերժացնելու նպատակով, նախ հռոմեական կոնսուլ Մարկ Ավրելիոսը, ապա՝ մ. թ. 8 թվին Հռոմի սենատը, որոշեցին քվինտիլիսը վերանվանել Յուլիս, իսկ սեքստիլիսը՝ օգոստոս:

Ինչպես տեսնում ենք, ներկայումս գործածվող առանունները տարբեր դարաշրջաններում տարբեր հաջորդականություն են ունեցել, համապատասխանել են տարվա տարբեր ժամանակներից: Իսկ դրանցից մի քանիսը (օր.՝ սեպտեմբերը, հոկտեմբերը, նոյեմբերը և դեկտեմբերը) ամիսների հաջորդական ցուցակում չեն համապատասխանում իրենց իմաստին:

ԱՎԵԼԵԼՑ

Ավելեացը կարելի է պայմանականորեն համարել հայոց տոմարի 13-րդ ամիսը: Տեւլ է օգոստոսի 5-ից օգոստոսի 10-ը:

«Ավելեաց» նշանակում է «լրացուցիչ», «ավելացրած»: Ինչպես արդեն գիտենք, հայկական 12 ամիսներից յուրաքանչյուրն ունեցել է 30-ական օր, ուստի տարին 365 օր ունենալու փոխարեն, ունենում էր 360 օր: Տարվա օրերի քանակն ապահովելու համար, պակասող 5 օրերից կազմվել էր հավելյալ ամիս, որը նահանջ տարիներին բաղկացած էր եղել 6 օրից:

Անուններ են ունեցել նաև ավելեաց ամսվա 5 օրերը՝ **ԼՈՒՇ, ԵՂՋԵ-ՐՈՒ, ՓԱՌԱՋՆՈՏ, ԱՐՏԱՒՈՒՐ, ԾԿՐԱՎՈՐԻ:** Ավելյացի անունները թեև միայն հայերենում կան, բայց Արտախուր և Ծկրավորի բառերը դեռևս նշտորեն չեն ստուգաբանված: Արտախուրը բարդ բառ է, կազմված արտ (արտաքին)՝ և խուր՝ բառերից, նշանակում է խուրի՝ արտաքին կողմի գարդերը:

Փառագնուտը կապում են փառ (հնում նշանակել է զգաստ) կամ փայլ, շող բառերի հետ:

* Ավելեանով գարդարված գլխանոց, որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշխանավորներն ու կոռնավորները:

Ծկրավորի — այս բառի բնիկ հայկական լինելու մասին է խոսում այն հանգամանքը, որ Վանա լճի շրջանում, Մոկսի և Ռշտունիքի միջև գտնվող Կարկառ գավառում եղել է Ծկրավոր անունով մի գյուղ: Դ. Ալիշանը այս բառը նմանեցնում է ասորեստանյան արձանագրություններում վկայված ծրկուրատ (գիկուրատ) բառի հետ, որը նշանակում է բոլորակ, պարուրածն դիտանոց:


Հայագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, թե այս անունները մոլորակների հայկական հնագույն անուններն են: Քանի որ Ավելյաց ամսվա օրանունները հազարամյակների հնություն ունեն և գալիս են Հայկ Նահապետի ժամանակներից, ուստի դրանց մի մասը իբրև մոլորակների անուններ, խառնվել են և հստակ չեն: Հստակ են միայն Լուծը և Ծկրավորին: Լուծը Փայլածուի հնագույն անունն է, իսկ Ծկրավորին՝ Հրատի: Մնացածները միաժամանակ մեկ, երկու և ավելի մոլորակների անուն են նշանակել: Օրինակ՝ Եղջերուն Արուսյակն էր կամ Երևակը, Փառագնուտ՝ Լուսնթագը կամ Հրատը, Արտախուրը՝ Լուսնթագը կամ Երևակը:

Հինգ կամ վեց օր պարունակող լրացուցիչ ամիսներ են ունեցել նաև Կենտրոնական Ամերիկայի մի քանի ժողովուրդներ, հին պարսիկները, դպտիները (եգիպտացիք), աղվանները և այլք:

Թեև Գրիգորյան տոմարն ընդունելուց հետո Եվրոպայի ժողովուրդները վաղուց հրաժարվել էին լրացուցիչ ամսվա գործածությունից, բայց ժԸ դարի վերջերին Ավելեաց ամիսը կրկին մտավ շրջանառության մեջ:

Ֆրանսիական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո, 1793 թ. հոկտեմբերի 25-ին, Ֆրանսիան չեղյալ հայտարարեց հուլյան տոմարը և անցավ նոր տոմարի, որը պաշտոնապես կոչվում էր «Ֆրանսիական հանրապետության օրացույց»: Այդ օրացույցը գործածվել է 14 տարի: Համաշխարհային պատմության մի շարք կարևոր իրադարձություններ արձանագրվել են հենց այդ տոմարով, որը արմատական տարբերություններ ուներ հին ու նոր բոլոր տոմարական համակարգերից: Այն հրաժարվում էր «Քրիստոսի թվարկությունից», սահմանում էր նոր թվարկություն, (դարագլուխ), որը սկսվում էր 1792 թ. սեպտեմբերի 22-ից: Ինչպես տեսնում ենք, այս օրացույցով ամառը սեպտեմբերի 22-ն էր: Տարին բաժանվում է 12 ամիսների: Ամեն մի ամիս ուներ 30 օր: Օրացուցային տարին լրացնելու համար մտցված էր նաև 5 կամ 6 օր պարունակող լրացուցիչ ամիս: Նյա ամիսը թեև ամսանունների ցանկում չկար, բայց միշտ հաշվվում էր վերջին ամսվա օրերին:

Ֆրանսիական հանրապետության տոմարի մեջ արմատական փոփոխություններ էին կատարվել նաև ժամանակի մյուս միավորների առումով: Օրինակ՝ այժուր ոչ թե բաժանվում էր 4 շաբաթի, այլ 3 դեկադի



ԲՈՐՆ ՀԱՅՈՑ 4479/80 ԲՈՐՈՒԿԱՆ

1987



| | ԱՄԱՐԱՆՈՒՄ | ՄԱՐՏ | ԱՊՐԵԼ | ՄԱՅ | ՅՈՒՆԻՍ | ՀԱՅՄԱՆ | ՅՈՒՆԻՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | ՕԿՏՅԱԲԵՐ | ՆՈՎԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | ՕԿՏՅԱԲԵՐ | ՆՈՎԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ |
|-----------|-----------|------|-------|-----|--------|--------|--------|-----------|----------|----------|-----------|-----------|----------|----------|-----------|
| Կրկնային | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Երկնային | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Չիկնային | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Մարտ | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 |
| Ապրիլ | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| Մայիս | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 | 6 |
| Յունիս | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| Հուլիս | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 | 8 |
| Օգոստոս | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| Սեպտեմբեր | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| Օկտոբեր | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 | 11 |
| Նոյեմբեր | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 | 12 |
| Դեկտեմբեր | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 | 13 |
| Կրկնային | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 | 14 |
| Երկնային | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 | 15 |
| Չիկնային | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 | 16 |
| Մարտ | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 | 17 |
| Ապրիլ | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 | 18 |
| Մայիս | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 | 19 |
| Յունիս | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| Հուլիս | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 | 21 |
| Օգոստոս | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 | 22 |
| Սեպտեմբեր | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 | 23 |
| Օկտոբեր | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 | 24 |
| Նոյեմբեր | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 |
| Դեկտեմբեր | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 | 26 |
| Կրկնային | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 | 27 |
| Երկնային | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 | 28 |
| Չիկնային | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 | 29 |
| Մարտ | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 |
| Ապրիլ | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 | 31 |
| Մայիս | | | | | | | | | | | | | | | |
| Յունիս | | | | | | | | | | | | | | | |
| Հուլիս | | | | | | | | | | | | | | | |
| Օգոստոս | | | | | | | | | | | | | | | |
| Սեպտեմբեր | | | | | | | | | | | | | | | |
| Օկտոբեր | | | | | | | | | | | | | | | |
| Նոյեմբեր | | | | | | | | | | | | | | | |
| Դեկտեմբեր | | | | | | | | | | | | | | | |

1987



Հարց անսահմանորով ու օրանոցներով առաջին պատի օրացույցը հայ իրականության մեջ (կազմող՝ Ռ. Համբարձումյան, գծագրող՝ Ա. Գրուցյան)

(տասնօրյակ): Դեկտեմբերի բոլոր օրերն ունեին իրենց անունները, որոնք հուլյան տոմարի շարաթվա անվանումների հետ ոչ մի կապ չունեին: Օրը բաժանվում էր ոչ թե 24 ժամի, այլ 10 ժամի: Ժամը ուներ 100 րոպե, րոպեն՝ 100 վայրկյան և այլն: Հետաքրքիր էր ամսանունների դասավորությունը: Փրանսիական հանրապետության օրացույցը տարին տրոհում էր 4 մասի՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ: Տարվա ամեն մի եղանակին համապատասխանող ամիսները ունեցել են միատեսակ վերջավորություն: Ստորև բերում ենք այդ ամսանունները, որոնց հեղինակն էր Ֆրանսիայի թատերագիր և բանաստեղծ Ֆարր Դ Էգլանտինը (1750—1794):

- ԱՇՈՒՆ (տեղի է սեպտեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի 20-ը)
1. ՎԱՆԴԵՍԵՐ — խաղողի (սեպտեմբեր-հոկտեմբեր),
 2. ԲՐՅՈՒՍԵՐ — մառախուղի կամ մեզի (հոկտեմբեր-նոյեմբեր),
 3. ՖՐԻՍԵՐ — եղյամի (նոյեմբեր-դեկտեմբեր)
- ՉՄԵՌ (դեկտեմբերի 21-ից մարտի 20-ը)
4. ՆԻՎՈՋ — ձյան ամիս (դեկտեմբեր-հունվար)
 5. ՊԼՅՈՒՎԻՈՋ — անձրևի (հունվար-փետրվար)
 6. ՎԵՆՏՈՋ — քամու (փետրվար-մարտ)
- ԳԱՐՈՒՆ (մարտի 21-ից հունիսի 18-ը)
7. ԺԵՐՄԻՆԱԼ — բողբոջել (մարտ-ապրիլ)
 8. ՖԼՈՐԵԱԼ — ծաղկավոր (ապրիլ-մայիս)
 9. ՊԵՐԻՍՏԱԼ — մարգերի (մայիս-հունիս)
- ԱՄԱՌ (հունիսի 19-ից սեպտեմբերի 17-ը)
10. ՍԵՍԻՂՈՐ — հնձի (հունիս-հուլիս)
 11. ԹԵՐՄԻՂՈՐ — տոթակեզ (հուլիս-օգոստոս)
 12. ՖՐՈՒԿՏԻՂՈՐ — պտղամիս (օգոստոս-սեպտեմբեր)

Հիշյալ ամսանուններից մի քանիսի մշակութային շատ է հիշեցնում հին հայոց ամսանունների ստուգաբանությունը (մարգագ, հրոտից): հետաքրքիր է նաև, որ Ֆրանսիական հանրապետության օրացույցում ևս ամիսը 30 օր ուներ, տարին՝ 5 օր պարունակող հավելյալ ամիս, ինչպես հին հայկական տոմարում:

Բայց Ֆրանսիական հեղափոխության օրացույցի առնչությանը հայ իրականության հետ ավելի ընդգծված երևում է Նահապետ Ռուսինյանի (1819—1876) ստեղծած ամսանունների մեջ: Աճհրաժեշտ է նշել, որ Ռուսինյանը Էգլանտինից հետո երկրորդ դեմքն էր, որ ստեղծեց նոր ամսանուններ: Բանաստեղծ, իրավագետ, տնտեսագետ և հասարակական գործիչ Ն. Ռուսինյանը մեր մշակույթի խոշոր գործիչներից է, «Կլիմկլա» հայտնի երգի խոսքերի հեղինակը: Նա մասնակցել է Փարիզի կոմունային,

գիտեր բազմաթիվ հին ու նոր լեզուներ: Ն. Ռուսինյանը Սերվիչի եղբայր-ների, Ադաթոնի, Գր. Օտյանի և ուրիշների հետ մշակել է թուրքահայերի «հայոց սահմանադրությունը», որը ամբողջ Արևելքի առաջին ժողովրդական սահմանադրությունն էր: Ըստ այդ սահմանադրության, տանկահայերը ընտրում էին 150 երեսփոխան (դեպուտատ), որոնցից կազմված «երեսփոխանական ժողովը» Պոլսի հայոց պատրիարքի գլխավորությամբ ղեկավարում էր Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի ամբողջ հայ համայնքները: Սահմանադրությունը Թուրքիայի սահմաններում գտնվող հայության և թուրքական սուլթանի միջև միջնորդ էր հռչակում Պոլսի հայոց պատրիարքին: Սահմանադրությամբ ստեղծված «Դատաստանական», «Կրթական», «Ելևնուտից» և «Տնտեսական» խորհուրդները տնօրինում էին արևմտահայերի մշակութային, վարչական, կրթամանկավարժական, քրեական ու ֆինանսա-տնտեսական կյանքի ղեկավարությունը: Ահա այս սահմանադրությամբ նախատեսված ազգային ներքին ինքնավարությանն իբրև լրացում, Նահապետ Ռուսինյանը որոշում է ստեղծել հայկական ամսանուններ, որոնք տարբերվեին թե՛ Եվրոպական և թե՛ թըրքական ամսանուններից: Նահապետ Ռուսինյանի հորինած ամսանունները մեր տոմարի պատմության ուշագրավ էջերից են: Դրանք անհամեմատ ավելի բնական և ճիշտ են արտահայտում տվյալ ամսվա հետ կապված օդերևութաբանական երևույթներն ու գյուղատնտեսական աշխատանքների բնույթը, քան ներկայումս գործածվող հուլյան տոմարի ամսանունները:

Բայց այդ ամսանունները, ցավոք, ինչ-ինչ պատճառներով տարածում չգտան և չգործածվեցին:

Ահա Նահապետ Ռուսինյանի ամսանունները:

1. Սառներ — սառնաբեր ամիս, ցուրտ ամիս (հունվար)
2. Մրրկեր — մրրկաբեր ամիս (փետրվար)
3. Վարթին — վարթաբեր ամիս, վարդը ծաղկելու ամիս (մարտ)
4. Ծաղկին — ծաղիկները ծաղկելու ամիս (ապրիլ)
5. Մարգին — մարգերը գգելու, պատրաստելու ամիս (մայիս)
6. Հնձար — հունձքի ամիս (հունիս)
7. Տոթար — տոթարար, շոգաբեր ամիս (հուլիս)
8. Մրգար — մրգարար, մրգերը հասունացող ամիս (օգոստոս)
9. Կթոն — այգեկույթի (բերքահավաքի) ամիս (սեպտեմբեր)
10. Թառնոն — տերևները թառամեցնող, տերևափաթի ամիս (հոկտեմբեր)
11. Միզոն — միզապատ (ամպամած, միզամած) ամիս (նոյեմբեր)
12. Զյուներ — ձյունաբեր ամիս (դեկտեմբեր)

Հայտնի է, որ քաղաքակիրթ աշխարհը մինչև այսօր անփոփոխ գործածում է Հուլյան-Գրիգորյանի տոմարը: Մենք գիտենք նաև, որ Գրիգորյան տոմարի օրացուցային տարին ևս չի համապատասխանում արևադարձային ճշգրիտ հաշվումներով տարվա տևողությանը: Մարդկությունը միշտ էլ երազել է կատարյալ օրացույց, որը լիովին համընկներ արևադարձային տարվա տևողությանը, բայց միաժամանակ լիներ պարզ, մատչելի ու նպատակահարմար:

Այս խիստ դժվար և կնճռոտ հարցը լուծելու փորձ էր ժե դարի երկրորդ կեսի աստղագետ Մեդլերի նախագիծը, որը հրատարակվեց 1863 թ. Այդ նախագիծով միջին օրացուցային տարին հավասար էր 365 օր 5 ժամ 48 րոպե 45 վայրկյանի, որը արևադարձային տարվա տևողությունից պակաս էր ընդամենը մեկ վայրկյանով: Սա կնշանակի Մեդլերը կարողացել էր տոմարի պատմության մեջ առաջին անգամ օրացուցային տարվա տեվողությունը հավասարեցնել արևադարձային տարվա տևողությանը: Թեև այս օրացույցը ընդունելություն չգտավ, բայց թե՛ իր ժամանակ և թե՛ այսօր, համարվում է ամենաճշգրիտ օրացույցը:

Գիտության և տեխնիկայի զարգացման այսօրվա պայմաններում, երբ աշխարհի գրեթե բոլոր երկրները միմյանց հետ բազմաձև կապերի ու համագործակցության մեջ են, առանձնակի նշանակություն է ստանում համաշխարհային մեկ-միասնական և մշտական օրացույցի ստեղծումը: Ընդ որում այդ օրացույցը պետք է լինի անշարժ: Այսինքն՝ կազմված լինի այնպես, որ աշխատանքային օրերի, տոների և պետական-կենցաղային այլ միջոցառումների իմաստով՝ նախորդ և հաջորդ տարիների միջև տարբերություններ չլինեն: Մի խոսքով՝ հարկ չլինի ամեն մի տարվա համար առանձին օրացույց հրատարակել: Պատկերացրեք գիտության արդի պահանջներին բավարարող մի օրացույց, որը մեկ անգամ տպագրվելուց հետո բոլոր ժողովուրդներին ծառայի հարյուրամյակներ: Համաշխարհային նման օրացույցի նախագիծ առաջարկեց Խորեն Սինանյանը: Նրա օրացույցով տարին բաղկացած պիտի լիներ 364 օրից: Նահանջ տարիների օրերը ևս Սինանյանը առաջարկում էր հավաքել և տարիներից մեկում ունենալ ոչ թե 2 այլ 53 շաբաթ: Դրանով շաբաթվա օրերի ներկա կարգը չէր փոփոխվելու: Եթե ուշադիր նայեք տարեկան օրացույցին, կնկատեք, որ ընդհանրապես այսօրվա օրացույցով ամեն ամիս չէ որ ունենում է յոթական օրվանից բաղկացած 4 շաբաթ: Ամիսը հաճախ սկսվում է, ասենք, երկուշաբթի օրվանից, և ավարտվում դարձյալ ոչ թե կիրակիով, այլ դիցուք հինգշաբթիով կամ երեքշաբթիով:

Իսկ որպեսզի ամեն մի ամիս ունենա հավասար քանակության աշխատանքային ու հանգստյան հաստատուն օրեր, պետք է ստեղծել այնպիսի օրացույց, որ ամիսները ևս պարունակեն հավասար շաբաթներ: Այսինքն՝ ինչպես շաբաթը բաղկացած է 7 օրից, այնպես էլ ամիսը պարունակեր հաստատուն քանակությամբ շաբաթներ և ամիսը երբեք չսկսեր շաբաթվա կեսից կամ սկզբից:

Որպեսզի ամիսները ևս ունենային լրիվ շաբաթներ, Սինանյանը առաջարկում էր տարին բաժանել 91 օրերից բաղկացած չորս եղանակի: Յուրաքանչյուր եռամսյակի առաջին և երրորդ ամիսն ունենար 28 օր, իսկ երկրորդ ամիսը՝ 35 օր: Այս դեպքում էլ ամիսներն էին անհավասար օրեր պարունակում, որը բարդություններ կառաջացներ աշխատավարձի վճարման հարցում: Հիշյալ բարդություններից խուսափելու համար, Խորեն Սինանյանը առաջարկում էր աշխատավարձի ամսական վճարումը փոխարինել շաբաթավճարով, որն այսօր գրեթե համատարած բնույթ է կրում զարգացած բոլոր երկրներում:

Ինչպես տոմարագետ Հ. Բաղալյանն է նշում, համաշխարհային միասնական օրացույց ստեղծելու ուղղությամբ գործնական քայլեր կատարվում են նաև 20-րդ դարում: Օրինակ, աստղագետների 1922 թ. միջազգային համագումարում այդ հարցը շատ լուրջ կերպով դրեց ֆրանսիացի աստղագետ Բիգուարդը: Օրացույցը բարեփոխելու աշխատանքները ղեկավարելու նպատակով, Ազգերի լիգային կից, 1923 թ. կազմակերպվել էր հատուկ հանձնախումբ: Հանձնախումբը մինչև 1931 թ. քննարկեց 200-ից ավելի օրացույցների նախագծեր, որոնցից ոչ մեկը չընդունվեց: Բայց գործը շարունակվում էր: Եվ ահա Ազգերի լիգայի օրացույցների հանձնաժողովը, 1937 թ. հունվարի 28-ի որոշմամբ ընդունեց 12 ամսյա օրացույցի մի նախագիծ, որը պետք է կիրառվեր 1938 թ. հունվարի 1-ից: Բայց այդ հետաքրքիր նախագիծը ևս մինչև այսօր չի հաջողվում կիրառել:

Համաշխարհային միասնական օրացույց ստեղծելու հարցով զբաղվել է նաև ազգերի լիգային փոխարինելու եկած Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), որի ջանքերը ես արդյունք չստվեցին:

Այնուամենայնիվ՝ համաշխարհային միասնական օրացույց ունենալու հարցը մնում է օրակարգի մեջ: Աստղագետներն ու փոմարագետները բազմաթիվ հետաքրքիր առաջարկություններ են անում: Միասնական օրացույցի խնդիրը պարբերաբար քննարկվում է միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտաժողովներում և այլ առիթներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Յ Ա Ն Կ

1. Աբելյան Մ., Երկեր, հատ. 1, Երևան, 1966 թ.
2. Աբրահամյան Ա. Գ., Հայ գիր և գրչություն, Երևան, 1973 թ.
3. Աբրահամյան Ա. Գ., Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956 թ.
4. Աբրահամյան Ա. Գ., Տարեթվերի և ամսաթվերի գործողությունը հայ մատենագրության մեջ, «Էջմիածին» ամսագիր, 1956 թիվ 2
5. Աբրահամյան Ա. Գ., Վարդեն Կաֆայեցու չափածո տոմարը, «Էջմիածին», 1954 թ., թիվ 9—10
6. Աբրահամյան Ա. Գ., Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», 1967 թ., թիվ 4, Երևան
7. Ազարանգեղոս, Պատմություն հայոց, Երևան, 1983 թ.
8. Ալիշան Ղ., Յուզիկ հայրենեաց հայոց, Վենետիկ, 1869
9. Ալիշան Ղ., Հին հատուց կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910
10. Աղայան Էդ., Այնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, 1986 թ.
11. Աղանեանց Գ., Տոմար և տօնացույց Հայաստանեայց ս. եկեղեցույ, Տիֆլիս, 1890 թ.
12. Աղանեանց Գ., Հընից-ճորից, Թիֆլիս, 1900
13. Անահիա Ծիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979 թ.
14. Առաքելյան Ա., Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հտ. Ա, Երևան, 1959 թ. հտ. Գ. Երևան, 1975 թ.
15. Բաղալյան Հ., Օրացույցի պատմություն, Երևան, 1970 թ.
16. Բաղալյան Հ., Հայոց տոմարի պատմություն, Երևան, 1976 թ.
17. Բարթիկյան Ս., Դիցապաշտ Հելլադան կամ Հելլեն դիք, Աթենք, 1936 թ.

18. Բրոյան Վ., Հայ ազգագրություն, Երևան, 1974 թ.
19. Բրոյան Վ., Վանատուր և Ամանոր աստվածությունների ծայտյալ պաշտամունքի հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 4
20. Բրուսյան Գ., Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, «Էջմիածին», 1985 թ., № Ա—Գ
21. Երեմյան Ս., Երկրագունդը ըստ Անանիա Շիրակացու, «Գիտություն և Տեխնիկա», 1974 թ., թիվ. 1
22. Թումանյան Բ., Հայ աստղագիտության պատմություն, Երևան, 1986 թ.
23. Թումանյան Բ., Մնացականյան Հ. Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965 թ.
24. Լալայան Եր., Երկեր, հա. 1, Երևան, 1983 թ.
25. Լալայան Եր., Ծիսական կարգերը հայոց մեջ. Թիֆլիս, 1913 թ.
26. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1982 թ.
27. Կոստանեան Կ., Հայ հեթանոսական կրոնը, Վաղարշապատ, 1879
28. Խաչատրյան Հ., Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն (1913—1973 թթ.), Երևան, 1976 թ.
29. Կարիներ Ա., Հեթանոս Հայաստանի ութ մեհյանները, Վենետիկ, 1899
30. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Երևան, 1976 թ.
31. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1963 թ.
32. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1954 թ.
33. Մարտիրոսյան Հ., Գիտությունը սկսվում է նախնադարում, Երևան, 1978
34. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963
35. Միքայել Չամչեան, Պատմություն Հայոց, հտ. Բ, էջ 509—516, հտ. Գ, Ժամանակագրություն, էջ 1—104, Երևան, 1984 թ.
36. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981 թ.
37. Սրվանձության Գ., Երկեր, հտ. 1, Երևան, 1975 թ., հտ. Բ, Երևան, 1982 թ.
38. Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, Երևան, 1985 թ.
39. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986 թ.
40. Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. 1, Կոստանդնուպոլիս, 1912 թ.
41. Օրմանեան Մ., Ծիսական քառարան, Երուսաղեմ, 1974 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| Մ ու տ ք | 3 |
| Վ մ ա մ ո ռ | 5 |
| Ն ա վ ա ս ա ռ ղ | 9 |
| Հ ո ռ ի | 19 |
| Ս ա հ մ ի | 22 |
| Տ ռ է | 28 |
| Ք ա ղ ո ճ | 35 |
| Ա ռ ա ճ | 42 |
| Մ ե հ ե կ ա ն | 49 |
| Ա ռ ե գ | 56 |
| Ա հ ե կ ա ն | 65 |
| Մ ա ռ ե ռ ի | 72 |
| Մ ա ղ Վ ա ճ | 76 |
| Հ ռ ո տ ի ճ | 88 |
| Ա վ ե լ ե ա ճ | 94 |
| Օ գ տ ա գ ո ռ ծ վ ա ծ գ ռ ա կ ա ն ո յ ա ն ց ա ն կ | 101 |

Համբարձույան Ռաֆայել Հարիկի

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Խմբագիր՝ Ա. Ս. Սարգսյան
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Միլիտոնցյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովսեփյան
Վերստ. սրբագրիչ՝ Լ. Ս. Սահակյան

ՊԵ—7597

Հանձնված է շարվածքի՝ 23. 02. 1991 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 08. 1992 թ.
Ֆորմատ՝ 60×84¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ № 1: Տառատեսակ՝ «Եղեգնագիր»: Տպագրություն
(համակցված) բարձր և օֆսեթ: 6,74 պայմ. տպագր. մամ., 6,5 ֆիզ. տպագր. մամուլ:
Տպաքանակ՝ 10 000: Պատվեր՝ 206: Գինը՝ պայմանագրային:

ՀՀ կառավարության արձրներ Հրատվարչության № 3 տպարան,
Երևան, Մելիք-Աղամյան, 1: